

891.99.09

5-15

111

11

111

2609-ՄԱ

31

85

1.99.09


- 15 կ.

ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ XX-ՐԴ ԴԱՐԻ ՄԿՁԲՈՒՄ

Նոր, քսաներորդ դարի շնորհիվ ուղիղ գիտելիս՝ բնական է որ մենք մի անգամ զէպի յետ նայենք, անցած և արդէն պատմութեան բաժին դարձած 19-րդ դարի վրայ, մի ամփոփ հաշիւ տանք մեզ, թէ ինչ էինք անցեալ դարում, ինչ ենք այժմ, և աշխատենք գուշակել, թէ ինչ կը լինինք ապագայում: Մեր կեանքի բաղմատեսակ բարդ երևոյթները թողնելով՝ մենք սահմանափակուում ենք մի համեմատական ակնարկ ձգելով հայոց մտաւորական զարգացման միայն մի ճիւղի, այն է հայագիտութեան վրայ:

Անցեալ, տասնիններորդ դարի սկզբին, շատ բախտաւոր ազգ ենք եղել հայերս, ինքնաբաւական և գոռոզ՝ մեր ազգային պատմութեամբ ու գրականութեամբ: Եւ ինչպէս չը պարծենային մեր պապերը. դրախտը՝ Հայաստանում, Ադամն ու Եւան Հայաստանի առաջին բնակիչներ, նրանք խօսելիս են եղել հայերէն լիզուով, Աստուած էլ հայերէն է եղել նրանց հետ խօսելիս, Նոյի յապանը հանդէպ է Մասիս սարի գլխին, դարձեալ Հայաստանում, Նոյը այդտեղ էլ ապրել է ու մնել: Ազգայոցներ՝ որչափ կ'ուզէք, անհ Նախճուան քաղաքը, որ նշանակում է նախիջևան, այսինքն առաջին իջևան Նոյի, անա Ակոսին, որ նշանակում է արկ ուռի, այսինքն խաղողի վազ անկեց, անա Մարանդը, որ նշանակում է մայր-անդ, այսինքն մայրը (Նոյի կինը) այնտեղ է թաղուած. անա Երևանը, որ առաջին անգամ «Երևեց» Նոյին և այլն: Հայկը, մեր ազգի նահապետը, Նոյի վեցերորդ սերունդն է եղել, աշտարակաշինութեան հսկաներից մէկը, որ Սենաարից դազթել է դարձեալ իր մայր երկիրը, Հայաստան, իր նախահաւ Նոյի մօտ, այստեղ սպանել է վիրազ հսկայ Բէլին, որին ազգերը պաշտում էին իբրև աստուած, և հիմնել է մեր ազգութիւնը: Քրիստոնէութեան լոյսը առաջին անգամ ծագել է դարձեալ Հայաստանում, Հայոց Աբգար թագաւորը առաջին թագաւորն է լինում, որ ընդունում է քրիստոնէութիւն և մկրտուում է և այլն: Ո՞ր ազգը ունեցել է այգքան պարծանքի նիւթեր. — մի հայրենիք, որ երկու անգամ որբան է

391.99.09
15-15



ևզկ մարդկութեան, մի լեզու, որ անապինն է ևզկ ազրայ, մի նահապետ, ուղիղ աշտարակալինութեան ժամատակից, բննաւորութեան դէմ ազատութեան գրօշը կանգնեց' ող, մի անդրանիկ քրիստոնեայ թագաւոր.—մի խօսքով հայրենիք, ծագում, լեզու և կրօն՝ բոլորը առաջին կարգի...

Այս գիտակցութիւնն ունէին, անկեղծ հաւատացած էին և քարոզում էին տասնեկններորդ դարի սկզբներում առաջաւոր հայ մատենագիրները, և այս ինքնարաւական, պարծենկոտ նուազը հնչում էր հայերէն պատմական գրուածքների և բանաստեղծութիւնների մէջ մինչև դարի երկրորդ կէտը և զեռ այս կողմը: Դեռ եօթնամասնական թուականներին մի ակնաւոր հայ հեղինակ յիշեցնում էր իր հայրենակիցներին ազգային պարծանքները, ասելով՝

«Մեր տէրն ի յերկնուց ծայրէն երբ իջաւ՝
Երկրիս հիման քարն յԱրարատ դրբաւ...
Ի հայոց հողէն կազմեցաւ Ադամ,
Զօդն Հայոց Եւայն ծրծեց քաղցրահամ...
Այն սարին ծարէն Նոյ մտաւ ի տապան,
Ջրագունդ երկրիս շուրջն ևկաւ ման ու ման,
Իջաւ բազմեցաւ ի բարձրն՝ Աասիս,
Չազու ազաւնին զըրկեց աւետիս.
Երկիրս էր դարտակ, անապատ ահեղ,
Լուկ ի Հայաստան կաշր մարդկութեան տեղ...
Արգար թագաւոր մեր քաջ, իմաստուն,
Թըղթով է խօսեր հետ Ատոռածորդուոյն» և այլն:

Նուագք Ղ. Ալիւսանի

Բախտաւոր, գոհ էին մեր հայրերը: Բայց այս բախտաւորութիւնը նման էր այն երեկոյի բախտաւորութեան, որ իր ծննդապայր գիւղից ուրքը դուրս չը գրած՝ ճանաչում է միայն իր գիւղի հորիզոնը, որից դուրս աշխարհ չը կայ նրա համար, այլ կապոյտ սարերն են, որոնց վրայ հանգչում է երկնքի կապոյտ մեծ, բոլորակ խութը, որի համար հօր տունը ամենայն կատարելութիւն է, դոմը՝ սենեակ, որից աւելի լաւը դժուար է երեակայել, մարտի ծխացող ճրագը՝ հիանալի լուսաւորութիւն, գիւղացու փչած գունանն՝ զմայլեցուցիչ ևրածաւորութիւն. ցեխոտ, նեղ անցքերը՝ օրինաւոր փողոցներ: Երեխան գոհ է ամեն բանից, որովհետև ուրիշ բան չէ տեսել՝ բացի իրան չըջապատող գիւղի կեանքից. առիթ չէ ունեցել համեմատելու իրանց գիւղը մի քաղաքի կամ մայրաքաղաքի հետ, որ ապա թէ ուղիղ հասկացողութիւն կազմէր իր հայրենի գիւղի, իր հայրական տան

ու նիստ ու կացի մասին: Սրա նման էր և մեր հայերի բախտաւորութիւնը անցնալ դարի սկզբներում—ազիտութեան բախտաւորութիւն, որ աւելի վատ է քան անբախտութիւնը:

Իսկ այժմ, քսաներորդ դարի սկզբում: Օ՛, մենք այժմ անբախտ ենք, մեր աչքերից ընկել են այն վարդազոյն ակնոցները, որոնցով ամեն ինչ վարդազոյն էին տեսնում մեր պապերը: Մենք այժմ գիտենք, որ դրախտը Հայաստանում չէ եղել, որ Նոյի տապանը Մասիսի վրայ չէ իջել, որ Ագամն ու Նոյը հայերէն չեն խօսել, որ Հայկը չէ եղել և Բէլլին չէ սպանել, որ Աբգարը հայոց թագաւոր չէ եղել: Մենք դեռ այն էլ գիտենք, որ մենք հայերս Հայաստանի ընդի ժողովուրդ չենք, այլ որ մեր նախահայրերը գաղթականներ են եղել, որոնք եկել նուաճել են Ուրարտուի ընդի Խաղթերին և տիրելով նրանց երկրին՝ կոչել են Հայաստան, ճիշտ այնպէս՝ ինչպէս յետոյ մոնղոլական և թաթար ցեղեր եկան նուաճեցին հայերին և տիրեցին նրանց երկրին: Եւ այս բոլորը գիտեն ոչ միայն առաջաւոր հայերը, գիտնականները, այլ աշակերտները ևս սովորում են դպրոցական նստաբաններէ վրայ: Ուրեմն բոլոր, բոլոր ազգային պարծանքները մի դարի ընթացքում ոչնչացան, անդամնալի կերպով կորան, և այսօր, երբ նրանց մասին խօսք է լինում՝ նրանք համարում են միամիտ աւանդութիւններ ազգի խակ, մանկական հասակի, չընայելով որ այդ ազգը երկու-երեք հազար տարուայ զատկանաւի հասակ ունի:

Այսպէս ուրեմն տեսնում ենք, որ տանկիններորդ դարը մեր պատմական-ազգային գիտակցութեան վերաբերմամբ մի շատ կարեւոր շրջան է կազմում, որի ընթացքում պատմական բովանդակ ուղղութիւնը հետզհետէ տեղի է աւելիս բէալական ուղղութեան, օրօրոց, երազող բանաստեղծութիւնը՝ անողոք, սթաի իրականութեան: Մեր մանկական գիտակցութիւնը թևակոխում է դէպի պատանեկան հասակը, սկսում է շուրջը նայել, ծանօթանալ, համեմատել, և ահա նախկին ինքնարաւական թմրութեան յաջորդում են՝ նախ կասկածներ, ապա բողոք, հետագոտութիւն, հիասթափութիւն, որոնք վերջապէս տեղի են աւելիս հանդարտ ինքնաճանաչութեան և ասպարէզ են բաց անում եռանդուն աշխատութեան համար:

Ազգային գիտակցութեան մեջ տեղի ունեցած այս յեղափոխութիւնը բնական է, որ առանց կռուի, առանց զիմազրութեան չէր կատարուի: Խորտակել ազգային կուռքերը, ոչնչացնել այն փաստերը, որոնց հիման վրայ հայը իրան ճանաչում էր իբրև Աստուծու ընտրեալ ժողովուրդ, առաջինը ազգերի մէջ՝ հեշտ բան չէր: Աւանդութեան միամիտ հաւատացողները քրն-

նազատութեան սթափեցնող ձայնից վեր թռան, և սկսեց կռիւ երկու ուղղութիւնների մէջ: Հայոց լեզուին ու գրականութեան տգէտ, հայատեաց, յանդուգն, սրբապիղծ և այլն հրատարակուեցին նոր ուղղութեան հետևողները, բայց սրանք նոյնպիսի սահնասարտութեամբ շարունակեցին իրանց գործը՝ ինչպէս վիրաբոյժը բողոքող ու տրանջող հիւանդի վրայ կատարում է իր գործողութիւնը, մինչև վերջապէս բողոքներն ու լուտանքները դադարեցին, աւանդութիւնը անգառնալի կերպով չբացար և այսօր պատմական-մատենագրական ասպարէզում վիճաբանութիւնները կատարւում են բոլորովին տարբեր, իրական, զուտ-քննադատական հողի վրայ:

Ո՞վ էին նոր ուղղութեան հետևողները և ինչ արին նրանք, որ յաջողեցան յիշեալ յեղափոխութիւնը առաջացնել հայոց պատմական գիտակցութեան մէջ:—Սրանք մի խումբ գիտնական բանասէրներ էին, որ գիտական մէթոդով ձեռք զարկին ուսումնասիրելու և քննելու մեր հին մատենագրութիւնն ու լեզուն և նրանց համեմատելու ուրիշ ազգերի մատենագրութեան ու լեզուի հետ: Սրանք սկզբում ևւրոպացի արեւելագէտներն էին, որոնք հետախուզող աչքերով մտեցան մեր հին պատմութեան ու լեզուին, նախ անհամարձակ, ապա վստահ, վերջը խիզախաբար բաց արին նրանց քողարկող խիտ վարադոյրը, սրբեցին դարերով դիզուած փոշին, և հետզհետէ, աշխատութիւնը առաջ գնալու չափով, մեր պատմութիւնն ու լեզուն սկսեցին երևել իրանց իրական գրութեամբ: Եւրոպացի գիտնականների հետևողութեամբ առաջ եկան և հայ բանասէրներ, որոնք նոյն եռանդով աջակից եղան նրանց՝ ճշմարտութիւնը բաց անելու արդիւնաւոր գործում: Շրէտէր, Լակրօզ, Վիստօն եղբայրներ, Սէն-Մարտէն, Լանգլուա, Ֆլօրիվալ, Դիւօրիէ, Բրօսսէ, Նէյման, Պէտերման, Դը-Լագարտ, Հիւբշման, Բաուժարանէր, Լաուէր, Գուտշմիտ, Բուզգէ, Կարրիէր, Գէլցէր, Կօնիլիօր, Մառ, և այլն և այլն—սրանք այն ևւրոպացի և սուս գիտնականներն են, որ աշխատել ևւ ոմանք զեռ աշխատում են հայոց հին մատենագրութիւնն ու լեզուն լուսաբանելու: Իսկ սրանց հետևող ու գործակից հայ հեղինակներ եղել են և են Գաթըրճեան, Գարագաչ, Էմին, Պատկանեան, Նորայր Բիւզանդացի, Այանեան, Տաշեան, Մէնէվիշեան, Գալէմբարեան, իրանց «Հանդէս Ամսօրեայով», Սարգ, Սարգսեան, Ուալթեանց, Միւրան, (Գալուստ Տէր-Մկրտչեան) և այլն: Վենետիկի Միթիթարեան միաբանութիւնն ու «Բազմավէպը» առանձին տեղ են գրուում հայ լեզուի ու մատենագրութեան մշակների շարքում: Նրանք եղել են

և են պահպանող աւանդական հայեացքները, բայց հէնց այս ուղղութեան մէջ էլ չէ կարելի ուրանալ նրանց օգտակար նշանակութիւնը նրանով, որ հին տեսակէտները պաշտպանելով նոր հայեացքները դէմ՝ միջոց են տուել խնդիրները բազմակողմանի կերպով քննուելու, չը խօսելով այն մասին, որ երբեմն ուղղել են նոր հայեացքներում մուտք գտած սխալները. բայց վնաստիկցոց գլխաւոր ծառայութիւնը կայանում է ուրիշ բանում: Նրանք եղան, որ տպագրեցին հայ հին հեղինակները, տպագրեցին բազմաթիւ հայերէն քերականութիւններ, բառարաններ. նրանք առաջինը և մինչև այժմ միակն եղան, որ փորձեցին հայոց գրականութեան սիստեմական պատմութիւններ կազմել, հայոց հին թարգմանական գրականութեան մասին կարեւորն չափ մանրամասն տեղեկութիւն տալ, հայերէն տպագրուած գրքերի ցուցակ պատրաստել: Վերջապէս նրանք եղան հայերէնի ուսուցիչ մի շարք եւրոպացի հայադէտներէ: Այս տեսակէտները՝ Վնեսակի Մխիթարեանները անտարակոյս շատ նպաստել են հայագիտութեան զարգացման, հարուստ նիւթ և միջոցներ մատակարարելով քննութեան համար: Այս պատճառով Չամչեապետի, Ինճիճեանի, Մ. Աւգերեանի, Բագրատունու, Աւետիքեանի, Ալիշանի, Ջարբաւապեանի և այլն անունները միշտ պատուաւոր տեղ պէտք է բանեն հայագիտութեան պատմութեան մէջ:

Հայոց հին մատենագրութեան հետազոտութեան գաւառում հայադէտների ուշադրութիւնը պէտք է գրաւէր նախ և առաջ և գլխաւորապէս հայոց պատմութեան հայրը՝ Մովսէս Խորենացին, որովհետև նա միակ հեղինակն էր, որ գրել էր հայոց պատմութիւնը՝ ակզբնաւորութիւնից, այսինքն աշտարակաշինութիւնից, մինչև հինգերորդ դարի կէսերը Քր. յետոյ. նա էր, որ իբրև աղբիւր գործ էր անել բարձր հետաքրքրութիւն ունեցող պատմական գրուածքներ, որոնք այժմ կորած են, վերջապէս նա էր առաջին հաղորդողը այն տեղեկութիւնների՝ որոնց վրայ գլխաւորապէս հիմնուած էին աւանդութիւններ հայ ազգի, լեզուի և կրօնի պատուաւոր գիրքի մասին: Եւ ահա Խորենացու պատմութիւնը սկսում են թարգմանել զանազան եւրոպական լեզուներով *), որոնց միջոցով թարգմանիչները գիտնա-

*) Լատիներէն՝ Երկու անգամ, 1733-ին Բրէննների ձեռքով (կիսատ) և 1736-ին Վիտտոն Կրայրների ձեռքով. Ֆրանսերէն՝ Երեք անգամ՝ 1836-ին և 1842-ին Ֆլորիդալի ձեռքով և 1857-ին Լանգլուալի ձեռքով. Իտալերէն՝ Երկու անգամ, 1841-ին Վասպուլլէտտիի ձեռքով և 1849-ին Պեներեիի Մխիթարեանների ձեռքով. Գոտերէն՝ Երեք անգամ՝ 1809-ին Յովս. սարկ. Յովհաննիսեանի ձեռքով և 1858-ին ու 1893-ին Էմինիէ՞ ձեռ-

կան աշխարհին ծանօթացնում էին մի հայ առաջնակարգ պատմադիր, հուսասար Հերոզոտին: Թարգմանութիւններին կցուած էին լինում ծանօթութիւններ, որոնց նպատակն էր բացատրել հեղինակի մութ դարձուածքները, տեղեկութիւն տալ նրա յիշած աղբիւրների և պատմական անցքերի մասին, կամ լուսաբանել այն տեղերը, որոնք հակասում էին ուրիշ աղբիւրներից յայտնի իրողութիւններին: Քանի առաջ էր գնում գիտնականների ծանօթութիւնը Խորենացու պատմութեան հետ՝ այնքան հետզհետէ ծագում էին կասկածներ նրա աղբիւրների և աւանդած տեղեկութիւնների մասին: Մի ամբողջ հատոր հարկաւոր կը լինէր գրել՝ յիշելու համար բոլոր քննադատութիւններն ու պատասխանները Խորենացու պատմութեան վերաբերմամբ. այս պատմութիւնը ստեղծել է մի ամբողջ քննադատական գրականութիւն, որ արդէն մի մասնադիտութիւն է կազմում հայոց մատենագրութեան մէջ: Մենք միայն հարևանցի կը նշանակենք այդ քննադատութեան գլխաւոր ֆազիսները և այժմեան գրութիւնը:

Բանասէրների կասկածը ծագեցրեց նախ և առաջ Խորենացու նախնական պատմութեան գլխաւոր աղբիւրը, Մար-Աբաս Կատինան: Ըստ Խորենացու վկայութեան՝ Վազարչակ, Հայոց առաջին Արչակունի թագաւորը (մօտ 150 տարի Քր. առաջ), կամենալով ստոյգ տեղեկութիւններ ստանալ Հայաստանի նախկին պատմութեան և նախարարական տոհմերի ծագման մասին և այսպիսի տեղեկութիւններ Հայաստանում չը գտնելով՝ ուղարկում է իւր աւագ եղբոր, Արչակ Մեծի մօտ մի ասորի գիտնական, Մար-Աբաս Կատինայ անունով և խնդրում է եղբորից՝ գիտնականի առաջ բանալ Նինուէի գրատունը, որպէսզի Մար-Աբասը այնտեղ վնտոէ և իրան ընրէ իրան հետաքրքրող պատմութիւնը: Մար-Աբասը Նինուէի գրատունը քրքրելով՝ գտնում է մի հին ձեռագիր, որ պարունակելիս է եղել նախնեաց բուն պատմութիւնը, քաղղէարէն և յունարէն լեզուներով և ունեցել է մակագրութիւն, թէ քաղղէարէնից թարգմանուել է յունարէն՝ Աղեքսանդր Մեծի հրամանով, ուրեմն չորրորդ դարի քսանական թուականներում Քր. առաջ: Այս գրքից Մար-Աբասը քաղում է միայն հայոց վերաբերեալ պատմութիւնը և ընրում է Վազարչակին, որ գիրքը իբրև թանկագին գանձ պահում է իւր գանձարանում և մի մասը փորագրել է տալիս արձանի վրայ: Այս գրքից ահա օգտուելով Խորենացին պատմում է մեր նախնական

քրվ. գերմաներէն՝ մի անգամ, 1869-ին, Լատերի ձեռքով. հունգարերէն՝ մի անգամ, 1893-ին, Քրիստոֆ Սոնկոտտի ձեռքով. հայերէն աշխարհարար՝ երկու անգամ, 1889-ին և 1898-ին Խորէն Ստեփանէի ձեռքով:

պատմութիւնը, որի մէջ մտնում են Հայկ, Արամ, Տիգրան և մինչև Վաղարշակ և նրա որդին Արշակ:

Եթէ վաւերական է Խորենացու այս պատմածը Մար-Աբասի և նրա զբքի մասին, ապա վաւերական կը լինի, գոնէ մեծ հնութեան վարկ կ'ունենայ, և հայոց նախնական պատմութիւնը, իսկ Վաղարշակի և Արշակի պատմութիւնները բոլորովին վստահելի կը լինին, որովհետև Խորենացու ասածից յայտնի է, որ Մար-Աբաս ինքն է գրել զրանց պատմութիւնները իբրև ժամանակակից: Բայց զանազան բանասէրների քննութիւնը մի քանի տասնեակ տարիների ընթացքում՝ ցոյց տուեց, 1) որ Նինուէն կործանուած էր զևս վեցերորդ դարում Քր. առ., ուրեմն ոչ Աղեքսանդր Մակեդոնացու և ոչ Արշակ Մեծի ժամանակ նա գոյութիւն չուներ, 2) որ եթէ գոյութիւն էլ ունենար Նինուէն կամ նրա զբատունը՝ այնտեղ կը լինէին սեպագիր արձանագրութիւններով աղիւսներ, ինչպէս երևում է այժմեան պեղումներից Նինուէի աւերակներում, այն-ինչ ըստ Խորենացու պատմութեան՝ Մար-Աբասը գտել է այնտեղ զիրք՝ երկու լեզուով: 3) որ եթէ այդպիսի զիրք էլ լինէր Նինուէի զբատանը՝ դրա պարունակութիւնը համապատասխան կը լինէր Ասորեստանի պատմութեան ոգուն, որ արտայայտում է սեպագիր արձանագրութիւնների մէջ. այն-ինչ Մար-Աբասի պատմութեան մէջ Ասորեստանի նախնիք—Բէլ, Շամիրամ և այլն, շատ անպատիւ կերպարանքով են դուրս բերուած, և ընդհակառակն, զիւրյազնացած են նրանց հակառակորդ հայերը: 4) որ Բէլը, Շամիրամը իրական մարդիկ չեն եղել, այլ Բաբելոն-Ասորեստանեան աստուածութիւններ, ինչպէս և Հայկը՝ հին հայկական աստուածութիւն, ուրեմն և անվաւերական է նրանց պատերազմների և ուրիշ գործերի մասին պատմուածը, 5) վերջապէս Մար-Աբասեան պատմութեան մէջ երևում են բազմաթիւ նշաններ, որոնք ցոյց են տալիս, թէ հեղինակը քրիստոնեայ է, Ս. Գրքին հետևող, բայց կամեցել է կեղծիքով ցոյց տալ ինքն իրան իբրև հեթանոս Այս բոլոր և զևս ուրիշ հիմքերի վրայ՝ բանասիրութիւնը եզրակացրեց, որ Մար-Աբասեան պատմութիւնն անվաւերական է և չարագրուած է Քրիստոսից շատ յետոյ մի քրիստոնեայ բարեպաշտ հեղինակի ձեռքով, որ իր պատմուածքի նշանակութիւնը բարձրացնելու համար՝ հնարել է Վաղարշակի, Արշակ Մեծի, Աղեքսանդր Մակեդոնացու և այլն առասպելը:

Այս եզրակացութիւնը առաջին մեծ հարուածն էր, որ տրուեց Խորենացու պատմութեան: Նրա զբքի ամենաթանկագին մասը, նախնական ժամանակների մասին, որի պատմիչը ինքն էր և իր համբաււոր ազբիրը, Մար-Աբասը՝ կորցրեց իր

նշանակութիւնը իբրև ստոյգ պատմութիւն և առ առաւելն մնաց իբրև մի առասպելախառն աւանդութիւն՝ շարագրուած կամ գրի առնուած քրիստոնէական դարերու մէջ Հայկ և իր պատերազմը Բէլի հետ, քաջ աշխարհակալ հայրենասէր Արամը, առաքինի գեղեցիկ Արան, քաջ Տրդրան Հայկազեանը, որ սպանել էր իր ձեռքով Ս. Ժողահակին, Վահէն և այլն, որոնք մի քանի հարիւր տարի հայոց մեծագործ նահապետներն էին համարուած՝ բոլորը երազի նման անհետացան իբրև պատմական անձնաւորութիւններ...

Բայց քննադատութիւնը դեռ նոր էր սկսել իր գործը։ Հարց ծագեց այնուհետև, թէ ով է եղել Մար-Արասեան պատմութեան հնարողը, արդեօք Խորենացին ունեցել է իր ձեռքին մի այդպիսի պատմական աղբիւր, թէ... ինքն է ստեղծել թէ Մար-Արասին և թէ նրա պատմութիւնը։ Ուրեմն ըսնասիրութիւնը սրանով շոշափեց Խորենացու բարեխղճութեան հարցը-արդեօք նա զո՞ն է գնացել մի անձնօթի կեղծիքին, թէ ինքն է կեղծիք հնարողը, առաջին դէպքում՝ Խորենացին միամտաբար սխալուած կը լինէր, երկրորդ դէպքում՝ ննդաւորութեամբ ստող։ Երկու տեսակէտներն էլ ունէին իրանց պաշտպանները։ Վերջին տասնամեակում կատարուած քննութիւններով լուծուեց և այս հարցը։ Սկզբում պրօֆ. Կարբիէր մաթեմատիկական մէթոդով ազատուցեց թէ Խորենացի և Մար-Արաս նոյն անձնաւորութիւններն են, ուրիշ խօսքով՝ Մար-Արասեան աղբիւր չէ ունեցել Խորենացին, այլ ինչ որ գրում է նրա անունով՝ ինքն է հնարում։ Բայց սրա հակառակ բազմաթիւ քննութիւններ (Ն. Մառի, Ֆէտտէրի, Խալաթեանցի հայլն) ցոյց տուին, որ Խորենացին ունեցել է և օգտուել է Մար-Արասի անունը կրող մի կեղծ գրուածքից, և թէ այդ գրուածքի մի ուրիշ խմբագրութիւնը պահպանուած է ուրիշ մի հեղինակի մօտ (Սեբէոսի Ա. զպրութեան մէջ)։ Վերջը Կարբիէր ինքն էլ խոստովանեց, որ Խորենացին արդարև ունեցած պէտք է լինի Մար-Արասեան աղբիւր և թէ նա ընդունակ չէ հնարելու չեղած նոր աղբիւրներ։

Մի անգամ որ Խորենացու գլխաւոր աղբիւրի, Մար-Արասի, կեղծիքը բացուեց՝ կասկածները սաստկացան և նրա միւս աղբիւրների վերաբերմամբ։ Յիշենք մի-երկուսը միայն։ Պրօֆ. Կարբիէր քննութեան ենթարկեց Խորենացու պատմութեան այն գլուխները, որտեղ պատմուած է Արշամի, Արգաթի, Մանատրուկի և Անանուհի մասին, և համեմատեց Լարուրնայի (Ղերուրնայի) պատմութեան հետ, որ ծառայել է Խորենացուն իբրև աղբիւր այս տեղերում։ Համեմատութիւնը պարզեց ընթերցողի առաջ Խորենացու սովորութիւնները՝ աղբիւրներից օգտուելու

նկատմամբ.—Նա միանգամայն թէ բարեխիղճ է և թէ կամայա-
կան. բարեխիղճ է նրանով, որ ոչինչ իրանից չէ հնարում, այլ
ստնում կամ եղբակացնում է աղբիւրներից. կամայական է
նրանով, որ աղբիւրի տեղեկութիւնները ինքն ուղղում կամ
լրացնում է այն կերպով ինչպէս իրան հաւանական է թւում՝
ուրիշ աղբիւրների կամ անձնական դատողութեան հիման վրայ:
Այսպէս, օրինակ, Արգարը Եղեսիայի թագաւոր է ըստ Լարուբ-
նայի. Խորենացին, զիսնալով, որ Եղեսիան Հայաստանի սահ-
մանների մէջ է ընկնում՝ եղբակացնում է, թէ ուրեմն Արգարը
հայոց թագաւոր է եղել, որ իրօք այսպէս չէ: Կամ՝ կարգալով
հայերէն Լարուբնայում Արգարի տիտղոսը—«Արգար Արեւմայ»՝
եղբակացնում է, թէ ուրեմն Արգարի հայրն եղել է Արշամ,
ըստի և ստեղծում է մի նոր թագաւոր հայոց—Արշամ անունով.
այն ինչ պարզւում է, որ Լարուբնայի հայերէն թարգմանու-
թեան «Արշամայ» ըստը աղաւաղութիւն է Լարուբնայի ասորե-
րէն ընազրի «ուկամայ» ըստին, որ Արգարի մակդիրն է և նշա-
նակում է սև—«Ան Արգար»: Եւ այլն: Պրօֆ. Խալաթեանց քննու-
թեան ենթարկեց Խորենացու վիպական աղբիւրները: Յայտնի
է, որ Խորենացին յաճախ յիշում է հին Հայաստանի վիպասա-
նաց երգերը կամ Գողթան երգերը, որոնցից երբեմն նոյնու-
թեամբ հատուածներ էլ է մէջ բերում և մի քանի դուխ իր
պատմութիւնից—մանաւանդ Արտաշէս Բ-ի և Արտաւազդի մա-
սին, հիւսում է այդ երգերի բովանդակութիւնից, նրանց այլա-
բանութիւնը (այսինքն բանաստեղծական փոխարեութիւնը) ճշ-
մարտելով (այսինքն՝ պատմական լեզուի վերածելով, մեկնելով):
Մ. Էմինը շատ աշխատել է Խորենացու այս վէպերն ուսումնա-
սիրելով, նրանցով զբաղուել են և ուրիշ բանասէրներ (Գաթրը-
ճեան, Զարբանակեան, Գիւլօրիէ, Ֆէտտէր և այլն): Էմինը ցոյց
էր տուել, թէ ոչ միայն այն հատուածները, որ Խորենացին,
ըստ իր վկայութեան, առել է վէպերից, այլ և շատ ուրիշ դուխ-
ներ (Հայկ—Արամ—Տիգրան և այլն) հիւսուած են նոյն աղգային
վէպերից, և թէ Մար—Արաս, կամ ով և լինի նրա պատմութեան
հնարողը, իր պատմական նիւթը քաղել է ոչ թէ Նինուէի դրա-
սանից, այլ հայոց ժողովրդական երգերից: Այս տեսակէտով ա-
ռանձին նոր արժէք կը ստանար Խ.ու. պատմութիւնը, իբրև հա-
ւաքիչ հայոց հին աղգային պատմական աւանդութիւնների, ո-
րոնք այժմեան բանասիրութեան աչքում թանկացին նիւթեր են
որ և է ազգի հին պատմութեան, աղգագրութեան և կրօնի հա-
մար: Բայց Էմինի այս տեսակէտին ուժեղ հակառակորդ դուրս
եկաւ նրա աշակերտ պրօֆ. Գր. Խալաթեանցը: Սա 1896-ին
հրատարակեց մի ընդարձակ աշխատասիրութիւն, «Армянский

эпохѣ въ исторіи Арменіи Моисея Хоренскаго» վերնագրով, որի մէջ ճգնում է ի միջի այլոց ապացուցանել, թէ Խորենացու յիշած և գործածած հայկական վէպը՝ ժողովրդի ստեղծագործութիւն չէ, այլ գրաւոր ծագումն ունի և աւելի կամ նուազ յաջողութեամբ վերամշակումն է այնպիսի նիւթերի, որոնք վերցրուած են Աստուածաշնչից և ուրիշ թարգմանական կամ հայերէն հեղինակութիւններից: Ուրիշ խօսքով ստելով պրօֆ. Խալաթեանց, հերքում էր գոյութիւնը այն ազգային վիպասանների, որոնց երգերից Խորենացին, ինչպէս ինքը վկայում է, քաղել է իր պատմութեան այս կամ այն հատուածը և որոնցից մի քանի տողեր տեղ-տեղ մէջ է բերում անփոփոխ: Խալաթեանցի այս աշխատութիւնը, չը նայելով որ պարունակում է շատ զեղեցիկ և յաջող ուսումնասիրութիւններ Խորենացու պատմութեան հետ կապուած ուրիշ ինդիքների մասին, բայց վերոյիշեալ էական մասում ընդունելութիւն չը գտաւ քննադատութեան կողմից: Թողնելով ուրիշ քննադատութիւնները այս մասին՝ բաւականանա՞նք յիշելով Մ. Աբեղեանի ուսումնասիրութիւնը «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմութեան մէջ» (մի շարք յօդուածներ, որ սկսեցին տպուել «Արարատ» ամսագրում 1899 թ. յունիսից և դեռ շարունակուած են), որի մէջ հեղինակը մի առ մի քննութեան է ենթարկում Խորենացու՝ իբրև վէպ մէջ բերած և իբրև վիպական աղբիւրից քաղած հատուածները, քննադատում է Գ. Խալաթեանցի հայեացքներն ու փաստերը նրանց մասին և գալիս է այն եզրակացութեան, թէ հին Հայաստանում գոյութիւն ունեցել են պատմական բովանդակութեամբ ժողովրդական երգեր ու առասպելներ, և Խորենացին օգտուել է նրանցից:

Բայց Խորենացու անձնաւորութեան և նրա պատմութեան վարկի նկատմամբ ամենախոշոր հարցը որ ծագեց՝ այն էր, թէ նրը է գրուել այս պատմութիւնը: Խորենացու իր մասին տուած կցկտուր տեղեկութիւններից երևում է, որ նա եղել է Մ. Սահակի և Մեսրոպրի աշակերտ, նրանց հրամանով եփեսոսի ժողովից (432 թ.) յետոյ ուղարկուել է ընկերներով Աղեքսանդրիա քաղաքը՝ պանծալի յունարէն լեզուն սովորելու. ուսումն առնելուց յետոյ Հայաստան վերադառնալով՝ նա իր վարդապետներին չէ գտնում այլևս կենդանի, և նրանց մահը ողբում է շատ սրբատառուչ կերպով, ինչպէս մէկը, ոչ գրկուել է բոլոր յոյսից ու մխիթարութիւնից և շուրջը տեսնում է միայն քայքայում և թշնամական վերաբերմունք զէպի իր անձն ու գիտական պատրաստութիւնը: Հիմնուելով այս ցուցմունքների վրայ և յիշելով որ պատմագիրը ինքն իրան կոչում է—պատմութիւնը գրելու

ժամանակ—«ձեր, հիւանդոտ»՝ բնականապէս եզրակացնում էր, որ Սորենացին ապրել է հինգերորդ դարում և պատմութիւնը գրել է նոյն դարի վերջերում: Այսպէս էլ ճանաչուած էր Սորենացին երկար դարերի ընթացքում, մինչև մօտ ժամանակներու Բայց բանասիրական քննադատութիւնը այս կողմից էլ շօշափեց նրա պատմութիւնը և մի շարք փաստերի վրայ հիմնուելով կարծիք յայտնեց, թէ այդ պատմութիւնը եօթներորդ—ութերորդ, մինչև իսկ իններորդ դարի գործ է: Այս կարծիքը ճշտուելու դէպքում՝ Սորենացու պատմութիւնը կը դառնայ մի գրական կեղծիք, իսկ հեղինակը—կը լինի նա, Մովսէս Սորենացին կամ մի անձանօթ հեղինակ—կը հանդիսանայ իբրև խարեւայ կեղծող, երկու դէպքումն էլ վերջնականապէս կը կոտորուի այս պատմութեան ու նրա հեղինակի պատմական ու բարոյական վարկը:

Այս կարծիքն արծարծող ու փառարանող հանդիսացաւ անցած դարի իննսնական թուականներում (1893-ից սկսած) ֆրանսիացի հայագէտ պրօֆ. Ա. Կարբիէր, թէպէտ նրանից մօտ 10 տարի առաջ էլ նոյն կարծիքը յայտնել էր և գերմանացի գիտնական Գուտշմիտը, որ մի քանի պատմական-ժամանակագրական փաստերի հիման վրայ՝ եզրակացնում էր, թէ Սորենացու պատմութիւնը գրուած պէտք է լինի եօթներորդ դարի առաջին կէսում (634—642 թուականներին), մի անձանօթ հայի ձեռքով, որ իւր վրայ է առել Մովսէս Սորենացու դիմակը: Բայց Ա. Կարբիէր աւելի առաջ գնաց. նա ցոյց տուեց եօթներորդ դարի վերջում գրուած հայերէն աղբիւրներ (գլխաւորապէս Սեղբնատրոսի վարքի և Սոկրատի եկեղեցական պատմութեան հայերէն թարգմանութիւնները), որոնցից անկասկածելի կերպով օգտուել է Սորենացին, որից եզրակացրեց, թէ այս պատմութիւնը չէ կարող գրուած լինել ութերորդ դարի սկզբներից առաջ: Կարբիէրի հետքով գնացին և հայ բանասէրներ, որոնցից պրօֆ. Գր. Սալաթեանց մի քայլ էլ աւելի առաջ գնաց—պատմութեան գրութեան ժամանակը հասցրեց ութերորդ դարի վերջերը կամ իններորդ դարի սկզբները: Այս ժամանակները (1897) տպագրուեց Սեղբնատրոսի վարքի հայերէն թարգմանութիւնը, որ կատարուած է 678 թուին. այստեղ գտնուեց մի երկար գովասանական հատուած Սեղբնատրոս հայրապետի մասին, մի և նոյն հատուածը, շատ աննշան տարբերութիւններով, գտնուած է Սորենացու պատմութեան մէջ՝ յարմարեցրած Ս. Մեսրոպին... Այս նմանութեան կամ փոխադրութեան վրայ միաժամանակ մատնանիչ եղան Գր. Սալաթեանց և Գ. Տէր-Մկրտչեանց, և քանի որ անտարակուսելի էր համարուած, որ այստեղ փոխադրութիւնը անողը Սորենացին է և ոչ թէ վարքի թարգմանիչը՝ ինքն

բայ ինքեան եզրակացրուեց, որ 678 թուից առաջ Խորենացու հայոց պատմութիւնը չը կար, այլ պէտք է գրուած լինէր գրանից յետոյ ութերորդ դարում, կամ նոյն իսկ իններորդի սկզբում, ինչպէս կարծում էր Գր. Խալաթեանցը:

Այս՝ միմեանց յաճորդող մերկացումներն ու եռանդով տարուած քննադատութիւնները առժամանակ գրեթէ բոլորին համոզեցին, թէ Խորենացու պատմութիւնը մատենագրական կեղծիք է, 8—9-րդ դարերում սարքուած, համոզուեցին մանաւանդ եւրոպացի բանասէրները, որոնք հնարաւորութիւն չունէին մանրամասն հետազոտութիւններ կատարել հայ մատենագրութեան մութ գաւառներում): Ինչպէս քիչ յետոյ (1898-ի վերջերում և 1899 թ. սկզբներում) լոյս տեսան երկու նոր ուսումնասիրութիւններ, որոնք հերքում էին վերոյիշեալ, արդէն գրեթէ ճշմարտութիւն համարուած կարծիքը: Առաջին ուսումնասիրութեանը մէջ, որ սպուեց «Մշակում», հեղինակը, Նորայր Բիւզանդացին, բազմաթիւ օրինակներով և համեմատութիւններով ցոյց տուեց, թէ այն տեղերում, որտեղ Խորենացին մի կողմից, իսկ Սեղբեստրոսի վարքն ու Սոկրատի եկեղեցական պատմութիւնը միւս կողմից՝ բառացի նմանում են միմեանց՝ փոխ առնողը ոչ թէ Խորենացին է, այլ Սեղբեստրոսի և Սոկրատի թարգմանիչները. ուրեմն Խորենացու պատմութիւնը 678 թուին եղել է արդէն մի հեղինակաւոր գրական երկասիրութիւն, որի հաղորդած պատմական տեղեկութիւններից և յունարէն բնագրից թարգմանած պատրաստ հատուածներից օգտուել են Սեղբեստրոսի և Սոկրատի թարգմանիչները: *) Երկրորդ ուսումնասիրութեան մէջ («Սերէոսի պատմութիւնը և Մովսէս Խորենացի») մենք աշխատեցինք ցոյց տալ, որ եօթներորդ դարի կէսերին գրող Սերէոս պատմագիրը օգտուել է Մովսէս Խորենացու պատմութիւնից, նրան յանուանէ յիշելով և կոչելով «հաւաստի և ճշմարիտ մատենագիր», ուրեմն Սոկրատի և Սեղբեստրոսի թարգմանութիւններից դեռ 30 տարի առաջ գոյութիւն ունէր և հռչակուած էր Մովսէս Խորենացու պատմութիւնը:

Այս վերջին ուսումնասիրութիւնների դէմ դեռ առարկութիւններ չեն եղել, և Խորենացու պատմութեան գրուելու ժամանակի խնդիրը այս գրութեամբ էլ մտնում է քսաներորդ դարը, դեռ վերջնական վճռի սպասելով:

Թէև այս խնդիրը դեռ անկախ է մնացել, բայց 19-րդ դարում, մանաւանդ վերջին երկու տասնամեակում կատարուած քրն-

*) Ախտոս որ Նորայրի այս հետաքրքրական ուսումնասիրութիւնը, հեղինակի ընտանեկան գործախոտութեան պատճառով, թերի մնաց:

նութիւնները շատ բաներ պարզեցին Խորենացու պատմութեան նկատմամբ: Խորենացին այժմ անսխալ պատմագիր չէ, պատգամախօս աւետարան չէ, ինչպէս համարուած էր դարերով և դեռ համարոււմ էր 19-րդ դարի սկզբում. նա սխալական է և յաճախ՝ սխալաշատ: Նա չէ գործածել հին, ներկայումս անհետացած, վաւերական և խիստ հետաքրքրական աղբիւրներ, այլ նրա գործածած աղբիւրները ամենամեծ մասամբ ծանօթ են մեզ, իսկ որոնք անծանօթ են՝ կասկածելի է նրանց գոյութիւնը: Նա այլևս առաջնակարգ պատմական աղբիւր չէ, այլ երկրորդակարգ, որովհետև բանասիրութեանը այժմ յայտնի են Խորենացու աղբիւրները, ուստի և բանասիրութիւնը ուղղակի աղբիւրներին է դիմում փոխանակ Խորենացու միջնորդութեանը դիմելու: Սրանց հետ միաժամանակ պարզուեց, որ Խորենացին հատութեամբ, հայեացքներով, ճաշակով բարձր է կանգնած քան բոլոր հայ հեղինակները, որ նա մի հանճարեղ մտտեղագիր է, և նրա գրուածքը չէ կարելի վերի վերայ քննադատել, այլ պէտք է մանրակրկիտ ուշադրութեամբ կանգ առնել նրա ամեն մի խօսքի, ամեն մի բառի վրայ—պէտք է մեկնել նրան, որովհետև նրա ամեն մի խօսքը մտածուած է և ըստ այնմ գրուած: Այստեղից րնականաբար ծագեց մի պահանջ, որ սկսեց աւելի և աւելի ընդհանրանալ—այն է՝ նախ ունենալ Խորենացու պատմութեան բնական հրատարակութիւնը, և ապա նրան քննադատել. նախ հաստատ գիտենալ, թէ ինչպէս է գրել Խորենացին, յետոյ հասկանալ նրա գրածը, ապա թէ քննադատել: Այս պահանջը ծագեց նրանից, որ բազմաթիւ փորձերից երևաց, թէ շատ բան, որ մենք մինչև այժմ կարգում էինք իբրև Խորենացու գրած և դէն էինք ձգում իբրև սխալ՝ Խորենացու գրածը չէ, այլ ձեռագիրների աղանաղութիւն է. երևաց նոյնպէս, որ շատ բան մենք դեռ չենք էլ եղել հասկացած և մեր չհասկացողութեան պատճառով մեղադրելիս ենք եղել Խորենացուն: Այս կարևոր պահանջն էլ—քննական, ստուգուած հրատարակութիւն, ոչ միայն Խորենացու պատմութեան, այլ և մեր հին հայ հեղինակներին—19-րդ դարից անցնում է քսաներորդ դարը և անկասկած կիրազորուի ներկայ դարում:

ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ

(Կը օտուցակուի)



ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ XX-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲՈՒՄ

(Շարունակութիւն)

Սորենացու բախտին ենթարկուեցին և ուրիշ հին հեղինակներ հայոց մատենագրութիւնից, որոնք իրանց հնութեամբ և վաւերական, կարելի է ասել՝ պաշտօնական ծագումով գերազանցում էին նոյն-իսկ Սորենացուն, բայց հէնց այդ հնութեան և բարձր վաւերականութեան պատճառով էլ կասկածելի դարձան քննադատութեան աչքում և ստուգութեան կարօտ. որովհետև մինչև անցեալ դարը մեր վերաբերմունքը դէպի հին հեղինակները և նրանց հաղորդածները՝ լոկ հաւատք էր, հիմնուած աւանդութիւնների ու չը ստուգուած վկայութիւնների վրայ, և ոչ թէ գիտակցական համոզմունք:

Ինչպէս մեր աղգային պատմութիւնը հիմնուած էր Սորենացու վրայ, այնպէս էլ մեր կրօնական պատմութիւնը՝ Ազգաթանգեղոսի վրայ, որ մեր պատմական ձեռագիրների ժողովածունների մէջ առաջին տեղն է զբաւում, իբրև ամենավաւերական աղբիւր և հայ եկեղեցու աւետարան *): Այս Ազգաթանգեղոսը պատմում է, թէ ինչ կերպով հայոց ազգն ընդունեց քրիստոնէութիւնը: Հայոց Սոսրով թագաւորը—պատմում է նա,—կամենալով իր ազգական Պարթև Արտաւան թագաւորի սպանութեան վրէժն առնել, շատ նեղն է ձգում նրա սպանողին, Արտաշիր Սասանեանին, որ Արտաւանի տեղ թագաւորել էր Պարսկաստանում: Սոսրովից ազատուելու ուրիշ հնար չը գտնելով՝ Արտաշիրը մեծ խոստումներով զբաւում է նրա հեռաւոր ազգական պարթև իշխան Անակին, որ ընտանիքով գաղթում է Հայաստան, իբրև թէ Արտաշիրից փախստական, և Սոսրովի հաւատարմութիւնը զբաւելով՝ որսի ժամանակ նրան սպանում է դաւաճանութեամբ: Ինքը Անակը և բոլոր ընտանիքը տեղն ու տեղը կոտորում են. ազատւում է միայն մի ծծկեր երեխայ, որին փախցնում

*) Հէնց Ազգաթանգեղոս բառն էլ, որ լուսարէն է՝ նշանակում է աւետարանը կամ աւետարանն, և համանիշ է եւանգելիա (աւետարանն) բառին:

են կապադովկիա, որտեղ նա մեծանում, կրթւում է քրիստոնէական հաւատի մէջ, ամուսնանում և երկու որդի է ունենում: Իսկ Արտաշիբը գալիս տիրում է Հայաստանին, կոտորել է տալիս Խոսրովի թագաւորական զարմբ. ազատւում են Խոսրովի մի տղան—Տրդատ, և մի աղջիկը—Խոսրովիդուխտ: Տրդատին փախցնում են Հոռոմ. նա մեծանում, զինուորական ծառայութեան մէջ է մտնում և ականաւոր քաջութիւններ գործում: Այս ժամանակ նրա մօտ գալիս է սպասաւորելու մի անծանօթ օտարական, Գրիգոր անունով, ու հաւատարմութեամբ ծառայում է Տրդատին, առանց յայտնելու իր ուլ լինելը: Այնուհետև Տրդատը մի մեծ քաջութիւն է գործում—ողջ-ողջ բռնում է զթաջ Հռչէ թագաւորին, որ եկել էր Դիոկղետիանոս կայսեր դէմ պատերազմի և նրան մենամարտի էր հրաւիրել: Դիոկղետիանոսը Տրդատին վարձատրելու համար՝ նրան պսակում է Հայաստանի թագաւոր և յունական զօրքով ուղարկում է Հայաստան՝ հայրենական դահը ժառանգելու: Հայաստան գալով՝ Տրդատը հանդիսաւոր զոհ է մատուցանում Անահիտ աստուածուհուն. նոյնը պատուիրում է անել իր սպասաւոր Գրիգորին: Սա հրաժարւում է, յայտնելով որ ինքը քրիստոնեայ է: Սկսւում են այնուհետև յորդորներ, սպառնալիքներ, չարչարանքներ թագաւորի կողմից, որոնց Գրիգորը պատասխանում է՝ անարգելով կուռքերն ու նրանց պաշտողներին, տոկունութեամբ կրելով չարչարանքները և աղօթելով: Բռնի ոյժի և բարոյական կամքի այս մրցութիւնը տևում է երկար օրեր. Գրիգորը 14 անտանկի չարչարանքներ է կրում. վերջը յայտնւում է, որ նա—այդ քրիստոնեայ, յանդուգն Գրիգորը—Անակի որդին է, Խոսրով թագաւորին սպանողի որդին: Իսկոյն վճոււում է Գրիգորի բախտը: Վզից, ձեռքերից և ոտքերից կապուած՝ նա ուղարկւում է Արտաշատ և ձգւում է խոր վիրապը, որ մութ, խոնաւ, սողուններով լի ստորերկրեայ զուր կամ բանտ էր, ուր ձգւում էին մահուան դատապարտուածներին:

Այնուհետև Տրդատը կազմակերպում է իր թագաւորութիւնը, հալածում է պարսիկներին, ամուսնանում է և զբաղւում է իր գործերով: Մօտ 15 տարի այսպէս անցնելուց յետոյ մի միջադէպ է պատահում, որ վրդովում, տակնուվրայ է աւնում բոլոր հայոց ժողովուրդը: Մի խումբ քրիստոնեայ կոյսեր, Դիոկղետիանոսի հալածանքից փախչելով, գալիս են Հայաստան: Դուրս է գալիս, որ այդ կոյսերից մէկը, Հռիփսիմէ՝ անունով, աննման գեղեցիկ է եղել, և Դիոկղետիանոս կայսրը կամեցել է նրան կին առնել, բայց նա ընկերուհիներէ հետ միասին փախել է նրա ձեռքից: Տրդատը հրովարտակ է ստանում Դիոկղե-

տիանոսից՝ որոնել փախած կոյսերին և Հռիփսիմէին իրան ուղարկել. իսկ եթէ ինքը Տրդատը նորան հաւանի՝ կարող է ինքը նրան կին առնել: Որոնում գտնում են կոյսերին Վաղարշապատի մօտիկ մի հնձանում: Տրդատը լսելով Հռիփսիմէի գեղեցկութեան համբաւը՝ ինքն է կամենում նրան կին առնել. բայց կոյսը դարձեալ մերժում է իշխանների հրաւէրը, որոնք Տրդատից ուղարկուած էին նրան զարդարելու և իբրև թագաւորի հարս՝ շքեղութեամբ պալատը տանելու: Տրդատը հրամայում է բռնութեամբ բերել, և թագաւորի ապագայ հարսնացուին քաշէքաշ բերում են պալատ, և հարսանեկան հանդէան սկսում է. բայց կոյսը դարձեալ դիմադրում է Տրդատին և տասը ժամից աւելի այն հսկայակերպ ուժեղ թագաւորի հետ կռուելուց յետոյ վերջապէս յաղթահարում է նրան և թողնում փախչում է դարձեալ հնձանը, ընկերուհիների մօտ: Թագաւորը սիրուց և ամօթից կատաղած՝ հրաման է տալիս, և դահիճները անմիջապէս գնում, սարսափելի տանջանքներով սպանում են Հռիփսիմէին, մայրապետ Գայիանէին և միւս կոյսերին:

Անցնում է մի քանի օր. թագաւորը տխրութիւնը փարատելու համար կամենում է որսի գնալ: Կառք նստելու բոպէին մի կատաղութիւն թէ հիւանդութիւն է գալիս վրան: Կառքից վայր է նետուում, փրփրում, վայրենանում, խելագարում, անտաններն է ընկում. կերպարանքը խողակերպ է դառնում, եղունգները ճանկերի փոխում, վրան խողի կոշտ մազ բուսնում: Նոյնպիսի պատուհաս իջնում է և պալատականների վերայ, և ամբողջ երկիրը սուգ է մտնում: Այս ժամանակ Տրդատի քոյրը Սոսրովիդուխտը տեսիլք է տեսնում, թէ այդ պատուհասը կարող է փարատել միայն Գրիգորը, ուստի պէտք է նրան խոր վիրապից հանել: Իշխանները նախ ծաղրում են Սոսրովիդուխտ օրիորդին, որովհետև անկարելի բան էր, որ Գրիգորը մօտ 15 տարի այն վիրապում կենդանի մնացած լինէր. այնտեղ ձգուած մահապարտները հազիւ մէկ օր կարողանային ապրել: Բայց տեսիլքը կրկնում է, ուստի որոշում են փորձանել: Դուրս է գալիս, որ Գրիգորը կենդանի է մնացել. (մի կին ամեն օր մի-մի հաց ձգելիս է եղել վիրապը՝ հրեշտակի հրամանով): Դուրս են հանում Գրիգորին բորբոսնած, գլխտուած. լուանում, շորեր են հագցնում և բերում գէպի Վաղարշապատ մայրաքաղաքը: Ճանապարհին խելագար թագաւորն առաջ է վազում, խինջալով խողի պէս: Գրիգորը աղօթքով նրան փոքր ինչ զգաստացնում է: Ապա նահատակուած կոյսերի բացօթեայ ընկած և անարատ մնացած մարմիններն ամփոփում է, նրանց վրայ վկայարաններ շինում, որի ժամանակ թագաւորը, թա-

գուհին ու պաշտականները հող, քար, փայտ և ուրիշ պիտույքներ են կրում: Այնուհետև Գրիգորը քարոզում է թագաւորին ու ժողովրդին քրիստոնէութեան հաւատը. բժշկում է պատուհասուածներին, որոնք նորոգւում են այնպէս՝ ինչպէս մօրից նոր ծնուածներ: Արանից յետոյ Տրդատը Գրիգորին մեծ հանգէսով ուղարկում է Կեսարիա՝ եպիսկոպոս ձեռնադրուելու: Հայաստանի վրայ Վերադարձին Գրիգորը մկրտում է Տրդատին և հայոց ժողովուրդը Եփրատ գետում և այնուհետև սկսում է կազմակերպել նորադարձ աշխարհի կրօնական գործը. քանդում է կրօնատուները, շինում է եկեղեցիներ — այս ժամանակ հիմնում է ս. Էջմիածնի տաճարը այն տեղում, որտեղ տեսիլքում տեսել էր Միածնին իջնելիս. — հոգևորականներ է պատրաստում և այլն: Նորան գործակից է լինում Արիստակէս որդին, որ նրա հրամանով գնում է Նիկիա՝ տիեզերական ժողովին մասնակցելու իբրև Հայաստանի ներկայացուցիչ:

Այս է ահա Ազգաթանգեղոսի համառօտ բովանդակութիւնը. — մի գեղեցիկ, սրտառուչ պատմութիւն, որտեղ ամենայն ինչ կայ — և՛ հրաշք, և՛ նահատակութիւն, և՛ երկնատաք պատուհաս, և՛ ընդարձակ վարդապետութիւն՝ — հայոց դարձը փառաւոր և սքանչելի անելու համար: Բարեպաշտաբար չէ մոռացուած նաև՝ գոռոզ հեթանոս թագաւորին ստորացնել մինչև անասնութեան աստիճան և ապա, իբրև հաւատացեալի, բարձրացնել, բայց իբրև հլու որդի հոգևոր իշխանաւորին. չէ մոռացուած՝ Ս. Գրիգորին Արշակունեան թագաւորին հաւատարապատիւ բարձր ծագում տալ — Պարթևական տոհմից, խոնարհութեան աստիճանի և ծայրագոյն չարչարանքների մատնել Գրիստոսի անուան համար և ապա փառաւորել այնչափ՝ որչափ կարող է մարդ փառաւորուել:

Բայց ով է Ազգաթանգեղոսն ինքը. որչափ վստահութեան արժանի է նրա այս պատմութիւնը:

Օ՛, այս մասին կասկածելն անգամ աւելորդ է: Ինքը Ազգաթանգեղոսը իր պատմութեան առաջարանում ու վերջարանում վկայում է, թէ ինքը հոռմայեցի է, Տրդատ թագաւորի ժամանակ եկել է Հայաստան, նրա արքունիքում ծառայելու, և Տրդատի յատուկ հրամանով զրել է այս պատմութիւնը: Ուրեմն տեսնում ենք, որ առաջնակարգ, այժմևան լեզուով խօսելով պաշտօնական աղբիւր է նրա պատմութիւնը, նոյն ինքն թագաւորի հրամանով գրուած նրա քարտուղարի՝ ձեռքով: Ամեն տարակոյս փարատելու համար՝ Ազգաթանգեղոսը մի տեղ ասում է, թէ երբ Գրիգորը մի ուղբից կախուած եօթն օր մնացել էր կախազանի՝ վրայ և աղօթում էր՝ թագաւորի հրամանով նրա

մօտ կանգնած էին արագագիր գրիչներ (ստենօգրաֆներ ?), որոնք գրի առան նրա ասած աղօթքը (որ գրքի մէջ 19 երես տեղ է բռնում) և ներկայացրին թագաւորին. այնպէս որ մենք, ընթերցողներս, պէտք է եզրակացնենք, թէ այդ աղօթքն անգամ առնուած է դարձեալ պաշտօնական աղբիւրից—արքունի սղագիրների տուած ղեկուցումից:

Իբրև մի նոր ապացոյց էլ, թէ յիրաւի Ազաթանգեղոսի պատմութիւնը գրուած է Տրդատ թագաւորի ժամանակ, չորրորդ դարի սկզբներում՝ ծառայում է այն հանգամանքը, որ Ազաթանգեղոսի պատմութիւնը գոյութիւն ունի և յունարէն լեզուով: Բնականապէս ուրեմն եզրակացնում է, թէ այս յունարէնը եղել է սկզբնագիր, բուն Ազաթանգեղոսի գրածը (որովհետև չորրորդ դարում դեռ հայերէն գրերը չէին գտնուած և հայերէն գրել կարելի չէր, մանաւանդ որ Ազաթանգեղոսն ինքը հոռոմայեցի լինելով՝ դժուար թէ հայերէն այնպէս լաւ գիտե՞նար): Իսկ մեր ունեցած հայերէնը՝ թարգմանութիւն է այս յունարէնից:

Ամեն ինչ ուրեմն կարգին է.—վկան վստահելի, վկայութիւնը քանչևիլի Բայց քննադատութիւնը մի վատ յատկութիւն ունի.—նա անհաւատ է Թովմայ առաքեալի նման. մինչև չը քննէ չը շօշափէ, չը ստուգէ՝ չի համոզուի: Ահա այս սկեպտիկ քննադատութիւնը շօշափեց և Ազաթանգեղոսի պատմութիւնը, բայց ոչ ըստ էութեան, կրօնական տեսակէտից, այլ նրա ծագումը և մատենագրական արժէքը: Քննութեան հետեանքը այն աստիճան նոր և անսպասելի էր, որ մեղանից 100 տարի առաջ անկարելի էր նոյն-իսկ երևակայել. ներկայումս այդ գրքի մասին տիրող հայեացքը եթէ մէկն արտայայտէր այն ժամանակ՝ նրան հայերը խաչը կը բարձրացնէին. իսկ այժմ այդ գիւտը անում են եւրոպացի գիտնականների հետ և հայ գիտնականները, այն էլ երեք հայ հոգևորականներ—Հ. Տաչեան՝ Վիեննայի Մխիթարեաններից, Հ. Բ. Սարգիսեան՝ Վենետիկի Մխիթարեաններից և Գ. Տէր-Մկրտչեան՝ ս. Էջմիածնի միաբան: Այս աստիճան համբերողութեան ոգին արծարծուեց մեր մէջ մի հարիւր տարուայ ընթացքում գիտութեան և քննադատութեան շնորհիւ: Բայց այս խնդրում էլ առաջին փորձն արաւ և առաջին յարձակումը կրեց եւրոպացի գիտնականը, գերմանացի Գուտշմիտը, որ անուանի պատմագէտ ու քննադատ էր:

Բանասիրութիւնը նախ ուշադրութիւն դարձրեց այս հարցի վրայ, թէ յիրաւի այդ պատմութիւնը գրուած է չորրորդ դարի սկզբում, Տրդատ թագաւորի և Գր. Լուսաւորչի կենդանութեան ժամանակ, ժամանակակից հեղինակի ձեռքով: Քննու-

թիւնը գրքից դուրս բերեց բազմաթիւ փաստեր, որոնք բոլորը բացասական պատասխան էին տալիս այս հարցին: Յիշենք սրանցից մի քանիսը: Գրքի մէջ շատ անգամ բերուած են հատուածներ Աստուածաշնչից, և այս հատուածները առնուած են հայերէն Աստուածաշնչից, որ թարգմանուեց հինգերորդ դարի առաջին կէտում:—Տրդատի ոյժի մասին այնպիսի առասպելական չափազանցութիւններ կան, որոնք չեն կարող ստեղծուել ժամանակակից, կենդանի մարդու մասին *), այլ կարող են բացատրուել միայն նրանով, որ աւանդութիւնը և ժողովրդի երեւակայութիւնը սերունդէ սերունդ հետզհետէ զարգարել ու մեծացրել են նրա իրական ոյժը: Յիշուած է մինչև անգամ, թէ Տրդատի ոյժի և քաջութեան մասին առած էր կազմուել և բերնէ բերան ասուում:—Գրիգոր Լուսաւորչի մահը չէ յիշուած. հեղինակը այդ լուծեամբ կամեցել է ցոյց տալ, իբր թէ իր գրելու ժամանակ Լուսաւորիչը դեռ կենդանի է եղել. բայց մի-երկու տեղ պատահաբար նրա գրչից թուել է «երանելի» բառը Լուսաւորչի մասին. իսկ այս բառը միայն մեռածների համար է գործածուում՝ ինչպէս այժմ «լուսահոգի» բառը:—Մի անգամ հեղինակը վկայում է, թէ ինքը կարդացել է հայոց դարձի պատմութիւնը: Այսպիսի բան չէր կարող ասել չորրորդ դարի հեղինակը, որ հէնց ինքը դեռ նոր պէտք է գրէր այդ դարձի պատմութիւնը:

Գրիգոր Լուսաւորիչը տեսիլք է տեսնում, որի մէջ ազօտ կերպով երևում են այն կրօնական հայածանքներն ու ուրացութիւնները, որոնք Հայաստանում տեղի պէտք է ունենային Վարդանանց պատերազմից քիչ առաջ, այսինքն հինգերորդ դարի կէսերի մօտ: Հին ժամանակները, և դեռ մեզանից մի դար առաջ, ընթերցողները այս տեսիլքի վրայ նայում էին այնպէս՝ ինչպէս հեղինակն էր կամեցել. այսինքն թէ Նախախնամութիւնը տեսիլքի միջոցով Լուսաւորչին գուշակել է ապագայ լինելիքը: Բայց քննադատութիւնը ներկայումս բոլորովին այլ կերպ է նայում այսպիսի երեոյթների վրայ. նա ասում է. հեղինակը ուրեմն ինքը տեսել է այդ հայածանքներն ու ուրացութիւնները, ուստի և դնում է դրանց Լուսաւորչի տեսիլքի մէջ՝

* Օրինակ, պատմում է, թէ նահատակուած կոչսերի վրայ վկայարաններ շինելու ժամանակ Տրդատը եօթնօրեայ ճանապարհով գնում է Փասիս սարը և լեռան գագաթից ուտի վրայ բարձած Վաղարշապատ է բերում ութ հատ խոշոր, անտաշ, անկոփ, ծանր, հաստ, երկար արձաններ (քարեր), այնքան մեծ, որ բազմաթիւ մարդիկ հաւաքուելով չէին կարողանայ նրանցից մէկը շարժել. իսկ նա Հայկի նման այդ ութ արձանները իր վրայ բարձած՝ բերում է վկայարանների շինութեան տեղը:

իրրև գուշակութիւն:—Հեղինակն անուժ է պատմական և ժամանակագրական սխալներ, որոնք կարող են բացատրուել միայն նրանով, որ նա ժամանակակից չէ իր պատմած դէպքերին, այլ գրում է աւանդութիւնից կամ անվաւերական աղբիւրներից:

Վերջապէս գտնուեց մի վկայաբանութիւն՝ ասորի Գորիա և Շամոնա վիաների մասին, որից անտարակոյս օգտուել է Ազաթանգեղոսի հեղինակը՝ Գրիգոր Լուսաւորչի չարչարանքները նկարագրելու ժամանակ. իսկ այս վկայաբանութիւնը, ինչպէս վերջերս հաստատուեց՝ գրուած է չորրորդ դարի վերջերին:

Այս և ուրիշ փաստերի հիման վրայ քննադատութիւնը հաստատեց, որ Ազաթանգեղոսի անունը կրող պատմութիւնը չէ գրուած չորրորդ դարի սկզբներում, Տրդատ թագաւորի հրամանով, նրա քարտուղար Ազաթանգեղոսի ձեռքով, այլ գրուած է հինգերորդ դարի կէսերին մօտ, չորս հարիւր քառասնական թուականներին: Մի կարևոր փաստ կար այս եղբակացութեան դէմ—այն է՝ յունարէն Ազաթանգեղոսի գոյութիւնը, որ, ինչպէս ասացինք՝ պէտք է սկզբնագիրը լինէր, իսկ հայերէնը նրանից թարգմանուած: Բայց այս փաստն էլ կորցրեց իր նշանակութիւնը: Բանն այն է, որ մանրամասն համեմատութիւնը անկասկած կերպով ցոյց տուեց, որ այդ յունարէն Ազաթանգեղոսը թարգմանուած է հայերէն Ազաթանգեղոսից: Մանրամասնութիւնների մէջ մանել մեր նպատակից դուրս է. բաւականանանք մի խոշոր փաստով. Աստուածաշնչի հատուածները յունարէն Ազաթանգեղոսի մէջ՝ չին վերցուած յունարէն Աստուածաշնչից, այլ բառացի թարգմանութիւն են հայերէն Ազաթանգեղոսից: Ուրեմն յունարէն Ազաթանգեղոսը իրրև սկզբնագիր չէ ծագայել հայերէնի համար և չէ խախտում այն եղբակացութիւնը, թէ հայերէն Ազաթանգեղոսը գրուած է հինգերորդ դարի կէսերին մօտ:

Այս էական զիւտից յետոյ բնականապէս պէտք է ծագէին ուրիշ հարցեր. ո՞վ է ուրեմն գրել այդ պատմութիւնը, ի՞նչ աղբիւրներից է օգտուել, որչափ արժանահաւատ են այդ աղբիւրները, ի՞նչու հեղինակը ծածկել է իր իսկական անունը և այլն:

Այս հարցերին բանասիրութիւնը մասամբ պատասխանել է, մասամբ էլ նրանց լուծումը մնում է ներկայ դարիս: Իրրև հաւանական ենթադրում է, թէ Ազաթանգեղոսի պատմութիւնը իմբագրել է Կորիւնը, Մեսրոպի անդրանիկ աշակերտներից մէկը, որ գրել է նաև իր ուսուցչի կենսագրութիւնը: Այս կենսագրութեան և Ազաթանգեղոսի մէջ պատահում են բազմաթիւ կարճ ու երկար հատուածներ՝ բառացի միմեանց նման, և գլխաւորապէս այս նման հատուածների վրայ է հիմնուած

այն կարծիքը, թէ Կորիւնն է Ազաթանգեղոսի պատմութեան խմբագիրը: Նա ձեռքի տակ ունեցել է մի քանի գրաւոր աղբիւրներ, ինչպէս Գրիգոր Լուսաւորչի վարքը, Հռիփսիմեան կոյսերի վարքը, Գրիգոր Լուսաւորչի վկայաբանութիւնը, Գորիայի և Շամոնիայի վկայաբանութիւնը, զուցէ և ուրիշ աղբիւրներ, որոնք դեռ յայտնի չեն: Նա օգտուել է նաև ժողովրդական աւանդութիւնից, որ մօտ 150 տարուայ ընթացքում կազմուել է Լուսաւորչի, Տրդատի և Հռիփսիմեան կոյսերի մասին: Այս տարբեր աղբիւրները միմեանց հետ կապակցելով, նրանց մէջ ներքին կապ հաստատելով՝ Կորիւնը (կամ ո՞վ և իցէ) խմբագրել, կազմել է այն ամբողջութիւնը, որ մեզ հասել է Ազաթանգեղոսի պատմութիւն անունով: Բայց խմբագրական գործը այնքան էլ ճարտարութեամբ չէ կատարուած. այնպէս որ գրքի զանազան մասերում նկատուում է արուեստական կապի տեղը, ինչպէս փորձուած աչքը մի երկաթի կամ տախտակի վրայ կարողանում է նկատել յեռման կամ միացման տեղը:

Աղբիւրների մէջ ամենից արժանահաւատն է համարուում Գրիգոր Լուսաւորչի վարքը, որ գլխաւոր պատմական աղբիւրն է. ուստի և քննադատութիւնը ընդունում է, որ չորրորդ դարի սկզբներում հայերը Տրդատ թագաւորի ժամանակ ընդունել են քրիստոնէութիւն Գրիգոր Լուսաւորչի քարոզութեամբ: Բայց բաղմաթիւ մանրամասնութիւնները Լուսաւորչի անձնաւորութեան, նրա չարչարանքների, Տրդատի հիւանդութեան, Հռիփսիմեան կոյսերի նահատակութեան և այլն վերաբերութեամբ՝ բղխում են նուազ արժանահաւատ աղբիւրներից, ուստի չեն կարող անպայման ընդունելի լինել:

Բայց մեզ համար էականը այն չէ, թէ որչափ արժանահաւատ է Ազաթանգեղոսի պատմութեան այս կամ այն մասը: Ենթադրելով մինչև անգամ, որ պատմութեան ամեն մի հատուածն էլ արժանահաւատ կամ ճշմարիտ է՝ այնու ամենայնիւ մասեկագրական տեսակէտից մենք գործ կ'ունենայինք մի գրական կեղծիքի հետ: Գիրքը գրուած է հինգերորդ դարի կէսերին, Կորիւնի (կամ ուրիշ ժամանակակիցի) ձեռքով՝ գրաւոր և անգիր աղբիւրների հիման վրայ, այն-ինչ նա ընթերցողին ներկայացնում է իբրև չորրորդ դարի սկզբներում գրուած՝ Տրդատ թագաւորի հրամանով, ակնատես Ազաթանգեղոսի ձեռքով: Այս այնպէս լինելուց յետոյ՝ նախ և առաջ կասկածելի կը դառնայ նաև ամբողջ գրքի բովանդակութիւնը—որովհետև մի խոչոր կեղծիք կատարողը չի խորշի և ուրիշ մանր-մուշոր կեղծիքներ կատարելուց.— ուստի հարկաւոր կը լինի ամենայն զգուշութեամբ ստուգել նրա ամեն մի տեղեկութիւնը: Այնուհետև

Նրա մէջ արծարծուած ոգին, հայեացքները, ազգագրական և հին-կրօնական տեղեկութիւնները և այլն մեզ ներկայանում են իբրև հինգերորդ դարի հայեացքներ ու տեղեկութիւններ, այն՝ ինչ որ ունեցել է հինգերորդ դարի կէսերում ապրող հայ հոգևորականը. ուրեմն նրանք հարազատ արտայայտութիւն չեն չորրորդ դարի սկզբներում Հայաստանում տիրող կարգերին ու հայեացքներին: Այս պատճառով մեզ համար մութ է մնում, գուցէ և առ միշտ—հայոց դարձի իրական պատմութիւնը, ամբողջ ժողովրդի վերաբերմունքը դէպի նոր կրօնը, որ անկասկած պաշտօնապէս ընդունուել է թագաւորի պալատում: Մութ են մնում մի շարք պատմական եղելութիւններ, որոնք յաջորգեցին հայոց դարձին և որոնք կարծես յակամայից կամ պատահաբար հարեանցի յիշում են յաջորդող հեղինակներին—այսպէս են Լուսաւորչի լեռները առանձնանալն ու ճգնելը ծերութեան հասակում, նորան յաջորդող կաթողիկոսների (որոնք նրա սերունդիցն էին) կրած հալածանքները հայերի կողմից, նրանցից ոմանց սպանուելը, նոյն-իսկ Տրդատ թագաւորի անսովոր մահը, որը ինամբով թաքցնում է Ազաթանգեղոսի պատմութիւնը, բայց Սորենացին յիշում է զայրոյթով, յայտնելով որ նախարարները նրան թունաւորեցին (կամ ինչպէս մի անձանօթ հեղինակ ասում է՝ որսի մէջ դաւաճանութեամբ սպանեցին): Հոգով քրիստոնեայ խմբագրողը, որ նպատակ է ունեցել քրիստոնէութիւնը ջատաղով և փառաբանել՝ հայոց դարձը ներկայացրել է իբրև Նախախնամութեան յատուկ միջամտութեամբ կատարուած գործ. բազմատեսակ հրաչքները, անօրինակ պատուհանները, տեսիլքները՝ այդ միջամտութեան արտայայտութիւններն են միայն: Այս կերպով հայ ժողովուրդը պիտի համոզուէր ու հաւատար, որ հայոց դարձը սոսկ մարդկային գործ չէ, այլ Նախախնամութեան յատուկ անօրէնութիւն, նրա ընտրեալ նահատակի ձեռքով. սրանով թէ՛ ժողովրդի հաւատը պինդ կը լինէր և թէ՛ հայոց եկեղեցու նուիրապետութիւնը բարձր ու փառաւոր: Այս ոգով առաջնորդուող հեղինակը, լինի կորիւն կամ նրա ընկերներից մէկը, ի հարկէ զանց կ'անէր պատմել այնպիսի իրողութիւններ—օրինակ՝ հակառակութիւններ ժողովրդի կողմից, ապստամբութիւններ նախարարների կողմից—որոնք պէտք է համարուէին մարդկային գործ և ստամբակութիւն՝ Նախախնամութեան անօրէնութեան դէմ:

Սրանից արդէն պարզւում է, թէ ինչո՞ւ այս պատմութեան իսկական հեղինակը (խմբագրողը) ծածկել է իր անունը և իր աշխատութիւնը վերագրել է մի ինչ-որ Ազաթանգեղոսի, որ գուցէ ամենեւին գոյութիւն էլ չէ ունեցել: Եթէ նազիրքը

հրապարակ հանէր իր (ասե՛նք Կորիւնի) անունով ընականաբար ամեն կարդացողի մէջ հարց կը ծագէր, թէ Կորիւնը որտեղից գիտէ իրանից 150 տարի առաջ կատարուած անցքերը. ո՞վ է նորան հաղորդել այն խօսակցութիւնները, ընդարձակ վարդապետութիւնը և այլն, որոնք զբքի մէջ կէսից աւելի տեղ են գրաւում, և վերջապէս որչափ կարելի է հաւատ ընծայել այն հայեացքներին, որ հինգերորդ դարում ապրող մի հայ կրօնաւոր մտցնում է չորրորդ դարի հեթանոս հայերի մէջ: Ուրիշ բան է, եթէ այդ պատմութիւնը գրուած լինի չորրորդ դարում ապրող, ժամանակակից և ականատես հեղինակի կողմից, մանաւանդ եթէ նա պաշտօնական անձ է և գրում է նոյն ինքն թագաւորի հրամանով: Այս դէպքում վկան կը լինի միանգամայն վստահելի և նրա պատմութիւնը անկասկածելի:

Այստեղ տեսնում ենք ուրեմն մի գրական երևոյթ, որ շատ հակառակ է ներկայումս գրական աշխարհում տիրող երևոյթներին: Ներկայումս հեղինակը աշխատում է գրական անուն վաստակել իր գրուածքներով. մինչև անգամ նա իւրացնում է ուրիշի աշխատանքը և իր անունով հրատարակում (գրական գոգութեան զանազան տեսակները). իսկ հին ժամանակ հեղինակն օտարացնում էր իր աշխատութիւնը և նրան վերագրում ուրիշ, մի նշանաւոր անձի: Երկու դէպքումն էլ կատարում է կեղծիք, այս տարբերութեամբ, որ ներկայումս այդ կեղծիքը կատարում է անձնասիրական գիտումով, իսկ հին ժամանակ՝ գրուածքի յաջողութիւնը ապահովելու գիտումով:

Ուրեմն չորհակալ պէտք է լինենք բանասիրական քննադատութիւնից, որ մեր առաջ պարզեց կեղծիքի գոյութիւնը հայոց հին մատենագրութեան մէջ: Շօվինիզմի ողին անցեալ դարի հետ թաղուեց մեզ համար. մենք այժմ այնքան գիտակցութիւն ու լրջութիւն ունենք, որ համարձակ կարող ենք նայել մեր անցեալի իրական պատկերի վրայ, որչափ էլ նա տգեղ լինի և անփառունակ: Կեղծիքի վրայ հիմնուած շլացուցիչ պատկերը այժմ չէ կարող շոյել մեր ազգասիրական զգացմունքը, այլ միայն վիրաւորել: Այս կէտումն էլ ուրեմն անցեալ դարի ընթացքում մենք հասունացանք:

Սակայն պէտք է ասել, որ գրական կեղծիքը հայ հեղինակների գիւտ չէ, հայոց հողի բերք չէ: Մեր մատենագրութեան սկզբնաւորութիւնից դեռ շատ դարեր առաջ նա գոյութիւն ունէր և շատ տարածուած էր Յունաստանում, Բիւզանդիայում, Ասորիքում: Գրական կեղծիքներ են կատարուել Հոմերոսի, Արիստոտէլի, Պլատոնի անունով. կեղծուել է Աղեքսանդր Մակեդոնացու պատմութիւնը. հարիւրաւոր անվաւերա-

կան գրութիւններ են լոյս աշխարհ հանուել Քրիստոսի, նրա առաքեալների և նշանաւոր հայրապետների անունով: Հայ հեղինակները, ինչպէս գրականութիւն և նրա տիպերն ստեղծելու, մտաւոր ու բարոյական սնունդ ստանալու մէջ՝ այնպէս էլ այս կէտում հետեւել են իրանց ուսուցիչներին—բիւզանդացի և ասորի հեղինակներին: Գրական կեղծիքն այս ազգերի մօտ այնքան սովորական է եղել, որ մեր հին հեղինակներից մէկը, Ղազար Փարպեցին, հինգերորդ դարի վերջերում, բողբօւմ է այդ տգեղ երևոյթի դէմ և մանաւանդ պախարակում է ասորիներին, որոնց մէջ առաւելապէս տարածուած է եղել այդ սովորութիւնը:

Այսպիսի մի գրական կեղծիք, ասորական ծագումով, առանձին դեր է խաղացել մեր քաղաքական և եկեղեցական պատմութեան մէջ: Գոյութիւն ունի մի պատմական գրուածք, որ աւանդում է թէ Եղեսիայի Արզար թագաւորը ցաւազար է եղել, որից չէ կարողացել բժշկուել մարդկային հնարներով: Նրա պատգամաւորները մի քաղաքական գործով Պաղեստին գնալով՝ լսում են Յիսուսի մասին, թէ նա առանց դեղերի ամեն տեսակ բժշկութիւններ է անում, մինչև անգամ մեռածներին կենդանացնում է: Գնում են պատգամաւորները Երուսաղէմ, անձամբ ստուգում են իրանց լսածները և գալիս պատմում են Արզարին: Սա իսկոյն նամակ է գրում Յիսուսին, որով նրանից խնդրում է, որ զայ Եղեսիա, իրան բժշկէ և միասին հանդիստ ապրեն իր քաղաքում: Քրիստոս նամակատար պատգամաւորներին պատասխանում է, թէ ինքը չուտով վերանալու է իր Հօր մօտ. ուստի իր համբառնալուց յետոյ կ'ուղարկէ իր աշակերտներին մէկին, որ Արզարին կը բժշկէ և ճշմարիտ հաւատը կը քարոզէ: Յիրաւի, Քրիստոսի համբարձումից յետոյ Եղեսիա է գալիս նրա աշակերտներից մէկը, Ադդէ կամ Թադէոս առաքեալը, բժշկում է Արզարին և քաղաքում գտնուած միւս հիւանդներին, մկրտում է նրանց, քարոզում է նոր հաւատը, հիմնում է քրիստոնէական եկեղեցի և Եղեսիայում էլ մեռնում է ու թաղոււմ, ձեռնադրելով նախապէս իր համար յաջորդ՝ նոր հաւատացեալներին հովուելու համար: Այս պատմութիւնը գրել է Արզարի քարտուղարի որդին Լաբուրնայ և դրել է Եղեսիայի դիւանը:

Այստեղ էլ տեսնում ենք, որ քրիստոնէութեան մուտքը Եղեսիա՝ կապուած է անմիջապէս Քրիստոսի անձի հետ և կատարուած է նրա առաքեալի ձեռքով, որից աւելի պանծալի ծագում դժուար է երեւակայել. իսկ պատմութեան հեղինակը բոլորովին վստահելի, պաշտօնական անձնաւորութիւն է, ուրեմն անկասկածելի է նրա բովանդակութիւնը: Բայց և այնպէս այսօր

տարակոյս չը կայ, որ Լաբուրնայի անունը կրող այս պատմութիւնն էլ կեղծիք է, Քրիստոսի ծնունդից զոնէ 250 տարի յետոյ կատարուած: Այս իրողութիւնը հաստատուած է նշանաւոր գիտնականների բազմաթիւ հետազոտութիւններով, որոնք տարակոյսի այլևս տեղիք չեն թողնում:

Եղեսիայի եկեղեցու այս փառաւոր ծագումը ըստ երևոյթին հանգիստ չէ տուել մեր նախնիքներին, (գուցէ և զրգիչ է եղել Ագաթանգեղոսի կեղծիքը կատարելուն): Նրանք հինգերորդ դարում թարգմանել են այս գրուածքը ասորերէնից հայերէն, փոքրիկ փոփոխութիւններ անելով իրանց կողմից: Օրինակ, հայերէն թարգմանութեան մէջ՝ Թաղէոս առաքեալը ոչ թէ վախճանուած ու թաղուած է Եղեսիայում, ինչպէս ունի ասորերէն բնագիրը, այլ օրհնուած է Եղեսիայի ժողովրդին ու գալիս է արևելք քարոզելու, որտեղ և նահատակուած է հեթանոսներից (այսինքն՝ հայերից): Գուցէ այս փոփոխութիւնը կատարուել է մի (անձանօթ հեղինակի) վկայաբանութեան ազդեցութեան տակ, որի մէջ մանրամասն նկարագրուած են Թաղէոս առաքեալի և Սանդուխտ կոյսի նահատակութիւնները Հայաստանում, Սանատրուկ թագաւորի հրամանով: Այս երկու դրուածքների շնորհիւ, որոնցից վերջինի ծագումը յայտնի չէ (թէ և կոչուած է թարգմանութիւն), իսկ առաջինի մէջ հայ թարգմանչի մոյրած կեղծիքը ակնարկ է՝ Թաղէոս առաքեալը դարձաւ հայոց եկեղեցու առաջին հիմնադիր ու լուսաւորիչ և հայոց հայրապետական գահը՝ ավթոս ս. Թաղէոսի: Իսկ Արզարի վերաբերութեամբ հարցը աւելի հեշտ են լուծել մեր նախնիքը, այդ ասորի թագաւորին, որի իշխանութեան սահմանն էլ Ասորիքումն էր՝ առանց այլևայլութեան մկրտել են հայոց թագաւոր: Այնպէս որ զրչի մի քանի շարժումներով Եղեսիայի եկեղեցական և ազգային փառքը, որի հիմքը կաղմում էր Լաբուրնայի անվաւերականը՝ փոխադրուեց հայ ազգի և եկեղեցու վրայ:

Ի՞նչ են թերցողներից նրանք, որոնք առաջին անգամ են ծանօթանում այսպիսի մերկացումների՝ գուցէ շատ խիստ դատապարտեն մեր հինգերորդ դարի անդրանիկ հեղինակներին, հայոց քաղաքական և եկեղեցական պատմութեան առաջին չիտողներին՝ նրանց գիտակցարար կատարած գրական կեղծիքների պատճառով: Գրական կեղծիքը անտարակոյս չէ կարելի արդարացնել, բայց հարկաւոր է նրան լուսաբանել, որպէս զի արդար լինի մեր, յեանորգներիս վերաբերմունքը դէպի մեր նախնիքը: Գրական կեղծիքներ կատարելու դործում մեր հին հեղինակները նոյնչափ դատապարտելի են՝ որչափ առհասարակ բոլոր հին ազգերի անդրանիկ հեղինակները, որոնց առաջ դրուած

է եղել իրանց պատմութեան առաջին գրական հիմքը դնելու հարցը: Հին յոյները իրանց համարում էին առաջացած այն քարերից, որ աստուածները շարտում էին իրանց գոգից. նրանց նախնի դիւցազուններից մի քանիսի երակներում հոսելիս է եղել ուղղակի Ուրմալեան Արամազդի արիւնը: Նախկին Իտալիայի թագաւորական սերունդը առաջ է եկած եղել Տրոյիայի Ենէաս իշխանից, որի մայրն եղել է Վեներա գիցուհին: Անգլիական հին թագաւորական տունը ծագելիս է եղել Դաւիթ թագաւորից. նոյն Դաւթի սերունդն է եղել Վրաստանում իշխող Բագրատունի թագաւորական տոհմը, այն-ինչ սրանց նախնիքը Հայաստանում՝ միայն հրէական ծագում են ունեցել և չեն ձգտել անշուշտ Դաւթի որդի լինելու: Իսկ քրիստոնեայ եկեղեցիների պատմութիւնից բաւական է յիշել այն աւանդութիւնը, որ իբրև անկասկածելի իրողութիւն ընդունուած է կաթողիկ եկեղեցում, այն է թէ Պետրոս առաքեալը նահատակուել է Հռոմում և նախքան է եղել հիմնադիր հռոմէական (կաթողիկ) եկեղեցու, լինելով առաջին պապը, և նրա անունով հայրապետական գահն էլ այս պատճառով կոչոււմ է աթոռ ս. Պետրոսի և պապերը համարում են իրանց անմիջական յաջորդ Պետրոս առաքեալի, որից և ստացել են երկինքը բանալու և փակելու իշխանութիւնը: Բայց այսօր ականաւոր գիտնականների պատմական հետազոտութիւնները ցոյց են տալիս, որ Պետրոս առաքեալը նոյն-իսկ ոտք չէ դրել Հռոմում: Ուրեմն հին ժամանակ ազգերի մէջ ընդհանուր սովորութիւն էր՝ փառաւոր և բարձր ծագում վերագրել իրանց, որքան վեհ լինէր նրանց պատմական կեանքի նահապետը, որքան նուիրական լինէր նրանց եկեղեցու հիմնադիրը՝ այնքան մեծ կը լինէր իրանց պարծանքը, այնքան աւելի յարգու պատիւ կը վայելէին նրանք օտարների աչքում: Նոյն բանը չենք տեսնում և մեր օրերում. շատ կրթուած և ըստ երևոյթին խելօք մարդիկ առանձին պարծանք են համարում իրանց հին, ազնուական ծագումը. «տոհմական ազնուական», «իշխան» տիտղոսը, որ պաշտօնապէս կցուած է լինում մէկի պղզանունին՝ նորան հասարակութեան աչքում պատկանելի դիրք է տալիս: Արտաքին փայլը, որչափ էլ չնչին տարրերից լինի հիւսած՝ այնուամենայնիւ դեռ չլացնում է շատերի աչքերը: Ի՞նչ զարմանք ուրեմն, որ նոյն արտաքին փայլի, նոյն ազգային և եկեղեցական պարծանքի ընդհանուր ցաւով տողորուած լինէին և մեր գրականութեան նախկին հեղինակները, մանաւանդ այնպիսի տաղնապալից ժամանակ, երբ Արշակունեաց թագաւորութիւնը վերջացել էր, քաղաքական անկախութիւնը վերացել, իսկ հայոց երկու հզօր գրացիները, պարսիկներն ու ըիւզանդացիք, իրանց

քաղաքական և կուլտուրական գերազանցութեամբ սպանուած էին կուլ տալ թոյլ ու անզօր հայերին: Այսպիսի հանգամանքներու մ ազգի «տոհմական-ազնուական» ծագումը, և կեղեցու «առաքելական» լինելը անտարակոյս ազգային հպարտութիւն կը ներշնչէին այդ ազգին պատկանող անհատներին, այդ պանծալի ծագման զիտակցութիւնը բարոյական ոյժ կը տար նրանց՝ ազգերի դոյութեան կռուի մէջ արիաբար պաշտպանելու իրանց ինքնուրոյնութիւնը:

Եւ այդ գրական կեղծիքները դարերով կատարեցին իրանց դերերը, մինչև որ անաչառ քննադատութիւնը վերացրեց նրանց վարագործող քօղը և ճշմարտութիւնն սկսեց երևալ իր իսկական գրութեամբ: Բայց այդ ժամանակ մենք էլ արդէն հասունացել էինք և ազգային ինքնաճանաչութիւնը վառ պահելու համար այլևս պէտք չունէինք գրական կեղծիքներ:

ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ

(²ր օտուցակուի)

Սօսելով գրական կեղծիքների մասին՝ չէ կարելի չը յիշել և մի ուրիշ հետաքրքրական օրինակ այդպիսի կեղծիքի, մանաւանդ որ նա մեր հին մատենագրութեան մէջ մի առանձին, ինքնուրոյն տիպ է կազմում:

Մեր խօսքը փաւստոս Բիւղանդի մասին է: Այս անունով հասել է մեզ մի պատմական գրուածք, որի մէջ նկարագրուած են Հայաստանում կատարուած անցքերը՝ սկսած Տրդատ Թագաւորի մահից մինչև Արշակունեաց Թագաւորութեան երկու մասի բաժանուելը, պարսիկների և յոյների մէջ, կամ 337-ից մինչև մօտաւորապէս 390 թուականը: Այսպիսով ուրեմն այս գրուածքը հանդիսանում է շարունակութիւն Ագաթանգեղոսի պատմութեան: Այստեղ հանդէս են բերուած Սոսրով, Տիրան, Արշակ, Պապ, Վարազդատ և այլն թագաւորները, Վրթանէս, Յուսիկ, Մեծն Ներսէս և մի քանի աննշան կաթողիկոսներ, սրբակեաց և խեղկատակ եպիսկոպոսներ, անթիւ պատերազմներ, որոնց մէջ Մամիկոնեան նախարարները, իբրև զօրքի սպարապետներ՝ մի-մի անյաղթելի հերոսներ են հանդիսացած. երկար քարոզներ ու աղօթքներ, և սրանց կողքին այնպիսի անվայելուչ նկարագիրներ, որոնցից կը քաշուէին նատուրալիստ Զօլան ու իր հետևողները. հրաշքներ ու տեսիլքներ, մի և նոյն ժամանակ խայտառակ անեկզօտներ հոգեորականների կեանքից և ակնյայտի առասպելներ:

Տարօրինակ գիրք է, այն, փաւստոսի պատմութիւնը, և տարօրինակ են եղել կարծիքները նրա մասին: Ոչ մի հեղինակ մեզանում ենթակայ չէ եղել այնքան հակասական կարծիքների, այնքան ծայրայեղ արհամարհանքի ու չափազանց յարգանքի՝ որքան փաւստոսը: Այս կէտում նրա բախտին մասամբ նմանում է Սորենացու բախտը և յիրաւի այս երկու հեղինակները զարմանալի յարաբերութեան մէջ են միմեանց վերաբերութեամբ. կարծես զրանք հակոսնեաներ լինին, ճօճանակի խաղի

երկու ծայրերը. մէկը բարձրացած ժամանակ՝ միւսը անդունդն է իջնում, իսկ երբ սա է բարձրանում՝ միւսն է խորասուզւում: Այսպէս եղել է շարունակ աւելի քան 1400 տարի ժամանակ: Եւ սա հասկանալի էր: Այս երկու հեղինակները իրանց ճաշակով, զարգացումով, հայեացքներով, գրելու ոճով, դպրոցով կատարեալ հակապատկերներ են կազմում: Խորենացու ամբողջ գրքում չէ կարելի գտնել մի տող, որ գրական ոճի վայելչութեան դէմ մեղանշէր. նրա ամեն մի խօսքը չափուած ու կշռուած է, միշտ լուրջ, միշտ համապատասխան նիւթին. նրա լեզուն արուեստական է, ճաշակով մշակուած, սեղմ, ազդու.— այն-ինչ Փաւստոսի մօտ չափ ու կշիռ չը կայ խօսքի մի ռամիկ չաչանակ է նա, որ ոչ ոճ գիտէ, ոչ գրական վայելչութիւն. արուեստը բացակայում է. խօսքը ուղղակի սրտից թափւում է թղթի վրայ. նա գաղափար անգամ չունի ոճի և արուեստի մասին. նրա ոճը—լնութիւնն է, արուեստը՝ միամըտութիւնը: Խորենացին քննող, դատող հեղինակ է. նա ընտրութիւն է անում աղբիւրների մէջ, անհաւանական կամ կասկածելի դէպքերը զանց է անում կամ իր հասկացողութեամբ ուղղադրում է. տեղ չէ տալիս հրաշքների և առասպելների. շատ անգամ նա հէնց ինքը տարակոյս է յայտնում իր պատմածների ստուգութեան մասին, կամ ընդհակառակն՝ երաշխաւորում է նրանց ստուգութիւնը: Իսկ Փաւստոսի մէջ հետք անգամ չկայ այսպիսի քննադատող, ընտրող ոգու. նա ինչ որ գիտէ՝ ասում է, սուտ կամ ճշմարիտ, առասպել թէ իրողութիւն. ոչ մի բառով զանազանութիւն չէ դնում բուն պատմական իրողութեան և ակնյայտնի առասպելի մէջ. նա չունի նոյն-իսկ տարրական զարգացում, առանց որին չէ կարող գոյութիւն ունենալ քննական կարողութիւն: Խորենացին միշտ աշխատում է որոշել իր պատմած անցքերի ժամանակները, «որովհետև պատմութիւնը առանց ժամանակագրութեան չէ կարող ստոյգ լինել»: Այն-ինչ Փաւստոսը հասկացողութիւն չունի ժամանակագրութեան մասին. նրա պատմած անցքերը սովորաբար կատարւում են «այն ժամանակ» կամ «ապա»: Վերջապէս՝ Խորենացին դպրոցական կրթութիւն ստացած, գիտնական և գիտակցող պատմագիր է, իսկ Փաւստոսը՝ դպրոցական կրթութիւնից զուրկ, ժողովրդի ծոցից դուրս եկած մի առուղ է: Այս է պատճառը, որ Խորենացիով սքանչացող սերունդները չէին կարող յարգել ու լուրջ հեղինակ ճանաչել Փաւստոսին, և ընդհակառակն, այն բանասէրները, որոնք դանձեր են գտնում Փաւստոսի մէջ՝ չեն կարող հաւանել Խորենացուն, որի մէջ բացակայում են այդպիսի, Փաւստոսին յատուկ, գանձեր:

Այս հակոստնայ հեղինակներէց՝ Խորենացին տասնեակ դարերով տիրում էր հայոց պատմական գրականութեան մէջ, փայլում էր իբրև արեգակ, և Փաւստոսը բոլոր այս միջոցում արհամարհուած, մատնուած էր մոռացութեան: Եթէ մէկը համարձակէր, Խորենացուն թողած, Փաւստոսից պատմական նիւթ քաղել՝ դրանով իր վարկը կը կտորէր, համարուելով սոգէտ, անճաշակ և պատմական գիտութեան անտեղեակ: Դեռ հինգերորդ դարի վերջերում մի նշանաւոր հեղինակ, Փարպեցի Ղազարը, խիստ դատապարտում էր այս պատմութիւնը, գտնելով որ նա անհանճար, ափեղ ցփեղ բաներ է գուրս տալիս. և քանի որ չէր կարող ենթադրել, որ Բիւզանդիայում ուսում առած մի մարդ, ինչպէս էր Փաւստոսը, այնպիսի յիմար բաներ գրէր՝ ուստի կարծում էր, որ կամ ուրիշ անհարազատ ձեռքեր աղաւաղել են այդ պատմութիւնը, կամ մի սոգէտ մարդ է գրել նրան, բայց իր ազիտութիւնը քողարկելու համար՝ գրքի վրայ գրել է Փաւստոսի անունը, սրանով կամենալով նրա արժէքը բարձրացնել: Ինքը Խորենացին գտել է Փաւստոսի մէջ օգտակար նիւթեր և օգտուել է նրանցից, որչափ և ինչպէս հարկ է համարել, բայց Փաւստոսին իբրև աղբիւր յիշելը անյարմար է համարել. դրանով կարող էր իր պատմութեան արժէքը պակասել: Նոյնպէս են վարուել և յաջորդ դարերի հեղինակները: Դեռ նոյն-իսկ 18-րդ դարի վերջերում հոշակաւոր Չամչեանը «երազագատում» էր անուանում Փաւստոսին, և նրանից չօգտուեց իւր ընդարձակ Հայոց պատմութեան մէջ: Միայն տասնևիններորդ դարի կէսերին մօտ սկսում են երկչոտ և զգուշաւոր ձայներ բարձրանալ յօգուտ Փաւստոսի—«կարելի է օգտուել նրանից այն դէպքերում՝ երբ նա չէ հակասում Խորենացուն»: Այնուհետև Խորենացու աստղը հետզհետէ սկսեց խաւարել—և Փաւստոսինը սկսեց փայլել աւելի և աւելի պայծառ: Ութնական թուականներին պրօֆ. Պատկանեան նրան կոչեց «անհամեմատ մեր պատմագիրների մէջ և շատերից աւելի արդարախօս», (քարը չպրտելով Խորենացու վրայ). իսկ իննսնական թուականներին Ա. Գարագաշեան իր «Քննական պատմութեան» մէջ դէն ձգեց Խորենացուն և իբրև աղբիւր գործածեց Փաւստոսին: Ո՛րքան մեծ զանազանութիւն մի դարում միևնոյն գրուածքի գնահատութեան մէջ. սրչափ քննադատութեան հայեացքները փոխուեցին այդ մի դարում, որ անդունդ զլորուած հեղինակը երկինք բարձրացաւ: Բայց պէտք է ասել, որ բանասիրութիւնը ինչպէս առաջ՝ այնպէս և այժմ ծայրայեղ է իր գնահատութեան մէջ Խորենացու և Փաւստոսի վերաբերմամբ, և դեռ իսկական հայեացք չէ կազմել այս երկու հեղինակի մա-

սին, որով երկուսն էլ իրանց արժանաւոր զիրքը կը գրաւեն մեր գրականութեան մէջ: Իսկապէս՝ այս հեղինակները, փոխանակ հակոտնեայ, միմեանց ոչնչացնող նկատուելու՝ պէտք է ճանաչուին իբրև միմեանց լրացնող, իւրաքանչիւրը անփոխարինելի իր տեղում: Ինչպէս իբրև գեղարուեստական պատմիչ և ստեղծող ազգային պատմութեան, միւսը իբրև հաւաքիչ ժողովրդական աւանդութիւնների, արտայայտիչ ժողովրդի հայեացքներին ու բարքերին:

Ինչպէս մեծ է զանազանութիւնը Փաւստոսի պատմութեան արժէքի գնահատութեան մէջ հին և նոր ժամանակ՝ նոյնպէս շատ տարբեր են եղել կարծիքները և հեղինակի անձնաւորութեան մասին: Ո՞վ է այդ հեղինակը, ի՞նչ ազգից է, ի՞նչ լեզուով է գրել և երբ—այս հարցերի վերաբերութեամբ էլ կատարեալ յեղափոխութիւն առաջացաւ գրականութեամբ գրադուող մարերի մէջ՝ չնորհիւ քննադատութեան: Տիրող ընդհանուր կարծիքն էր հին ժամանակից ի վեր, թէ Փաւստոսը, որ կոչոււմ է Բիւզանդ կամ Բիւզանդացի՝ յոյն է, Բիւզանդիայում (Կոստանդնուպոլսի հին անունն է) ծնած, կամ այնտեղ ուսած. նա ապրել է չորրորդ դարում, ուրեմն և գրել է յունարէն լեզուով. այնպէս որ մեզ հասած պատմութիւնը պէտք է լինի թարգմանութիւն յունարէնից: Գրքի մէջ յիշուի շատ ապացոյցներ կան այս կարծիքը հաստատող. այնտեղ մի եպիսկոպոս կայ Փաւստոս անունով, որ եղել է Ներսէս մեծին սարկաւազ ձեռնադրողը և նրա մօտիկ գործակիցը, և յիշուած է որ այս Փաւստոսը յոյն էր: Մի ուրիշ տեղ բառացի գրուած է, թէ մեծ պատմագիր Փաւստոս Բիւզանդը յունաց ժամանակագիր էր: Ուրեմն շատ հաւանական էր եզրակացնել, թէ պատմագիր Փաւստոս Բիւզանդը հէնց այն Փաւստոս եպիսկոպոսն է, որ յիշուած է պատմութեան մէջ. իսկ այս եպիսկոպոսը, ուրեմն գրքի հեղինակը, անշուշտ մեռած պէտք է լինի չորրորդ դարում, երբ դեռ հայերէն գրերը չէին գտնուած. այնպէս որ նա պէտք է գրէր իր պատմութիւնը յունարէն լեզուով: Սրա վրայ իբրև կողմնակի փաստ աւելացնում էին և այն, թէ այս հեղինակը առում է հայերին և իբրև մի օտար յոյն է խօսում և ոչ իբրև մի հայ մարդ: Այս կարծիքները ներկայումս թողնուած են և նոյն-իսկ օտարոտի են թւում: Այժմ ճանաչուած է, որ այդ գիրքը թարգմանութիւն չէ, այլ գրուած է հայերէն լեզուով, իբրև ինքնուրոյն, սկզբնագիր աշխատութիւն. հեղինակը անշուշտ հայ է եղել, իսկ գրութեամբ ժամանակն է՝ մօտաւորապէս հինգերորդ դարի կեսերը, Ագաթանգեղոսի պատմութեան գրուելուց յետոյ: Իսկ թէ ո՞վ է այդ հայ հեղինակը՝ յայտնի չէ, գուցէ երբէք էլ չիմացուի. այսքանը ան-

տարակուսելի է, որ դա՛ գրքի մէջ յիշուած փաւստոս եպիսկոպոսը չէ: Հաւանական է, որ այդ հեղինակը ս. Մեսրոպի աշակերտներից մէկը լինի, Հայաստանի նորարաց դպրոցների պտուղը, Արարատեան նահանգի ծնունդ, որ իր բնական հակումով՝ աւելի սէր է ունեցել ժողովրդական զրոյցների քան գիտական ու աստուածաբանական, միտք յոգնեցնող զբաղմունքների: Գրելով իր աշխատութիւնը՝ նրա վրայ գրել է փաւստոս եպիսկոպոսի անունը՝ որպէս զի այդ անունով վաւերականութիւն ստանայ իր գրուածքը, իբրև չորրորդ դարում ապրող, ներսէս կաթողիկոսի գործակից, յոյն նշանաւոր եպիսկոպոսի աշխատութիւն: Մենք տեսնք, որ Ագաթանգեղոսի հայ հեղինակն էլ նոյնպէս է վարուել, իր աշխատութիւնը վերագրելով հոռմայեցի Ագաթանգեղոսին: Ուրեմն նոյնպիսի գրական կեղծիք կատարել է և փաւստոսի պատմութեան հայ հեղինակը, որ ժամանակով շատ մօտ, գուցէ և լաւ ծանօթ է եղել Ագաթանգեղոսի հեղինակին:

Իայց ինչ փաստերի հիման վրայ քննադատութիւնը հասաւ այս եզրակացութեան, որ միանգամայն հակառակ է գրքի մէջ եղած յայտնի վկայութիւններին՝ թէ փաւստոս Բիւզանդը յոյն հեղինակ է:—Քննադատութիւնը, ասացինք անցեալ անգամ, անհաւատ է. մինչև չը քննէ, չը ստուգէ՝ ոչինչ չի ընդունի: Փաւստոսի յոյն լինելը վկայուած է գրքի մէջ, բայց այս վկայութիւնը չէ հաստատուում գրքի բովանդակութեամբ ու ոգով. ընդհակառակը, գիրքը տալիս է մի շարք այնպիսի փաստեր, որոնք բոլորը միանում են հերքելու այդ վկայութիւնը և հաստատելու, թէ նրա հեղինակը հինգերորդ դարի կէսերում գրող մի հայ է: Համառօտ յիշենք մի քանի այսպիսի փաստեր. —Հեղինակը օգտուում է բաւական թուով հայերէն գրքերից, օրինակ՝ հայերէն Աստուածաշնչից, Կորինթից, Ագաթանգեղոսից, Ժամագրքից և այլն. սրանք բոլորը գրուեցին հինգերորդ դարի առաջին կէսում:—Տեսիլքների, անէծքների և օրհնութիւնների մէջ ակնարկութիւններ են լինում զանազան անցքերի վրայ, օրինակ՝ գրերի գիւտի, Արշակունեաց թագաւորութեան վերջանալու, կրօնական հալածանքների և այլն. սրանք էլ բոլորը հինգերորդ դարի առաջին կիսում կատարուած անցքեր են, որոնց ուրեմն ծանօթ է եղել հեղինակը:—Անթիւ հրաշքներ ու առասպելներ կան գրքի մէջ, որոնք չէին կարող գրուել ժամանակակից հեղինակի կողմից, այլ ակներև է, որ գրանք վերցուած են ժողովրդի բերանում պտտուող աւանդութիւններից: Եթէ հեղինակը լինէր յոյն փաւստոս եպիսկոպոսը, կարող էր նա իր ժամանակակից, իր գուցէ ընկերոջ մասին գրել այսպիսի բաներ.

«Սա (Դանիէլ Կալսկոպոսը) զարմանալի մարդ էր և մեծամեծ հրաշքներ էր գործում: Կօշկով քալելով ման էր գալիս գետի ջրերի վրայ, և ոտները չէին թրջւում: Զմեռ ժամանակ, երբ խոր ձիւնը կուտուած գիղուած էր լինում՝ լեռների վրայ, և նա այգալիս լեռներով մի տեղ գնալու էր լինում՝ յանկարծ ձիւնը անհետանում էր, գետինը ցամաքում նրա առաջ: Մի հետու տեղ գնալիս՝ կարծես փայլակի նման թռչում էր և անմիջապէս ուղած տեղումն էր գտնւում: Մեռելներ էր յարուցանում և զեռ սրանցից էլ աւելի մեծ հրաշքներ էր գործում»: Եւ այսպիսի պատմութիւններ որչափ ուզէք կան Փաւստոսի գրքում. ժամականակից մարդը ընդունակ չէ այսպիսի բաներ գրելու:—Ժամանակակից հեղինակի առաջին յատկութիւնը պէտք է լինի ճիշտ ժամանակագրութիւն. իսկ Փաւստոսի պատմութեան մէջ զոյու-թիւն չունի ժամանակագրութիւն. նրա մօտ, ինչպէս ասացինք, անցքերը կատարւում են «այն ժամանակ»: Իսկ երբ նրա մէջ պատահաբար յիշուած մի քանի տարիները ի նկատի ենք առնում, հաշիւներ ենք անում՝ դուրս է գալիս մի անասելի խառնակութիւն. միմեանց հետ կոխ են մղում երկու թագաւոր՝ որոնցից մէկը միւսի թագաւորելուց 60 տարի առաջ մեռած է եղել. մի ուրիշը, որ թագաւորել է ամենաշատը 18 տարի՝ յանկարծ յիսունից աւելի տարի թագաւորած է դուրս գալիս: Այսպիսի անտեղութիւնները հասկանալի են դառնում միայն այն դէպքում, եթէ ենթադրենք, որ հեղինակը լսել է աւանդաբար պատմուած անցքերը, լսել է թագաւորների անուններ, և չփոթել է միմեանց հետ: Ժողովրդական աւանդութիւնները, ինչպէս յայտնի է, ժամանակագրական հաշիւներ, անուններ չեն սիրում. նրանց հետաքրքրում է անցքը:

Այս փաստերի կողքին կայ մի ուրիշը, որ գուցէ ամենից կարևորն է՝ հեղինակի ազգութիւնը որոշելու խնդրում—այդ գրքի մէջ տիրապետող ոգին է, ազգասիրական տենդենցիան: Յիշեցինք վերը, թէ ոմանք կարծել են, իբր թէ հեղինակը աւտում է հայերին, ուրեմն օտարազգի, յոյն է: Սա մի մոլորութիւն է, որի դէմ հեղինակի ոսկորներն անգամ կը բողբոջէին: Այս մոլորութեան աւիթ է տուել հեղինակի մի յանդիմանութիւնը ուղղուած հայերին: «Սկզբից ի վեր, ասում է նա, երբ հայերը քրքիստոնէութիւն ընդունեցին՝ լոկ իբրև մի ծէս յանձն առան, հարկից ստիպուած, և ոչ թէ ընդունեցին ջերմեռանդ հաւատով: Որոնք որ յուճարէն կամ ասորերէն ուսում ունէին՝ էլի փոքր ի շատէ հասկանում էին. իսկ որոնք որ անուս էին, նրանց գլխին թէկուզ գիշեր ցերեկ յորդառատ անձրևի նը-

ման խրատ թափելին՝ նրանք մի կաթիլի չափ անգամ չէին հասկանայ: Նրանց խելքը՝ իրանց հեթանոսական սովորութիւնների ու երգերի հետ էր: Սրանից աւելի ճշմարիտ խոստովանութիւն չէր կարող անել հեղինակը: Յիրաւի, ի՞նչ հաւատ, ի՞նչ ջերմնաւանդութիւն և գիտակցութիւն կարելի է սպասել մի տրգէտ, խառնիճաղանճ ամբոխից, որին թագաւորի հրամանով, ոչ խարների հօտի նման, քշում, գետն են ածում ու մկրտում: Ո՞վ նրանց հասկացրեց քրիստոնէական կրօնի նշանակութիւնը, ո՞վ յորդորեց, համոզեց և ապա ընդունեց նոր կրօնի գիրիը: Մհա այսպիսի ճշմարիտ, ըստ ինքեան հասկանալի մի իրողութիւն ասելու պատճառով հեղինակը համարուել է հայատեաց, ուրեմն և օտարազգի:

Այն-ինչ այս հեղինակը հայասէր է. ոչ, այս խօսքը չէ արտայայտում հեղինակի ինչութիւնը. նա կոյր, մոլեռանդ հայապաշտ է: Բոլոր հայասէրները հին և նոր ժամանակ, սկսած դարգացած, գիտակցող մարդկանցից մինչև մեր ժամանակի թըթու ազգասէրները, չեն կարող համեմատուել այս հեղինակի հետ նրա աչքում՝ հայը անյաղթելի է. հայ զօրավարը՝ հերոս, հայ զինուորը՝ տիրասէր, կեանքը յետ դրած իր թագաւորի, իր աշխարհի և եկեղեցու համար, հայ թագաւորը՝ հզօր և նուիրական անձնաւորութիւն: Միլիոնաւոր զօրքերով թշնամին դիմում է հայի վրայ. հայ սպարապետը մի քառասուն հազար զօրով դուրս է գալիս նրանց դէմ և մինչև վերջի մարդը կոտորում է նրանց. նորից են գալիս միլիոններ, և նորից ընաչինջ լինում: Անթիւ պատերազմներ են յիշուած պատմութեան մէջ, և ամեն անգամ հայերը յաղթել, կոտորել են թշնամիներին: Պատերազմի դաշտում հայը երբէք չէ կարող յաղթուել—անհաւան հայկացքը, որ տիրում է ամբողջ գրքում և հեղինակի դաւանանքն է կազմում:

Այս պարծենկոտ ինքնախաբէութեան հետ համեմատենք իրողութիւնը, դարձեալ նոյն հեղինակից վերցրած նիւթերի հիման վրայ: Տեսնում ենք, որ մեր Արշակունի թագաւորները, Տրդատից յետոյ, թոյլ, անզօր, հեղինակութիւնից զուրկ իշխողներ են եղել, աւելի վաստալներ յունաց կայսրի և պարսից թագաւորի, քան ինքնակալ, ազատ պետեր: Նրանք այնքան ժամանակ կրում էին թագաւոր տիտղոսը և թագաւորում էին՝ որքան այդ հաճելի էր դրացի հզօր պարսիկներին կամ յոյներին. սրանք էին, որ միմեանց մէջ համաձայնութիւն կայացնելով կամ միմեանց հակառակ՝ Հայաստանի վրայ թագաւոր էին նշանակում, կամ դահից ձգում, և նրանց բախտի հետ խաղում էին՝ ինչպէս մի խոնարհ ստորագրեալի: Մի պարսիկ իշխան

3000 զօրքով «հիւր է դալիս» Տիրան թագաւորի մօտ, և նրան առանց այլեայլութեան բռնում, հէնց Հայաստանի մէջ նրա աչքերը դադում-կուրացնում (պարսիկների սիրած պատիժը հին և նոր ժամանակ) և շղթայակապ տանում Պարսկաստան։ Մի ուրիշ թագաւորի (Պապ), յոյն զօրավարը, Հայաստանում, ընթրիքի է հրաւիրում և հարբած ժամանակ դաւաճանութեամբ սպանել տալիս։ Եւ ոչ միայն սնպատիժ է մնում նրա այս ոճրագործութիւնը, այլ հայոց նախարարները այս առիթով որոշում են յունաց հպատակութեան տակ մտնել։—Աւելի զարմանալի է երրորդ թագաւորի բախտը։ Արշակը 30—34 տարի անդադար պատերազմ է մղում պարսից Շապուհ թագաւորի դէմ. յատկապէս յիշուած են 25 պատերազմ, որոնց մէջ պարսիկները երբևէ 4—5 միլիոն զօրքով են եկել հայոց վրայ, անուանի զօրավարների առաջնորդութեամբ։ Հայոց սպարապետը ամեն անգամ կոտորել է նրանց, այնպէս որ փախչող ազատուող չէ եղել։ Այս պատերազմներում պարսիկներից կոտորուել են մօտ քսանհեծօթը միլիոն մարդ։ Այսպիսի կոտորածներից յետոյ Պարսկաստանում հաւանօրէն ոչ միայն մի մարդ այլևս չէր մնայ, այլ գուցէ ձի և շուն էլ չը մնար։ Բայց զարմանքն էլ հէնց այն է, որ այսքան յաղթութիւններ անելուց յետոյ հայերը ձանձրանում են կռուից. իսկ Շապուհը Արշակին հրաւիրում է իր մօտ. Արշակը ճարահատեալ դնում է Պարսկաստան և շղթայակապ բանտ է ձգւում, որտեղ և մեռնում է։

Ի՞նչպէս կարելի է բացատրել այս պատմական անհեթեթութիւնները՝ եթէ ոչ զարձեալ ժողովրդական աւանդութեամբ։ Ժամանակակից հեղինակը այսպիսի այլանդակութիւններ գրելուց կ'ամաչէր. օտարազգի հեղինակը այսպիսի հէքեաթների վրայ կը ծիծաղէր. միայն հայ ժողովուրդը, բնական ազգային պատուասիրութեամբ, կարող էր տխուր իրականութիւնը զարդարել երևակայական փառաւորութեամբ՝ արտաբերել փրկելու, ազգային կոտորութիւն չը զգալու համար կարծես մի ձեւրունի, արդէն թագաւորութիւնը վերջանալուց յետոյ, երբ հին թագաւորների միայն յիշատակն էր մնացել պատմելիս լինի պարծենալով. «Օ, երբ մեր հայերը թագաւորութիւն ունէին, ո՞վ կարող էր նրանց յաղթել. մեր թագաւորների նման հզօր թագաւորներ չեն եղել աշխարհում. նրանց սուրը կտրուկ էր, նրանք թշնամիների գլուխները այնպէս էին թոցնում, ինչպէս սօխի գլուխներ»։ «Հապա ի՞նչպէս է որ նրանց կուրացնում, բանտ էին դնում հոռմներն ու պարսիկները»,—կասկածելով հարցնում են ունիղիբները.—«է՛, որդիք, մեր նախարարներն անմիաբան էին. մէկ էլ որ հոռմներն ու պարսիկները խօ չէին յաղթում

մեր հղօր թագաւորներին, այլ խարում էին, իրանց թալակը ձգում, կամ թէ չէ՝ դաւաճանութեամբ սպանում: Կարծես հէնց այսպիսի մի ծերունի, ժողովրդի մարդ է և մեր հեղինակը, որ ամենայն լրջութեամբ ու հաւատով պատմում է հին-հին դարուց հայ թագաւորների փառքերն ու դժբախտութիւնները:

Այս տեսակէտից էլ Փաւստոսի անունը կրող գրուածքը անդնահատելի գործ է մեր հին մատենագրութեան մէջ: Կարևորը այն չէ, թէ՛ որչափ նրա աւանդած այս կամ անցքը ճշմարիտ է իբրև պատմութիւն: Անտարակոյս, շատ ստոյգ պատմական տեղեկութիւններ է պահպանել նա. բայց բանասիրութիւնը գրանց ընդունում է միայն այն գէպքում, եթէ ուրիշ ազդային կամ օտարազգի աղբիւրներից ստուգում է նրանց ճշմարտութիւնը. այլապէս, միայն Փաւստոսի վկայութեամբ, լուրջ հեղինակը չէ կարող ընդունել որ և է պատմուածք՝ իբրև ստոյգ իրողութիւն: Կարևորը Փաւստոսի մէջ—այդ ժողովրդական աւանդութիւններն են, որոնք միամիտ, կենդանի լեզուով պատմուած՝ մեր առաջ բաց են անում մեր հին նախնեաց սիրան ու միտքը, բարքերն ու հայեացքները: Այս կողմից Փաւստոսը յիշուի «անհամեմատ» է մեր պատմագիրների մէջ, որովհետև իր նմանը չունի:

Իերենք մի քանի էպիզօդներ այս հեղինակից, որոնց մէջ նկարագրուած են հին հայոց կեանքի ու սովորութիւնների մի քանի կողմերը:

Ահա մի պատկեր՝ թագաւորի ու կաթողիկոսի յարաբերութեան:

Արշակ թագաւորի եղբօրորդի Տիրիթը սիրահարում է իր հօրեղբօրորդի Գնէլի կնոջ, գեղեցկուհի Փառանձեմին, և սրան ճանկ գցելու նպատակով քսութիւն է անում թագաւորի մօտ, իբր թէ Գնէլը պատրաստում է նրա դէմ ապստամբել և ինքը թագաւորել: Թագաւորը իր մի հաւատարմին ուղարկում է Գնէլի մօտ, որ խարխիւլ բերէ թագաւորի բանակը: Միամիտ, ոչ մի բանից չը կասկածող Գնէլը գեղեցկուհի Փառանձեմի հետ շտապ-շտապ գալիս է բանակը: Թագաւորին իմաց են տալիս, և նա անմիջապէս հրամայում է դահճին, որ գնայ Գնէլին բռնէ, տանի բանակից դուրս, գլխատէ: Դահիճները գալիս, ձիից վէր են ձգում Գնէլին, ձեռները կապտում և տանում են սպանելու տեղը: Զահէլ կինը այս աղէտը տեսնելով՝ վազում է կեղեցիկ— առաւօտեան ժամասացութիւն էր կատարում, ներսէս Մեծ կաթողիկոսի ներկայութեամբ— և պաղատում է կաթողիկոսին. «Ծնւտ հասիր, սուրբ հայրապետ. ահա ամուսնիս անմեղ տեղը մորթում են»: Կաթողիկոսը դադարեցնում է ժամերգութիւնը,

չտապով գնում, ներս է ընկնում թագաւորի վրանը: Տեսնում է Արշակ նրա գալը, հասկանում է որ ձեռքիցը պրծնելիք չու- նի—գիմում է խորամանկութեան. գլուխը անկիւնը խցկած, սամուրենին գլխին գցած՝ սուտ քուն է լինում, որ կաթողի- կոսի ասածները չը լսէ: Կաթողիկոսը բաց է անում բերանը, սկսում է յորդորել, համոզել «քնած» թագաւորին, որ չարագոր- ծութիւն չանէ, անմեղ արիւն, այն էլ հարագատ ազգականի արիւն չը թափէ: յիշեցնում է Քրիստոսի պատուիրանները, ա- պագայի սպանալիքները... Թագաւորը, երեսը ծածկած, զահեղ վրայ տաղ է արել մնացել, ոչ շարժում է, ոչ ձէն-ծպտուն հանում... Վերջապէս ներս է մտնում դահճապետը և զեկուցա- նում, թէ թագաւորի հրամանը կատարուեց: Ինքը Գնէլին տա- րաւ նշանակած տեղն ու սպանեց: Այն ժամանակ կաթողիկոսը նորից բաց է անում բերանը և սկսում է ամեն տեսակ անէծք- ներ թափել թագաւորի և նրա ազգատոհմի գլխին: Սիրտը հո- վացնելուց յետոյ հեռանում է բանակից և այնուհետեւ էլ չէ կա- մնում տեսնել թագաւորի երեսը: Դժբախտաբար հեղինակը չէ պատմում, թէ դահճի ներս մտնելուց յետոյ թագաւորը աչքը բացեց, թէ անէծքի ժամանակ էլ շարունակում էր սուտ քուն լինել:

Ահա այս անցքի երկրորդ գործողութիւնը, որ հասկացո- ղութիւն է տալիս այն ժամանակուայ բարբերի ու սովորու- թիւնների մասին:

Սպանութեան տեղումն է: Թագաւորը հրամայել է հանդի- սաւոր կոծ ու սուգ անել սպանուած «արշակունի մեծ սեպուն» Գնէլի վրայ. պատուիրել է, որ բոլոր բանակի մարդիկ գան ներկայ գտնուին և մասնակցեն սուգին: Ինքն էլ եկել, նստել է դիակին շատ մօտիկ, ան ու վիշ անելով լաց է լինում և ըս- տիպում է որ ողբն ու կոծը սաստկացնեն: Գեղեցիլունի Փա- ոռանձեմը, իսկական սգաւորը, մազերը յետ արած, շորերը ճը- դած, կուրծքը մերկ՝ աղէկաւոր ձայնով ողբում է իր սիրելիի մահը և իր խոր վշտով լացացնում է շուրջն և զողներին: Իսկ Արշակ իր կեղծ լացի մէջ, աչքը սնկած զեղեցիկ կնոջ՝ բոր- բորում է ցանկութեամբ և վճռում է նրան կին առնել—Սը- զաւորների մէջ է և քսու Տիրիթը: Սա էլ ի հարկէ տեսնում է փառանձեմին այնպէս մերկանդամ կոծելիս: Կիրքը այն աստի- ճան է բորբոքում նրա մէջ, որ հէնց նոյն տեղում մարդ է ու- դարկում ողբացող թշուառ կնոջ մօտ, թէ «այդքան էլ մի շար- շարուր, ես քո մարդուց աւելի լաւն եմ. քեզ սիրում եմ. ես մարդուդ սպանել տուի, որպէս զի քեզ կին առնեմ»: Ճիշ է պր- ձակում կինը, մազերը փետում, աղաղակում. «Իմ պատճառով

սպանուեց մարդս. իմ վրայ աչք էր դրել Տիրիթը, դրա համար մարդուս սպանել տուեց»։ Ինքը դառնում է ողբի մայր (ողբացող խմբի պարագլուխ և ողբի խօսքերն ասող) և սկսում է երգել Տիրիթի սէրը, քսութիւնը, ամուսնու սպանուելը և այլն, և լալկան կանայք ձայնակցում ու ողբակցում են նրան, այնպէս որ խայտառակ լուրը տարածոււմ է և հասնում թագաւորի ականջը...

Բաց ենք թողնում երրորդ գործողութիւնը—Փառանձեմը Արշակ թագաւորի կին դարձած,—որ հետաքրքրական տեղեկութիւններ է մատակարարում արքունական տան ընտանեկան կեանքից։ Բայց մեր բերած երկու կրճատ տեսարաններն անգամ սրբան ուսանելի նիւթեր են պարունակում՝ մեր ալեոք հնութիւնը ճանաչելու համար։ Տեսնում ենք, որ քաղաքական և հոգեոր իշխանութիւնների մէջ պարտքի և իրաւունքի սահման չէ որոշուած. դատաստան չը կայ. թագաւորը մահուան վճիռ է արձակում ոչ թէ տիրաբար, այլ ինչպէս մի եղեռնագործ, գաղտնապէս. նա կեղծ լացով, հանդիսաւոր սգով աշխատում է ցոյց տալ, թէ ինքը մասնակից չէ սպանութեան։ Պատուի ճանաչումը բացակայում է, անասնական կիրքը տիրում է սանձարձակ. բարոյական զգացմունք չը կայ. ամենազղուելի քսութիւն է կատարուում մօտ ազգականի արիւնը թափելու և նրա կնոջ տիրանալու համար։ Ամուսնութեան օրէնքներ չեն որոշուած կամ չեն յարգուում. թագաւորն առնում է իր եղբորորդու կինը (երրորդ աստիճան ինսամեկան ազգականութեան) *) և միաժամանակ երկու կին ունի։ Աւելացնենք սրանց վրայ սգի ծէսը—զգեստը պատանել, հերարձակ ճշալ, մեռելի շուրջը սպտել, մեռելի ողբ երգել, ողբի մայր ու ձայնարկու և այլն—և կը տեսնենք, որ Փաւստոսի այս մի գլուխը սրչափ կարևոր և բազմա-

*) Ազգախառնութեան մի ուրիշ դէպք էլ կայ Փաւստոսի մէջ. Յուսիկ (կաթողիկոսը) ամուսնանում է Տիրանի աղջկայ հետ, իսկ այս ամուսնութիւնից ծնուած Յթանաղինէսը կին է առնում Տիրանի քրոջը, այսինքն՝ ամուսնանում է իր պապի քրոջ հետ. (չորրորդ աստիճան արեւակցական ազգականութեան)։—Ուսանելի է մանաւանդ ամուսնի Յուսիկի ամուսնութեան հանգամանքը։ Նրան ամուսնացնում են բռնի, հազիւ առանկելու տարեկան հասակում. առաջին անգամ կնոջ մօտ զնալուց լեռոյ նա անդամադրելի զղուանք է զգում դէպի սեռական չարաբերութիւնը... այդ լինում է առաջին և վերջին անգամը նրա կեանքում։ Անոջ վիշտն ու թախանձանքները, աներոջ միջամտութիւնը, սպառնալիքները չեն ազդում։ Կինը վերջապէս մեռնում է հալումաշ, զժբակտ ամուսնութեան զժոխքի մէջ. իսկ ինքը Յուսիկը մեռնում է աներոջ ձեռից... Ինչպիսի դրամա։

տեսակ նիւթեր է պարունակում՝ մեր նախնեաց բարոյական, քաղաքական և ընտանեկան կեանքը ուսումնասիրելու համար:

Անա և մի պատկեր Փաւստոսից, որտեղ երևում է հայ ժողովրդի կոյր հաւատը դէպի հայրենի հողի և ջրի հրաշագործ գորութիւնը:

Արշակ թագաւորը գերի է Պարսկաստանում: Շապուհ թագաւորը չը գիտէ ինչպէս վարուի նրա հետ: Նա հմայոյցներին խորհրդի է կանչում և յայտնում է, թէ ինքը սիրել է Արշակին իբրև որդի, կամեցել է իր աղջիկը նրան կին տալ, բայց Արշակը միշտ մերժել է իր սէրը և անդադար կռիւներով հանգիստ չէ տուել պարսիկներին: Այժմ նա իր ստրով ելել եկել է Պարսկաստան և շատ խոնարհել է: Ինքը յօծարութեամբ նրան էլի Հայաստան կ'ուղարկէր իբրև թագաւոր, բայց վստահ չէ որ նա հայրենիք վերագառնալուց յետոյ էլ խոնարհ ու հպատակ կը մնայ: Ինչպէս իմանալ այդ: Հմայոյցների խորհրդով Շապուհը ուղտեր է ուղարկում Հայաստան, Հայաստանի հող ու ջուր բերելու: Բերած հողն ածում է իր վրանի յատակի կէտում, ջուրը ցանում է վրան, իսկ յատակի միւս կէտը թողնում է բնական, պարսկական հողով: Արշակը այս մասին ոչինչ չը գիտէ: Ապա Շապուհը Արշակի թեր մտած՝ խօսակցելով մտնում է հմայութեան վրանը: Նախ ման են գալիս բնական յատակի վրայ: Շապուհը հարցնում է. «Արշակ թագաւոր, ես այնքան քեզ սիրել եմ, որդուս տեղ եմ համարել, աղջիկս կամեցել եմ քեզ կին տալ. ինչու դու ինձ հակառակ էիր վարում, թշնամութիւն աւնում հետս»: Արշակը պատասխանում է. «Մեղայ քեզ, տէր իմ թագաւոր, ես քո ստրի փոշին եմ. ինձ խաբեցին, քեզ հետ թշնամացրին. ես յանցաւոր եմ քո առաջ. կեանքս քո ձեռին է, արն ինչ որ կամենում ես»: Պօսակցութիւնը շարունակելով Շուպուհը Արշակին տանում է վրանի հայայտակ կէտի վրայ: Հէնց որ այս հողի վրայ ստր է դնում Արշակը՝ խորիստ գոչում է. «Հեռու ինձանից, ծառայ շարագործ, որ քո տիրոջ վրայ տէր ես դարձել. ես իմ նախնեաց վրէժը կը հանեմ քեզանից և քո որդիներից. դուք մեր հպատակներն էք, որ մեր գահը խլել էք, և ես...»: Շապուհը տանում է նրան պարսկական հողի վրայ.— Արշակը սկսում է ողբալ իր արածի վրայ, Շապուհի ոտներն է ընկնում, զղջում, ներողութիւն խնդրում: Շապուհը բերում է նրան հայկական հողի վրայ.— Արշակը աւելի խիստ խօսքերով սկսում է խորխտալ նրա դէմ: Առաւօտից երեկոյ փորձ է աւնում— և շարունակ նոյն երեոյթը:

Երեկոյ է, թագաւորի ընթրիքի ժամանակ. ներկայ են բազմաթիւ նախարարներ, բարձր պալատականներ: Արշակի հա-

մար տեղ են պատրաստել ոչ թէ Շապուհի կողքին, հէնց նրա տախտի վրայ, ինչպէս սովորութիւն էր, այլ շատ ներքեւ, ուրիշ երկրորդական իշխաններից ցած, և նրա տեղի յատակում դարձեալ փռել են Հայաստանի հողից: Բերում բազմեցնում են Արշակին այդ հմայուած տեղում: Քիչ ժամանակ նստում է նա ուռած, վրուած. յանկարծ ոտքի է կանգնում և գոռում Շապուհի վրայ. «Վեր կաց տեղիցդ. դա իմ տեղն է. ևս պէտք է այդտեղ բազմեմ. իմ ազգի տեղն այդ է եղել: Մէկ որ իմ աշխարհը դառնամ՝ տես ինչ կը բերեմ քո գլխին».—Անմիջապէս շղթայ են ձգում Արշակի վիզը, ձեռքերն ու ոտքերը և ցմահ բանտարկութեան ենթարկում Անյուշ բերդում:

Այս առասպելի մէջ՝ Արշակը գերի է, օտար աշխարհում. նա օտար հողի վրայ կանգնած ժամանակ ստրկանում է, խոնարհուում. բայց հէնց որ միայն ոտքով շօշափում է հայրենի հողը՝ առիւծ է դառնում, գոռոզանում, Շապուհի գէմ խրոխտում: Հիմա փոխադրենք այս Արշակին բուն Հայաստան, իր ազգակիցների մէջ, իբրև թագաւոր, և այն ժամանակ մեզ համար բոլորովին հասկանալի կը դառնան նրա երկարատև յաղթական կռիւները պարսիկների հետ, սրանցից միլիոնաւոր զինուորներ կտորելը, նրա անպարտելութիւնը: Այս առասպելը և երեսնամեայ պատերազմները միմեանց ամբողջացնում են և անխզելի կերպով կապուած են իրար հետ, իբրև մի և նոյն գաղափարի և հաւատի արտայայտութիւնը: Իբրև պատմական ազդիւր՝ նրանք արժէք չունին, և մեծ միամտութիւն կը լինէր՝ նրանց հալած իւրի տեղ ընդունել և իբրև պատմութիւն տալը. իսկ իբրև ազգագրական նիւթ, իբրև բանաստեղծութիւն, որի մէջ ցոլանում է ժողովրդի սէրը գէպի հայրենի հողն ու ջուրը, նրա հայեացքը պանդուխտի ու իր օջախում ապրող մարդու հոգեկան դրութեան անհուն տարբերութեան մասին՝ նրանք անգնահատելի պերճախօս նիւթեր են: Հոգ չէ, որ նրանք, ինչպէս և ուրիշ շատ էպիզոզներ Փաւստոսի մէջ՝ իրողութիւն չեն, այլ հնարովի են. այս հանգամանքն, ընդհակառակն, աւելի արժէք է տալիս նրանց.—նրանք ժողովրդի ստեղծագործութիւններն են, որոնց տարրերը կազմում են ժողովրդի բարոյական, կրօնական, քաղաքական հայեացքներն ու հաւատալիքները, ժողովրդի ամբողջ աշխարհայեցողութիւնը:

Այսպիսի նիւթեր շատ և շատ է մատակարարում փաւստոսի անունը կրող մատենագրական գործը: Հայ ժողովրդի հարազատ որդին *), նրա հայեացքներով ու ճաշակով ամբողջապէս

*) Եթէ դատենք հեղինակի մանրապատում, բազմաբառ ոճից և

տողորուած՝ անկեղծ հաւատով պատմում է անցեալի զրոյցները իր անարուեստ, անկանոն, բայց բնական, հարուստ, կենդանի, նկարագրական լեզուով: Նրա գրուածքը ազգային անմշակ վիպասանութեան համն ու հոտն է տալիս և գրաւում է իր միամիտ, վիպասանական ոճի ազովը: Նա հայոց գրականութեան Բօստաննամէն է, որ դժբախտաբար չունեցաւ իր մշակող—յաջորդ Ֆիրզուսին, չունեցաւ նոյն-իսկ իր ուսումնասիրողը մինչև այսօր: Դարերով մոռացութեան և արհամարհանքի մատնուած այս ազգային աշուղ-պատմիչը տասնիններորդ դարի երկրորդ կէսից սկսեց բարձրանալ ու գնահատուել, բայց դարձեալ ոչ ճիշտ հայեցակէտով: Նրա գլխաւոր արժանաւորութիւնը, իբրև ժողովրդական աւանդութիւնների և ստեղծագործութեան ժողովողի, դեռ բաւականաչափ չէ ճանաչուած: Այս պատճառով մենք փոքր ինչ երկար կանգ առանք՝ Փաւստոսի այս կողմը լուսարանելու վրայ:

Իբրև բանաստեղծ՝ Փաւստոսը, իսկապէս նրա բերանով խօսող ժողովուրդն, ունի իր իդէալները և հերոսները, որոնք մարմնացնում են այդ իդէալները: Հերոսները երկու խմբի են բաժանուած—հոգևորական և աշխարհական: Առաջինները (Վրթանէս, Յուսիկ, Սաղ, Դանիէլ, բայց գլխաւորապէս Ներսէս Մեծ) փայլում են հոգեկան առաքինութիւններով ու անբիծ վարքով. հօտի բարօրութեան համար նրանք ճգնում են անդադար, խնամում, յորդորում, բարեգործական հաստատութիւններ հիմնում. աղքատներին օգնութեան ձեռք են մեկնում, մեծամեծների անառակութիւնը յանդիմանում. չեն քաշում թագաւորներին կշտամբելուց և նահատակի վախճան են ունենում: Նրանք օժտուած են հրաշքներ գործելու, տեսիլքներ տեսնելու, ապագայի գուշակութիւններ անելու շնորհներով: Մէկ խօսքով այնպիսի հոգևորականներ՝ որպիսին ժողովուրդը ցանկանում էր ունենալ և երևակայում էր իր մարում: Աշխարհական հերոսները կազմում են մի շարք սպարապետներ (զօրավարներ) Մամիկոնեան նախաբարական տոհմից: Սրանք մարմնացնում են անսահման տիրասիրութիւն և հաւատարմութիւն դէպի Արշակունի «բնիկ» թագաւորները. ժողովուրդն ու եկեղեցին՝ նրանց կուսքն են, պաշտելին: Երկրւոր նրանց համար անժանօթ հասկացողութիւն է. նրանք կուռի դաշտում առիւծներ են, որոնց առաջ ոչնչանում է թշնամու անթիւ բազմութիւնը՝ ինչպէս ոչխարների հօտ: Մեռնել անկողնում, հիւանդութիւնից կամ ծերութիւնից՝ վա-

բարբառական մի քանի լատիւթիւններից՝ հեղինակը եղել է բուն Այրաբատեան նահանգից:

տութիւն է նրանց աչքում. մահ պատերազմի դաշտում—անս նրանց բաղձանքն ու պարծանքը:

Բայց այս մասին կը խօսենք յաջորդ գլխում, որտեղ խօսք կը լինի Եղիշէի պատմութեան առիթով: Այնտեղ կը տեսնենք հերոսութեան մի ուրիշ գաղտնիքն էլ, որ նկատուած է մեր հին մատենագրութեան մէջ շնորհիւ գիտական քննադատութեան:

ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ

(Կը շարունակուի)

ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ XX-ՐԴ ԴԱՐԻ ԳԱԶՖՈՒՄ

Դ

Հինգերորդ դարը մեր հին պատմութեան հետաքրքրական շրջաններից մէկն է. այս շրջանում տեղի է ունենում մի երկարատե ընդհարում երկու զօրաւոր տարրերի—հոգեկան և մարմնաւոր ոյժերի մէջ: Մարմնաւոր ոյժը աշխատում է ճնշել, սպանել հոգին—մարդկային խիղճն ու համոզմունքը. իսկ հոգին, որչափ էլ թոյլ և անօգնական, դարձեալ չէ մեռնում. նա պաշտպանւում է, յաղթւում, յաղթւում, բայց չէ ընկճւում, մինչև որ մարմնաւոր ոյժը յոգնում է, համոզւում է որ հոգին անմեռ է, և թողնում է նրան ազատ: Հոգեկան ոյժի, խղճի յաղթանակ՝ կոպիտ, բռնի, նիւթական ոյժի դէմ—այս մխիթարական երևոյթըն է մեզ պատկերացնում մեր պատմութեան հինգերորդ դարը:

Մարմնաւոր ոյժը՝ Պարսկաստանն էր, Սասանեան հարստութեան ժամանակ: Նա այնքան հզօրացած էր հինգերորդ դարում, որ համարձակ կարող էր պարծենալ, թէ իրան հաւասարը չը կայ աշխարհում ոչ մի տեղ. Բիւզանդական կայսրութիւնը, ներքին կազմակերպութեան մէջ թուլացած, երկպառակութիւնների և կրօնական վէճերի ասպարէզ դարձած, մի քանի անգամ պարտութիւն էր կրել պարսիկներից և զգուշանում էր նորանոր ընդհանրումներից, գուշակելով որ դրանց հետեանքը կարող են լինել նորանոր պարտութիւններ: Պարսկաստանի հիւսիսին, ճիշտ է, սպառնում էին Հեփթաղները, բայց սրանք աւելի ասպատակութիւններով էին նեղում Պարսկաստանը, քան իբրև կազմակերպուած տէրութիւն՝ քաղաքական ախոյեան հանդիսանում: Ուրիշ հակառակորդներ չունէր Պարսկաստանը այս ժամանակ:

Եւ նա, գիտակցելով իր աննուաճելի զօրութիւնը, մտածեց կուլ տալ, պարսիկների հետ ձուլել հպատակ փոքր ազգութիւնները, որոնց մէջ ամենից նշանաւոր էին Հայերը: Հայաս-

տան այս ժամանակ ունէր դեռ սեփական թագաւորներ, բայց նրանք ներքուստ բոլորովին թուլացած, հեղինակութիւնից զբրկուած էին, իսկ արտաքուստ՝ հպատակ էին Պարսկաստանի արքայից արքաներին, իբրև նրանց վաստակներ: Երևանի խաները 19-րդ դարի սկզբում աւելի իրաւունքներ էին վայելում իրանց իշխանութեան յանձնուած նահանգում, քան Հայոց Արշակունի թագաւորները չորրորդ դարի վերջերին և հինգերորդի սկիզբներին: Նախարարական քաղմաթիւ տոհմերը, որոնք ներքին գլխաւոր պատճառն էին Արշակունի թագաւորութեան թուլանալուն՝ շակիցեցին Պարսկաստանին՝ բոլորովին վերացնելու իրանց ազգային անկախութեան վերջին նշոյնն էլ:

Հայ նախարարները միանգամայն զուրկ էին ազգային ինքնաճանաչութիւնից, դրանցից ամեն մէկը իրան համարում էր առանձին ցեղ. նրանց մէջ չը կար ներքին, բարոյական կապ, իբրև նոյն հայրենիքի որդոց, իբրև նոյն ազգի զաւակների մէջ, այլ շատ յաճախ ցեղական անհաշտ թշնամութեամբ նրանք զինուած էին միմեանց դէմ և իրար ուժասպառ անում: Բագրատունիք, Սիւնիք, Ռշտունիք և այլն—առանձին անկախ աշիրաթներ էին կազմում և այնպէս էլ գրիտէին, որ իրանք Բագրատունի, Սիւնի, Ռշտունի են, բայց ոչ թէ հայ. ինչպէս այժմեան քուրդ աշիրաթները, որոնք իրանց կոչում են աշիրաթի անունով և ոչ թէ ընդհանուր ազգային անունով: Նրանց ցեղապետներն էլ, այսինքն նախարարները, ոչնչով չէին տարբերում այժմեան քուրդ բէգերից—նոյն սովորութիւնները, նոյն բացակայութիւնը քաղաքական և ազգային ճանաչողութեան: Արշակունի թագաւորները իսկապէս առաջին նախարարական տունն էին կազմում միւս նախարարների մէջ և նրանցից գերիշխան էին ճանաչուած: Նրանք ունենում էին անձնական քաջութիւն և քաղաքական տակա՝ կարողանում էին հաշտ և հպատակ պահել նախարարական տոհմերը. իսկ երբ նրանք թոյլ անձնաւորութիւններ էին լինում, այն ժամանակ կապը բոլորովին խրդւում էր, և իւրաքանչիւր նախարարական տոհմ հպատակուում էր միայն և միայն իր սեփական դիտումներին: Մի շարք թոյլ և վատարարոյ թագաւորների օրերում՝ թագաւորի հեղինակութիւնը բոլորովին ընկաւ, և նրա լինել կամ չը լինելը արդէն կախումն ունէր նախարարների քմահաճոյքից: Եւ ահա նախարարները հինգերորդ դարի երեսնական թուականների սկզբին որոշեցին գիմել Պարսից Վասա (Ն) թագաւորին և խնդրել, որ իրանց ընդ միշտ ազատէ Արշակունի թագաւորներից և Հայաստանը կառավարէ պարսիկ մարզպաններով (խաներով): Ջուր էր աշխատում Սահակ կաթողիկոսը նրանց հասկացնել, թէ ինչ ազգա-

վնաս քայլ է, որ նրանք մտադիր են անել. սեփական թագաւորը որչափ էլ վատ լինի՝ այնու ամենայնիւ գերադասելի է օտարից. «Ի՞նչպէս փոխեմ իմ հիւանդ ոչխարը առողջ դայլի հետ, որի հէնց առողջութիւնը պատուհաս կը լինի մեզ համար», ասում էր նա. «Ի՞նչպէս անօրէնների ձեռքը մատնեմ իմ բնիկ թագաւորին»: Բայց իզուր. նախարարների մէջ պակաս էր մի կարևոր բան—այդ «իմը», «մերը», «ազգայինը» ըմբռնելը. Արշակունի հայ թէ Սասանեան պարսիկ կը լինի նրանց թագաւորը—այդ միևնոյնն էր նրանց համար: Հեռատես և ազգային ինքնաճանաչութիւն ունեցող կաթողիկոսի յորդորները անհետանք մնացին, խրատները՝ անհասկանալի. նախարարները իրանց մտադրութիւնը իրագործեցին: Վրասը Պարսկաստան կանչեց վերջին Արշակունի հայ թագաւորին, Արտաշէսին, զրկեց թագաւորութիւնից ու պահեց Պարսկաստանում, և մի պարսիկ խան ուղարկեց Հայաստանի կառավարիչ: Սահակ կաթողիկոսն էլ մեղադրուեց՝ իբրև Պարսկաստանի շահերին վնասակար և յունասէր կուսակցութեան պարագլուխ, ուստի նոյնպէս զրկուեց կաթողիկոսութիւնից: Այս անգըր կատարուեց մօտաւորապէս 430 թուականին:

Այսպիսով Պարսկաստանի ցանկութիւնը մասամբ հեշտութեամբ իրագործուեց, նոյն-իսկ հայ իշխանների ինդրանօք: Մնում էր մի քայլ էլ անել—Հայաստանից քրիստոնէական կրօնը վերացնել ու հայերին զբաղաչատական կրօնին վերադարձնել. սրանով հայերը միանգամայն կը բաժանուէին քրիստոնէայ յոյներից և կը ձուլուէին պարսիկների հետ, որոնց կուլտուրական ազդեցութիւնը արդէն խիստ մեծ էր նրանց վրայ: Այս ձախող մտադրութիւնը որոշեց զլուխ բերել Յազկերտ Բ-ը: Սա մի խրոխտ, հզօր և կրօնամով անձն էր. նա յաղթել, ահարեկել էր յոյներին այն աստիճան, որ Փոքր Թէոդոս կայսրը յանձն առաւ կատարել նրա բոլոր պահանջները, նոյն-իսկ համաձայնեց նրա ձեռքը մատնել այն պարսիկներին, որոնք քրիստոնէութեան պատճառով փախել էին նրա վրէժինգրութիւնից և ապաւինել Բիւզանդիային: Նա մեծ յաղթութիւն տարաւ և Հեփթաղների դէմ, աւեր ու կոտորած փոխելով նրանց երկրում: Նա գոռողացաւ իր աջողութիւններով. վստահ էր, որ ոչ մի բան անկարելի չէ իր կամքի համար. կ'ասէ՛ և կը կատարուի—այսպէս էր ինքը համոզուած. նոյն հաւատը արժարժում էին նրա մէջ և մոգերն ու իշխանները: Եւ ահա նա կամեցաւ իր հպատակ բոլոր ազգութիւնները մոգութեան (զբաղաչատական կրօնին) դարձնել, արեգակի ու կրակի երկրպագուներ: Այս ցանկութիւնը ոչ միայն քաղաքական նպատակ ունէր—մանր ազգութիւնները ձուլել ու

պարսկացնելու և յոյներից հեռացնելու, այլ և բզխում էր նրա կրօնական մտևուածութիւնից, որի մէջ նրան աւելի ամրացնում էին պարսից հողերականները, մոգերը: Նա խեղճ ասորիներին էլ հարածանքի ենթարկեց յոյն եկեղեցականների հետ կրօնական թղթակցութիւններ ունենալուն պատճառով: Նա հրէաներին էլ նեղեց հաւատի պատճառով և արգելեց շարաթօրը սուրբ պահել: Գլխաւոր ուշադրութիւնը նա դարձրեց հայերի վրայ, որովհետեւ նրանք ամենից ազդու և կարեւոր ազգութիւն էին կազմում պարսից հպատակ բոլոր ազգութիւնների մէջ, և երբ նրանք ենթարկուէին թագաւորի հրամանին՝ աւելի փոքր ազգութիւնները, ինչպէս վրացիք, աղուանները, ասորիք և շատ ուրիշները, հեշտութեամբ կը ձուլուէին, ոմանք երկիրդից, ոմանք՝ հետեկելով հայերի օրինակին:

Եւ ահա օգտուելով այն հանգամանքից, որ հայ նախարարներն իրանց զինուորական ոյժերով Պարսկաստանումն էին, արքայի թշնամիների դէմ կռուելու համար կանչուած՝ մի օր Յազկերտը բացարձակ յայտնեց նրանց իր կամքը. «Եթէ վաղը, արեգակը ծագելու ժամանակ, ինձ հետ միասին նրան չերկրբպագէք և աստուած չը դաւանէք՝ բոլորիդ էլ բանտի ու արձուրի մէջ կը մաշեմ ու ձեր աշխարհը զօրք ուղարկելով քարուքանդ կ'անևոմ»: Իշխանները չը զիջեցին ու բանտարկուեցին: Բանտում նրանք աւելի մեղմացան. նրանք որոշեցին, գոնէ երեսանց, մոգութիւնը յանձն առնել և ազատութիւն գտնելով՝ հայրենիք վերադառնալ, իրանց տուն ու տեղը պաշտպանել: Յազկերտը ուրախացած՝ նրանց շատ պատիւներ տուեց, կազմակերպեց բանակներ՝ զօրքերի և մոգերի, որոնց նախարարների հետ զրեց և ուղարկեց Հայաստան, որպէսզի այնտեղ բռնի մտցնեն արեգակի ու կրակի պաշտամունքը: Գեո ճանապարհին մոգերը վիճակ էին ձգում, բաժան-բաժան էին սնում Հայաստանը, թէ որ մասը ո՞վ պէտք է ստանայ, որքան ժամանակում նոր՝ լոյս հաւատը պէտք է տարածուի ու հաստատուի այնտեղ: Մանրամասն ծրագիրներ էին կազմում նոր հաւատացեալների նիստ ու կացի մէջ մտցնուելիք փոփոխութիւնների մասին՝ ինչպէս պահանջում էր նոր հաւատը:

Այսպէս մի հզօր թագաւորի անդառնալի հրամանը, բազմաթիւ զօրքերը, որոնց հետ միացել էին Հայաստանի ուրացած առաջաւոր մարդիկը, մոլեռանդ ու շահասէր մոգերի խումբը, հարստահարութիւնն ու մահը՝ միացան թոյլ, անկազմակերպ, անառաջնորդ մի աշխարհի դէմ՝ նրան հաւատափոխ անելու համար:

Բայց կար մի զօրութիւն, որի նշանակութիւնը, նոյն-իսկ

գոյութիւնը ի նկատ չէր առել թճնամին, — այնքան աննշմարելի չնչին բան էր այն: Եւ սակայն այդ աննշմարելի փոքրիկ զօրութիւնը միկրօբային յատկութեամբ, աճեց, բազմացաւ, լցրեց ամբողջ երկիրը, մտաւ վանքերն ու խուցերը, ապարանքներն ու խրճիթները, պատուաստի հիւթի նման տողորեց ժողովրդի հոգին, նրան անզգայ դարձրեց սպանալիքների ու հալածանքների, մինչև անգամ մահի դէմ: Այդ հրաշալի զօրութիւնը, հոգիներ պատուաստող այդ միկրօբը, ցրուած, անկազմակերպ ժողովուրդը միացնող, կազմակերպող այդ ոյժը հայերէն այրուբենն էր: Հայոց գիրը կուռելու դուրս եկաւ Սասանեան հզօր արքայի, Յազկերտ Բ-ի բռնն հրամանի ու նրա զօրքերի դէմ:

Դեռ հինգերորդ դարի սկզբներին, մի տարօնեցի հայ մարդ, թողնելով աշխարհական պաշտօններն ու զբաղմունքները՝ նուիրել էր իրան հոգևոր կեանքի. դառնալով վարդապետ՝ թափառում էր նա գաւառից գաւառ, Հայաստանի խուլ ու մութ անկիւններում քարոզում էր Աստծու խօսքը: Հայոց եկեղեցիներում մինչև այդ ժամանակ ասորերէն լեզուով էր կատարւում ժամերգութիւնը, և ժողովուրդը, բացի անհասկանալի քրթմնջոցից ու մամոռից՝ ոչինչ չէր լսում իր հոգևոր հովիւների բերանից ու տրտում, անմխիթար դուրս էր գալիս եկեղեցուց, չը հասկանալով, թէ ինչու ինքը զրկուեց իր նախկին, պայծառ և ուրախ հեթանոսական կրօնից, ինչու իր շլինքին փաթաթուեց անհասկանալի ասորերէն քրթմնջիւնը, ինչով նորամոյժ և օտար քրիստոնէական կրօնը լաւ է իր նախկին, ազգային կրօնից: Բայց տարօնեցի քարոզիչը մի զարմանալի նորութիւն էր մտցնում այն տեղերում՝ ուր չըջում էր քարոզելու. նա հայերէն լեզուով խօսում էր եկեղեցում ժողովրդի հետ. ժամերգութեան աղօթքները, ընթերցուածքները թարգմանում, բացատրում էր ժողովրդին մատչելի հայերէն լեզուով, և նկատում էր, ինչպէս ժողովուրդը, ուրախութեան արտասուքով աչքերը լցուած, մխիթարուած, գոհ սրտով մեկնում էր եկեղեցուց, ինչպէս գիմում էր իրան ու խնդրում, որ միշտ իր հետ մնայ, շարունակ բացատրէ, սովորեցնէ Աստծու խօսքը: Բայց ինչպէս անէր քարոզիչը. ինքը մի մարդ էր, իսկ կենդանի խօսքի ծարաւ էր ամբողջ Հայաստանը: Եւ ահա, Գողթան լեռների ու ձորերի մէջ թափառելիս տարօնեցի քարոզիչը երկնեց իր հանձարեղ միաբը — ստեղծել հայոց լեզուի այբուբեն, թարգմանել Աստուածաշունչն ու եկեղեցական գրքերը և բոլոր հայոց եկեղեցիներում մտցնել ժամերգութիւն ժողովրդին հասկանալի, մայրենի հայերէն լեզուով:

Այնուհետև քունն ու դադարը կտրուում է նրանից, թողնում է նա պաղատող ժողովուրդը և դիմում է Վաղարշապատ, Հայոց կաթողիկոսի, Սահակի մօտ. յայտնում է նրան իր խորհուրդը: Այս մեծ միտքը օգի մէջ պտտւում էր Հայաստանում, մի ինչ-որ բանի պէտքը զգացւում էր, բայց դեռ ոչ ոք այնպէս պարզ, որոշ ձևակերպութեամբ չէր արտայայտել այդ կարիքը՝ ինչպէս տարօնեցի քարոզիչը: Կաթողիկոսը նրան ընդունում է գրկաբաց, յուսադրում, օգնութիւն խոստանում. Վրամշապուն թագաւորը աջակցում է նրան: Գումարւում է ազգային ընդհանուր ժողով և վճռւում է ազգային այբուբենն, ազգային լեզուով ժամերգութիւն ունենալ:

Այնուհետև քարոզիչը փոխարկւում է լեզուագէտ-բանասէրի. մի քանի տարի ճանապարհորդում է նա Ասորիքում, գիտնականների հետ խորհրդակցում, աշխատում, փորձեր անում, աղօթում, գիշեր ու ցերեկ մտածում՝ իր երկնած միտքը մարմնացնելու մասին: Տոկուն աշխատութիւնը, մտքի լարումը, ոգևորութիւնը յաղթում են դժուարութիւններին. նա վերջապէս հնարում է ազգային այբուբենը, և 404 թուին առաջին անգամ մագաղաթի վրայ գծագրւում են—«Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»:—Սա առաջին նախագատութիւնն է՝ հայերէն լեզուով, նորաստեղծ հայերէն տառերով գրուած: Գիւտի յաջողութեամբ անչափ ուրախացած, ապագայ ընդարձակ գործունէութեան հետապատկերով թևաւորուած՝ քարոզիչ-լեզուագէտը թռչում է դէպի Հայաստան, նման Մովսէս մարգարէին, որ տասն պատուիրանների տախտակները ձեռքին Մինայ լեռնից իջնում էր ժողովրդի մօտ: Վրամշապուն թագաւորը, Սահակ կաթողիկոսը, հոգևորականներ, իշխաններ, անթիւ ժողովուրդ դիմաւորում են նոր Մովսէսին զննութեան ազգականերով և երախտագիտութեամբ ընդունում նրա ստեղծած այբուբենը:

Այս հանճարեղ՝ քարոզիչ-լեզուագէտը ամենից նշանաւոր անձնաւորութիւնն է հայոց մի քանի հազար տարուայ պատմութեան մէջ, ազգի ամենամեծ բարերարն է, որի ստեղծած այբուբենը տուեց մեզ ազգային եկեղեցի, պահպանեց հայ լեզուն և տուեց ազգային հիւն և նոր մատենագրութիւն, այսինքն բոլորը՝ ինչ որ այժմ մենք ունենք: Այս անզուգական բարերարը—լաւ յիշե՛ք նրա անունը—կոչւում էր Մեարոպ կամ Մաշտոց: Նա ծնուել է Տարօնի Հացեկ գիւղում և թաղուել Օշաւկան գիւղում, Վաղարշապատից ոչ հեռու: Նրա գերեզմանի վրայ եկեղեցի է շինուած և նրա յիշատակը ամեն տարի տօնում է Հայոց եկեղեցին սրբերի կարգում:

Այնուհետև մի նոր, չը տեսնուած գործունէութիւն է սկսուում Հայաստանում. մէկը միւսի յետեից բացուում են հարիւրաւոր դպրոցներ ընդարձակ երկրի զանազան մասերում. ամեն կողմից հաւաքուում են ընտիր, ընդունակ երեխաներ՝ թարգմարական ծախսով այդ դպրոցներում սովորելու. հայերէն թարգմանուում ու բազմաթիւ օրինակներով տարածուում է այդ դպրոցներում Սաղմսը—ընթերցանութեան առաջին դասագիրքը, և հետզհետէ ժամագիրքը, Աստուածաշունչը: Ինքը Ս. Մեսրոպը դառնում է այնուհետև գլխաւոր վերահսկող ազգային լուսաւորութեան գործին. անդադար չըջում է զանազան դաւաններ, հակում դպրոցների վրայ, նոր ուսման դժուարութիւնները հարթում, ուսուցիչներ նշանակում, նոր դպրոցներ բաց անում, անձամբ սովորեցնում: Իսկ թարգմանական գործունէութիւնը, որ նստակեաց կեանք էր պահանջում՝ վիճակուում է գլխաւորապէս Սահակ կաթողիկոսին, որին օգնում են թէ ինքը այբուբենի հնարողը և թէ նորաբաց հայ դպրոցներից աւարտած ընդունակ սաները, որոնցից շատերը, իբրև ուսանող, ուղարկուել էին արտասահմանի մտաւոր կենտրոնները և կատարելագործուել գիտութիւնների և օտար լեզուների մէջ:

Անընդհատ երեսուն և հինգ տարի տեց այս տենդային մտաւոր գործունէութիւնը, Ս. Սահակի և Մեսրոպի ղեկավարութեամբ: Այս միջոցում մի քանի սերունդներ հասան, աւարտելով հայոց դպրոցները, և իբրև քահանայ, ուսուցիչ, թարգմանիչ, գիտուն հեղինակ սիրուեցին մեր երկրում: Հայերէն թարգմանուեցին ըլլոր եկեղեցական գրքերը, եկեղեցիներում հնչեց մայրենի լեզուով ժամերգութիւն և աղօթք. եկեղեցին ազգայնացաւ, քրիստոնէական կրօնի լոյսը թափանցեց ժողովրդի հոգու մէջ, և ազգային ծագման ու ինքնաճանաչութեան գիտակցութեան փոխարէն, որ բացակայում էր՝ տարածուեց գիտակցութիւն՝ կրօնի միութեան: Երբ երկու մեծ լուսաւորիչները, Սահակ ու Մեսրոպ, վախճանեցան (439 թուին), գործը կանգ չառաւ: Նրանք հասցրել էին արժանաւոր աշակերտներ ու գործիչներ, որոնք նոյն ոգով և եռանդով առաջ տարան ժողովրդի լուսաւորութեան գործը, հիմնեցին ազգային մատենագրութիւն, որի մէջ նուիրագործուում էր Հայոց եկեղեցին՝ Գրիգոր Լուսաւորչի նահատակութեամբ, Հռիփսիմեան կոյսերի արիւնով, նուիրագործուում էր ազգը՝ անցեալ թարգմարների ու հերոսների տխրալի պատմութիւններով: Մեսրոպի ձեռները, իբրև կաթողիկոս, եպիսկոպոս, քահանայ, մատենագիր՝ գլխաւոր գործիչներն էին Հայաստանում, հինգերորդ դարի քառասնական և յիսնական թուականներին, և ահագին ազդեցութիւն

էին ձեռք բերել ժողովրդի մտքի վրայ: Սրանց մէջ առանձնապէս աչքի են ընկնում Յովսէփ կաթողիկոսը, Ղևոնդ երէյը, Եգնիկ և Եղիշէ մատենագիր-եպիսկոպոսները:

Եւ ահա երբ պարսկական բանակը, ուրացած հայ նախարարներով ու մոզերի գնդով, Հայաստան էր շտապում՝ հայոց գրի այս աշակերտներն ու ուսուցիչները ժողով գումարեցին և միաբերան վճռեցին՝ դիմադրել Յազկերտի կամքին և արիւնի գնով պաշտպանել քրիստոնէութիւնը: Անհաւասար, յուսահատ էր կռիւը, և նրանք դիմեցին չը տեսնուած, յուսահատ միջոցների: «Եղբայրը թնոլ ձեռք բարձրացնէ հարազատ եղբոր վրայ՝ որ ուրացել է Աստու պատուիրանը. հայրը թնոլ չը խնայէ որդուն, թնոլ որդին չակնածէ հօր պատուից. թնոլ կիներ կուռի իր ամուսնու դէմ, ծառան զէնք բարձրացնէ տիրոջ դէմ. բոլորի վրայ տիրողը պէտք է լինի աստուածային օրէնքը».—այս բանաձևը, որ ոտնակոխ էր անում բոլոր մարդկային օրէնքները և կատարեալ սպստամբութիւն էր տիրող կարգերի դէմ՝ վճռուեց և ընդունեց այդ ժողովում իբրև առաջին պայման: Այնուհետև ժողովի անդամները, ցրուեցան երկրի բոլոր կողմերը և անձամբ ու ստորագրեալ հողերականութեան միջոցով քարոզեցին կրօնական պատերազմ, պէկոծեցին ժողովրդի սիրտը և ֆանատիկոսացրած մի մեծ բազմութիւն կազմակերպեցին, որի մէջ կային նոյն-իսկ կանայք:

Երբ բանակը Հայաստան հասաւ՝ այս նոյն հողերականները իրանց ազգեցութիւնը գործ դրին և ուրացած նախարարների վրայ: Սրանք գրեթէ բոլորը արդէն հաշտուել էին կատարուած իրողութեան հետ, և արեգակին ու կրակին երկրպագելը այնքան տարօրինակ չէր թւում նրանց. ոմանք էլ քաղաքական անխոհեմութիւն էին համարում յայտնի սպստամբուել պարսիկների դէմ, զգալով նրանց անընկճելի զօրութիւնը և իրանց տկարութիւնը, ուստի լաւ էին համարում այն «առ երեստ» ուրացութիւնը մի առժամանակ էլ շարունակել, մինչև հանգամանքները փոխուեն: Այս վերջին հայեացքին կողմնակից ու քարոզող էր գլխաւորապէս Սիւնեաց նախարար Վասակը, որ թէ իբրև մարգալան, թէ իբրև Սիւնիքի նախարար և թէ անձնական յատկութիւններով—խելքով ու քաջութեամբ, մեծ ազգեցութիւն ունէր միւս նախարարների վրայ: Իսկ Մամիկոնեանների նախարար Վարդանը, որ չէր հաշտուում այս երկու խմբերից և ոչ մէկի հետ՝ լաւ համարեց գլուխն առնել քաջուել Յունաստան և այնտեղ համարձակ պաշտել իր քրիստոնէութիւնը: Ետանդուն հողերականութիւնը սակայն միջամտեց այս լքման բուպէին: Թուլասիրտներին խրախուսեց, ժողովրդի բոր-

բարուած պատրաստականութիւնը նրանց ցոյց տուեց, Բիւզանդիոնի օգնութեամբ զօրացրեց. Ղևոնդին պատգամաւոր ուղարկելով՝ ճանապարհից յետ դարձրեց Վարդանին, որպէս զի իբրև սպարապետ կազմակերպէ զօրքը և գիմադրութեան պատրաստէ։ Այսպիսի անվեհեր և յուսալից գործունէութեամբ այդ մի բուն հօգևորականները, որոնց սիրտն ու հոգին կազմում էր Ղևոնդը, կարողացան նախարարներից մօտ կէսը գրաւել իրանց կողմը, այնպէս որ ժողովրդից կազմուած կամաւորների խառնիճազանճ բազմութիւնը ունեցաւ փորձուած առաջնորդներ, և կրթուած նախարարական զօրքերն էլ միացան նրանց հետ։ Կազմուեց մի բանակ, բազկացած մօտ վաթսուներկու հազար հողուց—մի շատ մեծ քանակութիւն, եթէ ի նկատ առնենք, որ նախարարներից հազիւ թէ կէսը նրանց հետ էին, իսկ միւս կէսը, Վասակի թեւադրութեամբ ու առաջնորդութեամբ, իր զօրքերով հաւատարիմ մնաց պարսիկներին։

Աւարայրի դաշտում, Հայաստանի սահմանագլխի մօտերը, տեղի ունեցաւ վճռական ճակատամարտը, որին ներկայ էին զարձակ Ղևոնդը, Յովսէփ կաթողիկոսը և շատ ուրիշ հօգևորականներ, որոնք իրանց հոգեշունչ քարոզներով սրտապնդում էին ժողովրդական բանակը։ Արիւնահեղ եղաւ կռիւը, որի մէջ ընկան քրիստոնեայ բանակի 22 իշխաններից ինը, որոնց թըւում և ինքը սպարապետ Վարդանը։ Կոտորածը երկու կողմից չարունակուեց մինչև երեկոյ. բայց քրիստոնեաները, առանց առաջնորդի մնալով՝ վերջապէս լքեցին պատերազմի դաշտը և ցրուեցան, ամրացան անառիկ տեղեր, գիմադրութիւնը նոյն եռանդով չարունակելու։

Երկիրը աւելի ևս ալէկոծուեց, ապստամբութիւնը, փոխանակ զպելու, աւելի արծարծուեց. գիւղերից, քաղաքներից ժողովուրդը փախչում էր լեռներն ու անտառները և գունդեր կազմելով՝ յանկարծական յարձակումներ էր գործում սպարսից զանազան գնդերի վրայ ու մնասներ տալիս։ Սկսուեց մի կատարեալ հրոսակամարտ (պարտիզանական կռիւ)։ Յազկերտը հասկացաւ, որ հայերը բռնի ոյժով իրանց հաւատը չեն ուրանայ, իսկ կոտորել մի ամբողջ ժողովուրդ—ենթադրելով թէ հնարաւոր լինէր այս—ամենևին նրա հաշուին չէր գալիս։ Այն դարում, երբ ազգաբնակչութիւնը շատ սակաւ էր, աշխատող, հարկ վճարող զուխը թանգ էր գնահատուում. ուստի ձեռնառու չէր Յազկերտին ծաղկած, մշակուած մի երկրի փոխարէն աւերակ ու անայլի տարածութեան վրայ տիրել։

Եւ Յազկերտը ստիպուեց տեղի աալ—թողութիւն չնորհեց հայ ժողովրդին և կատարեալ ազատութիւն տուեց իրանց հայ-

րենի կրօնը պաշտելու: Միայն հայ հոգևորականներից 9 անձ քննութեան ենթարկել հրամայեց, մեղադրելով նրանց երկու ամենամեծ յանցանքների մէջ, այսինքն որ նրանք ատուշաններ են քանդել և հայոց ապստամբութիւնը կազմակերպողներն են եղել: Մեղադրուածները, որոնց մէջ էին Ղևոնդը, Յովսէփ կաթողիկոսը և ուրիշները, չուրացան իրանց արածները, ընդհակառակը, պարծենում էին նրանցով և զուարթութեամբ ու սրամտութեամբ ծաղրում էին դատաւորներին ու յանդիմանում նրանց կրօնի կեղծիքը: Նոյնպիսի զուարթութեամբ ընդունեցին գլխատուելու պատիժը, և Ղևոնդը, իբրև պատիւ՝ կաթողիկոսին էր առաջարկում, նախ ընդունել նահատակութեան պատկը, որովհետև աստիճանով բարձր էր բոլորից:

Այսպէս ուրեմն տեսնում ենք, որ հայոց այբուբենը ծընունդ առաւ կրօնական անհրաժեշտ պիտոյքներից. նոյն պիտոյքների պատճառով հայոց անգրանիկ դպրոցների աշակերտները հոգևորական դարձան, առաջին ընդհանուր ազգային շարժումը, որ միութեան գիտակցութիւն տարածեց ժողովրդի մէջ՝ կրօնական հողի վրայ ծագեց: Ուրեմն հինգերորդ դարի կէսերին հիմք դրուեց այն կրօնական գրականութեան և հոգևորական տարրի գերակշռութեան, որ տեւեցին մինչև 19-րդ դարը, մինչև որ նոր ժամանակների հասկացողութիւնները կամացկամաց արծարծուեցին և մեր մէջ, և աշխարհական մատենագրութիւնն ու ազգային գիտակցութիւնը եկան փոխարինելու նեղ-կրօնական դարաւոր ճաշակն ու հասկացողութիւնները:

Այս կրօնական պատերազմի պատմութիւնը գրել են երկու հեղինակ հինգերորդ դարում, Եղիշէն և Ղազար Փարպեցին: Երկուսի ուղղութիւնն էլ նոյնն է, բայց ոգևորութիւնը տարբեր: Եղիշէն, անգրանիկ հայ դպրոցների առաջին պտուղներից մէկը, կրօնական պատերազմը պատրաստող եպիսկոպոսների խմբին է պատկանում. նա մասնակից եղաւ Արտաշատի ժողովին, որտեղ խմբագրուեց հայերի համարձակ և վճռական պատասխանը պարսից առաջարկութեան դէմ, և այնուհետև միւս նշանաւոր հոգևորականների հետ եռանդով աշխատում էր կրօնական պատերազմը պատրաստելու: Ուրեմն նա կուսակցական մարդ էր, կռուող կողմերից մէկի գործունեայ անդամը: Վերը տեսանք, ինչ մտիւոանդութեան էր հասել եպիսկոպոսների ժողովը, որ թոյլ տուեց որդուն ղէնք բարձրացնել հօր վրայ և կնոջը՝ կռուել իր ամուսնու դէմ: Այս ֆանատիկոս խմբին էր պատկանում և Եղիշէն, որ մինչև կոխը՝ ամենայն եռանդով աշխատում էր գրգռել, պատրաստել ժողովուրդը. իսկ կռուից յետոյ, երբ քրիստոնեայ բանակի զօրավարն ընկաւ և գունդը

ցրուեց՝ նա իր սրտի բորբոքը թափեց մագաղաթի վրայ: Բրու-
նուլթիւնը, որքան և ճնշող լինի՝ չի համարուի արդարութիւն,
և համոզուած հոգին, թէպէտ յաղթուած՝ չի ընկճուի և միշտ
կը պահէ մի բողբոքի հառաչանք, մի խորին ատելութիւն ճնշող
ոյժի դէմ: Գեղեցիկ են այն խօսքերը, որ ասում են կապուած
հայ նախարարները Շապուհին («Արշակ Երկրորդ», Խոր. Գալ-
ֆայեանի):

«Ըզ մարմին, միայն զայս մարմին
Կարես գերել քեզ ի նախատ.
Սակայն ոգիք մեր երկնային,
Սիրտ հայկազանց են միշտ ազատ:
Ազատ են, ազատ մեր լեզուք՝
Մաղթել ըզյանթս արդարութեան
Ի գլուխ ձեր, նվ արիւնարբուք,
Որ աւերէք ըզ Հայաստան»:

Եւ Եղիշէի ազատ լեզուն շանթ ու թոյն է թափում ամ-
բողջ պարսկական կողմի վրայ, սկսելով Յազկերթ թագաւորից
մինչև Վասակ իշխանը, մոզերից մինչև ուրացած հայ քահանա-
ները: Նա չէ կարող սառնութեամբ յիշել Յազկերտի, Միհրնեւ-
սէհի, Վասակի անունները. նախատական խօսքեր, որ հայհոյ-
անքի են հասնում, մեղադրութիւններ, որոնք ճշմարտութեան
սահմանից դուրս են գալիս՝ սովորական երեւոյթներ են նրանց
վերաբերմամբ: Յազկերտը Եղիշէի գրչի տակ դառնում է կա-
տաղի ցուլ, վիրաւորուած արջ, թունաւոր օձ, զայրացած ա-
սիւժ, ալէկոծուած ծով, խելագար, մտքով կոյր թագաւոր, սա-
տանայի թոյնի աման եւ այլն: Նոյնպիսի քնքոյշ մակդիրներ
կրում են պարսկական կողմի միւս պարագլուխներն էլ: Բայց
ամենից քստմնելի է Վասակի նկարագիրը, Վասակի, որ բայի
այդ ատելի պարսկական կուսակցութեան գործունեայ անդամը
լինելուց՝ նաև ուրացեալ է, մատնիչ է և զէնք է բարձրացրել
հայրենիքի դէմ: Եւ Եղիշէն ծայրայեղ թշուառութիւններով լըց-
նում է նրա կեանքի վերջին շրջանը: Նրան դատի են ենթար-
կում Պարսկաստանում, որովհետև ապացուցւում է, որ նա ար-
քունական հարկերից գողացել է, անհեռատես քաղաքականու-
թեամբ խոստացել է Հայոց աշխարհը մոզութեան դարձնել և
պատճառ է դարձել աշխարհի աւերուելուն. իսկ քրիստոնեայ
նախարարները և մանաւանդ հոգևորականութիւնը ապացուցա-
նում են, որ նա դաւաճան է եղել պարսից թագաւորի դէմ:
Այս պատճառով նրան զրկում են պատիւներից և նախարարա-
կան իշխանութիւնից, ամբոխի ծաղրի ու նախատինքի առար-
կայ դարձնում ու բանտ ձգում: Բանտում խեղճութեան մէջ է

նա. Սիւնեաց իշխանը հացի կարօտ է մնում, և մուրացած հացով նրան կերակրում են ծառաները. քրիստոնեայ նախարարները, որ նոյն բանտումն են՝ նրա հետ չեն խօսում, և նա երեկուայ բարեկամների մէջ ինքն իրան դգում է մնակ, ատուած: Նրա տոհմական ստացուածքները, կանանց զարգերը ծախում են, նրա պապերի շիրիմները բաց անում, որպէսզի մի բան գտնեն, բերեն նրա պարտքերը վճարելու: Թշուառութեան ծայրն հասած՝ նա անտանելի ախտերով վարակում հիւանդանում է. փորը բորբոքում է, գոգը տրորւում, մարմինը քայքայւում: Աչքերը որդնտում են և որդերը քթի ծակերից ներքև թափւում. ականջները խլանում են, չրթունքները ծակտուում. ձեռների ջլերը լուծւում են, անդամալոյծ են դառնում, օտների կրունկները դէպի յետ ձուում: Մահուան հոտ է փչում նրանից, և ձեռնասուն ծառաները փախչում են նրանից: Միայն լուգուն է մնում առողջ նրա բերանում, բայց նա էլ ապաշխարութեան խօսք չէ արտասանում: Խեղճամահ է լինում նա, և անտանելի տանջանքներով դժոխք իջնում:

Այսպիսի քստմնելի նկարագիրը դարձեալ բաւական չէ Եղիշէին. նրա անհուն զայրոյթը չէ յագնում այսքանով. Վասակի դիակն էլ նրա անյադ վրէժինդրութեան են ենթարկւում.—«Նա շան պէս սատկեց և իշի նման քարշուեց»—այսպէս է վերջացնում Եղիշէն Վասակի թշուառութեան նկարագիրը, երբեմն երեւելի Սիւնեաց նախարարի, որի խելքը, քաջութիւնը անուբանալի են և որի հայրենասիրութիւնը գովում է Ս. Մեսրոպի աշակերտ Կորիւնը:

Բոլորովին ուրիշ նկարագիրների ենք պատահում՝ երբ Եղիշէն խօսում է քրիստոնեայ բանակի և նրա պարագլուխների մասին: Այստեղ այլ ևս մարդիկ չեն գործողները, մարդկային հաշիւներով, երկիւղով, թերութիւններով, այլ գերմարդկային արարածներ են, անբիծ ամեն բանով: Երկրաւոր կեանքը արհամարհուած է նրանց աչքում. աղգական, ստացուածք, փառք, իշխանութիւն, կեանքի ապահովութիւն—ոչինչ բաներ են նրանց համար: Նրանք ապրում են միայն երկնայինի համար, լըցուած Աստծու սիրով: Նրանք կոււում են՝ միայն եկեղեցու պաշտպանութեան համար: Ժողովուրդը, միշունչ, մի հոգի դարդած՝ դիմում է դէպի մահ՝ ինչպէս ոչխարները դիմում են դէպի աղը. ասկին ընկած է լինում, և ոչ ոք ձեռք չէ տալիս վերցնելու: Զօրավար Վարդանը՝ սուրբ, քաջ, առաքինի, կորովի, նահատակ, մակդիրներն է կրում, սրան համապատասխան և միւս իշխանները՝ «Փափկասուն տիկնայք Հայոց աշխարհին», որոնց ամուսինները բանտարկուած էին Պարսկաստանում՝ կա-

տարեալ հրեշտակներ են. մոռացած իրանց նախկին փարթամ կեանքը, թողած իրանց իշխանական սալարանքները՝ բանջարեղէնով են ապրում, գետնի վրայ, խտրներով քնում. ոչ մի տրտունջ չէ դուրս գալիս նրանց բերանից, միշտ զուարթ ու հագով մխիթարուած՝ նրանք անդադար սաղմոսներ են երգում և Սուրբ Գիրքը կարդում. առանց կերակրի, երգերի քաղցրութեամբ միայն ապրում են՝ ճպուռների նման եւ օդ ծծելով մընում են կենդանի:

Այսպիսի անհուն սիրով ու խանդաղատանքով լցուած է եղիշէն քրիստոնեայ բանակի վերաբերմամբ և անծայր, անհաշտ ատելութեամբ ու զայրոյթով՝ պարսիկների և ուրացած հայերի դէմ: Նա, հետևելով իր սրտի թեկադրութեան, իբրև բորբոքուած ֆանատիկոս կռուող՝ ծայրայեղութեան մէջ է ընկնում երկու կողմերի նկատմամբ էլ: Նա պատմական նիւթից կազմել է մի բանաստեղծութիւն, գործող անձնաւորութիւնները վերածել է դրական և բացասական տիպերի և նրանց զարդարել է իր վառ երևակայութեան ստեղծագործութեամբ: Այս յատկութեան շնորհիւ՝ եղիշէն ահագին ժողովրդականութիւն է ձևոք բերել, դարերով կղել է ազգի ամենասիրելի ընթերցանութեան գիրքը, որով բազմաթիւ սերունդներ են ոչևորուել: Եւ եթէ Վարդանանց պատերազմը, բացի եկեղեցիներում զուտ կրօնական տեսակէտով տօնուելուց, դարձել է նաև ազգային տօն՝ դա եղիշէի «ոսկեղինիկ» գրուածքի շնորհիւ է:

Եղիշէի բանաստեղծական գրուածքի գունաւորումները պարզում են մեր առաջ, երբ նրան համեմատում ենք Ղազար Փարպեցու պատմութեան հետ: Ղազարն էլ, անտարակոյս, համակրում է քրիստոնեաներին եւ նրանց սրբայնում ու իգէաբայնում է, մանաւանդ որ մօտ քառասուն տարի անցել էր պատերազմից՝ երբ նա գրում էր պատմութիւնը, ուրեմն և աւանդութիւնը նուիրագործել էր հաւատի համար նահատակուածների անունը և եկեղեցին նրանց դասել էր սուրբերի դասը: Բայց չը նայելով սրան՝ Ղազարի մօտ կենդանի մարդիկ են երկու կուսակցութեան գործող անձնաւորութիւնները, իրականին մօտ և բնական: Քրիստոնէութեան պարագլուխներն էլ, իբրև մարդ, ունեն թիրութիւններ ու աշխարհական հոգևեր, մոգութեան կողմնակիցներն էլ ունեն արժանաւորութիւններ ու արգահատելի կողմեր: Մեծ է զանազանութիւնը մանաւանդ այս վերջին, պարսկական կուսակցութեան, անձերի նկարագրութեան մէջ: Յաղկերտը այստեղ հանդիսանում է իբրև իր պետութեան շահերը պաշտպանող, իր դաւանած կրօնին նախանձախնդիր, չըջանալեաց, մինչև իսկ արդարադատ թաղաւոր, և

ոչ թէ մի հրէշ՝ ինչպէս Եղիշէի մօտ: Իսկ Վասակը, որին նոյնպէս ատում է Ղազարը և կոչում է նենգաւոր՝ նրա պատմութեան մէջ դուրս է զալիս իբրև մի ակամայ զոհ հանգամանքների և ընթերցողի գութն է շարժում: Իր նախատուած աղջկան պաշտպանելու համար նա թշնամանում է իր փեսայ Վարազդադանի հետ. սա գնալով Պարսկաստան՝ ուրանում է հաւատը և թերադրում է Միհրներսէհին, Յազկերտի մեծ վէզիրին, որ քրիստոնէութիւնը աշխատի վերացնել Հայաստանից. այս կերպով, ինչպէս նա համոզուած էր, իր ատելի աները կամ հողով կը կորչի (երբ ընդունէ մոգութիւնը), կամ մարմնով (և թէ դիմադրէ թագաւորի հրամանին), իսկ ինքը կը ստանայ նրա նախարարական իշխանութիւնը իբրև վարձատրութիւն իր տըւած օգտակար խորհրդին, ինչպէս և վերջիվերջոյ լինում է: Ուրեմն Վասակը նախ և առաջ ամբաստանում և որոգայթի մէջ է ձգւում ներքին թշնամու ձեռքով, Վարազդադանի դաւաճան քութեամբ: Պարկաստանից, ուրանալուց յետոյ, երբ նախարարները վերադառնում են Հայաստան՝ Յազկերտը իր մօտ պատանդ է պահում Վասակի երկու սրգոցը. որ և է ապստամբութեան փորձ Վասակի կողմից բաւական էր, որ նրա զոյգ որդիքը մի օրում չարաչար մահով սպանուէին: Չը նայելով այս բանին, երբ Վարդանը գլուխը առնում քաշւում է Յունաստան՝ Վասակը առաջինն է լինում, որ նախարարներին խորհուրդի է հրաւիրում և յորդորում է, որ մարդուղարկեն յետ կանչեն նրան, որովհետև առանց Վարդանի իրանց մտածած գործը (ապստամբութիւնը) գլուխ չի գայ: Իսկ թէ ինչ է այնուհետև կատարւում, ինչու է Վասակը հակում պարսիկների կողմը—այստեղ մի անթափանցելի վարագոյր կայ, որ բաց չէ անում Ղազարը: Պատերազմից յետոյ, երբ Վասակը իբրև յանցաւոր զրկւում է պատիւներից և իշխանութիւնից՝ բանտ չէ ձգւում, որդնոտում, այլ խեղճութեան մէջ ապրում և մեռնում է Պարսկաստանում, անդադար լալով, ծեծելով իր մեղաւոր գլուխը, խղճահարուած, որ երկրային փառասիրութեամբ երկնային կեանքից զրկուեց և Վարդանի մահուան պատճառ դարձաւ:

Այս տեղեկութիւններից, որոնք շատ մեղմացնում են Վասակի յանցանքը և զրեթէ նրան արդարացնում մեր խղճի առաջ, մահաւանդ նրա վերջի անկեղծ, խոր զղջումը,—սրանցից ոչ մէկը չը կայ Եղիշէի մօտ: Եղիշէն որոշել էր Վասակից ստեղծել մի ամենաչար մարդու, ստոր դաւաճանի, սատանայի գործիքի, անգեղջ չարագործի տիպ, որ հէնց այս աշխարհում էլ գտնում է սոսկալի հատուցում, այս պատճառով նա դէն է ձգել այն փառ-

տերը, որոնք նպատաւոր էին Վասակի համար: Իսկ չը հաւատալ Փարպեցուն մենք իրաւունք չունինք, որովհետեւ նա էլ անպայման ատում է Վասակին, ուրացեալ ու նենգաւոր կոչում և նրան համարում պատճառ Վարդան սպարապետի մահուան, ուրեմն նա չէր կարող իրանից հնարել չեղած հանգամանքներ՝ նրան արդարացեալու նպատակով: Նա սպարապէս՝ աւելի անաչառ պատմիչ է, որ ընականապէս բացատրուում է նրանով, որ գրում է ըսւական ուշ, երբ սուր կուսակցականութիւնը դադարել էր, կրքերը հանդարտուել էին, ուրեմն երեցութիւնը կարելի էր տեսնել ու գնահատել՝ իրականին աւելի մօտ:

Ուրեմն տեսնում ենք, թէ միևնոյն բանակին պատկանող երկու հեղինակ՝ որչափ իրանց սոցով տարբերուում են միմեանցից և ինչպէս Ղազարի պատմութիւնը միջոց է տալիս ուղղագրելու Եղիշէի պատմութիւնը և կրօնական պատերազմի իրականութիւնը աւելի լաւ հասկանալու: Բայց պէտք է նկատել, որ Ղազար Փարպեցին էլ պատերազմի բոլոր հանգամանքները չէ տալիս այնպէս՝ ինչպէս որ իրօք եղել են, և նա ինքն էլ—չը խօսելով Եղիշէի մասին,—գեւ կարօտ է ուղղագրուելու ուրիշ պատմական աղբիւրով, որ գօթախտաբար գոյութիւն չունի:

Ուրեմն որտեղից գիտենք, թէ Ղազարի պատմութիւնն էլ կարօտ է ուղղագրութեան, եթէ հակառակ խօսող փաստեր չը կան մեր առաջ և չը կայ ուրիշ պատմագիր, որ հերքէր նրա գրածները: Այս հարցին պատասխանում է զարձեալ բանասիրութիւնը, որ քննադատութեան չնորհիւ մի շատ հետաքրքրական երեցութեացեց մեր հին մատենագրութեան մէջ:

Մեր հին պատմագիր-հեղինակները իրանց պատմական աշխատութիւնները գրում էին ոչ թէ ինքնաբերաբար, այլ որ և է ականաւոր անձի պատուէրով, որ և հանդիսանում էր հեղինակի մեկենասը: Պատուիրողը սովորաբար լինում էր որ և է նախարար, կամ նախարարական տոհմի պատկանող բարձրաստիճան մարդ, և նա, պատուիրելով հեղինակ-վարդապետին այսինչ պատմական նիւթի մասին գրել՝ ընականապէս ցանկանում էր որ իր նախարարական տոհմի անցեալն ու ներկան որչափ կարելի է լաւ գոյներով դուրս գայ ու փառաբանուի այդ գրուածքում: Այս ցանկութիւնը լաւ բացատրուում է այն տոհմասիրական գրութեամբ, որ վերը բացատրեցինք.—այդ հին ժամանակ չը կար ընդհանուր ազգային գիտակցութիւն, այլ տոհմային—աշխրաթային, և ամեն մի նախարար բացառապէս հետաքրքրուում էր իր տոհմի պատմութեամբ, պարծենում էր իր տոհմական պարծանքով և ոչ թէ ընդհանուր ազգի: Հեղինակն էլ, որչափ և անկախ համոզմունքի տէր մարդ լինէր, զարձեալ

ի նկատի պէտք է առնէր իր բարձրաստիճան մեկենասի հաճոյքը և պէտք է նրա տոնմը չատ թէ քիչ փառաւորէր, առաւելապէս չնշտելով նրա տոնմի գործած քաջութիւններն ու առաքինութիւնները և մեղմացնելով կամ նոյն-իսկ լռելով նրա պակասութիւնները, աւելի ուշադրութիւն զարձնելով այդ տոնմի կատարած գործերի վրայ և անտես անելով միւս տոնմերի գործերը:

Այս կերպով գրել են Եղիշէն, Փարպեցին, (գուցէ և Փաւստոսի հեղինակը)՝ Մամիկոնեան տոնմի պատմութիւնը, Գաւլիթ և Վահան Մամիկոնեանների պատուէրով, Խորենացին, Սեբէոսը, Անտոզը, Յովհաննէս կաթողիկոսը՝ Բագրատունեաց տոնմի պատմութիւնը, Բագրատունի իշխանների ու թագաւորների պատուէրով, Թովմաս վարդապետը՝ Արծրունեաց պատմութիւնը, Արծրունի Գուրգէն իշխանի պատուէրով և այլն: Ուրեմն սրանց պատմութեան մէջ հերոսացած ու փառաւորուած է իւրաքանչիւր հեղինակի մեկենասի տոնմը, և սրանց գրածը ոչ թէ ընդհանուր հայ ազգի պատմութիւն է, այլ տոնմային—Մամիկոնեան, Բագրատունի, Արծրունեաց և այլ տոնմերի, և ամեն մէկի գրուածքում պատմական ճշմարտութիւնը որոշ չափով այլալուծած է, որչափ այդ պահանջել է՝ մեկենաս տոնմի պատիւն ու պարծանքը: Նոյն-իսկ Խորենացին, որ ամբողջ զլիտով բարձր է կանգնած միւս պատմագիրներից, որ առաջինը եղաւ ընդհանուր ազգային գիտակցութիւնն ունեցող ու արծարծող, որ նեղ-տոնմային սահմանափակութիւնը պատասելու համարձակութիւնն ունեցաւ և ընդհանուր ազգային պատմութիւն գրեց, նոյն-իսկ այս լուսամիտ ու հեղինակաւոր պատմիչը չը կարողացաւ բոլորովին ազատուել տոնմասիրական յատկութիւններից և խունկ է ծխում երբեմն Բագրատունի տոնմին, սակայն պահպանելով որոշ չափ ու վայելչութիւն, աշխատելով, որ իր գովեստները հիմնուած լինին պատմական իրողութիւնների վրայ կամ ապացուցութիւն առողջ գատողութեամբ:

Մի քանի նմուշներ բերենք այս տոնմասիրական պատմութիւններից, որոնցից բացայայտ կերևի, թէ նրչափ գունաւորուում է իրողութիւնը տոնմային հեղինակի գրչի տակ:

Թովմաս վարդապետը (Ժ դար), որ Արծրունեաց տոնմի պատմիչ է, Արծրունիներին մինչև երկինք է բարձրացնում: Նրանք ականաւոր անձնաւորութիւններ են, կատարեալ հերոսներ, որոնք մասնակցութիւն են ունենում համաշխարհային պատմութեան նշանաւոր անցքերում: Նրանցից մէկը Աղէքսանդրը Մակեդոնացու ղէմ կուռի է դուրս գալիս և նրա երեկի զօրավարներին յաղթում, անարեկում, նոյն-իսկ Աղէքսանդրի

հետ մենամարտել է սկսում։ Վերջը նշանակում է Եգիպտոսի ու Հնդկաստանի թագաւոր։ Ուրիշ երկու Արծրունիներ Հայկաղեան Տիգրանին օգնում են Աժդահակի դէմ պատերազմելիս։ Նրանցից հէնց մէկը բռնում է Աժդահակին յետեից, այնպէս որ Տիգրանին միայն մնում է տէգը ցցել անպաշտպան Աժդահակի սիրտը։ Նոյն Արծրունիներն են, որ առաջնորդում են հրէից գերութեան, երբ սրանց ազատութիւն է տալիս Կիւրոսը. նրանք բերում տեղաւորում են գերիները Հրէաստանում և Զօրաբարէլին առաջնորդ նշանակում նրանց վրայ։ Նոյն Արծրունի եղբայրները մասնակից են լինում և Կիւրոսի պատերազմին Կրեսոսի դէմ և իրանք են, որ հնարագիտութեամբ որոգայթի մէջ են ձգում Կրեսոսին և նրան ձերբակալում։—«Ո՛հ, կարի է առասպելս, այլ և առասպելաց առասպել», կը բացականչէր դարձեալ Խորենացին, եթէ այս «պատմութիւններին» ծանօթ լինէր։

Մի ուրիշ օրինակ բերենք Ղևոնգից (Ը. դար), որ Բագրատունեաց պատմիչ է։ Ութերորդ դարի կէսերին, հայ նախարարները, արաբական լուծի ճնշման չը կարողանալով դիմանալ խորհուրդ են անում ապստամբուել և անկախութիւն ձեռք բերել։ Խորհուրդի հոգին ու պարագլուխը լինում է Գրիգոր Մամիկոնեանը։ Հայաստանի իշխանապետ է լինում այս ժամանակ Աշոտ Բագրատունին, որ իւր պաշտօնում նշանակուած է արաբացոց խալիֆայից։ Նախարարները իրանց խորհուրդը յայտնում են և Աշոտին. սա նախ աշխատում է յորդորել, որ նրանք յետ կանգնեն անիրագործելի, մլասակար մտքից, և հանգիստ նստելով վայելեն իրանց այգիներն ու անդաստանները. բայց տեսնելով, որ նախարարները հաստատ կանգնած են իրանց խօսքին և բոլոր զօրքն էլ նրանց հետ միաբան է՝ յակամայից համաձայնութիւն է յայտնում։ Բերում են խաչ ու աւետարան ու երդում։ Այնուհետև նախարարները պատրաստում են, անառիկ տեղ քաշուում և յայտարարում են ապստամբութիւն։ Այս միջոցին Աշոտը յարմար բոպէ գտնելով՝ մի քանի նախարարներով զաղտնի փախչում է ապստամբների բանակից, նպատակ ունենալով գնալ միանալ Արաբացոց հետ և իւր հայրենակիցների դէմ կռուել։ Մամիկոնեան Գրիգորը լսում է դաւը, հասնում, բռնում է Աշոտին և աչքերը կուրացնել տալիս։ Ապստամբութիւնն էլ գլուխ չէ գալիս, որովհետև Գրիգորը շուտով փորի հիւանդութիւնից մեռնում է։

Այս պատմութիւնը շատ նման է Վարդանի ու Վասակի պատմութեան, այնպէս չէ. երկու դէպքումն էլ Մամիկոնեան-

ները գլուխ են կանգնել ազգային շարժման, երկու դէպքումն էլ մի-մի նշանաւոր հայ նախարար, այնտեղ մարզպան Սիւնի Վասակը, այստեղ իշխանապետ Բագրատունի Աշոտը, երեսանց համաձայնութիւն են տալիս ու երդուում, յետոյ դաւաճանելով ազգային շահերին՝ հեռանում ու թշնամիների կողմն այնուամ Պէտք էր ուրեմն սպասել, որ երկու դէպքի գնահատութիւնն էլ հաւասար լինէր. կամ Աշոտն ու Վասակը դաւաճան, ազգուրաց հրատարակուէին, իսկ Գրիգորն ու Վարդանը հայրենասէր հերոսներ, կամ ընդհակառակը, այս վերջինները հրատարակուէին տաքգլուխ, յնասակար գողոյններ, իսկ առաջինները՝ խոհեմ, հեռատես հայրենասէրներ: Բայց հէնց բանն էլ այն է, որ Վարդանի ու Վասակի ընդհարման պատմութիւնը գրել են Մամիկոնեան տան տոհմային հեղինակներ, իսկ Գրիգորինն ու Աշոտինը՝ Բագրատունեաց տան տոհմային պատմիչ Վեոնդը: Սա առանց քաշուելու խիստ խօսքերով պատարակում է Գրիգոր Մամիկոնեանին (=Եղիշէի Վարդան Մամիկոնեանին), կոչելով նրան խորամանկ, նենգաւոր, բարեղրուժ, շարասէր, նմանեցնելով նրան ագռաւի և նրա մահը համարելով աստուածային պատուհաս՝ նրա շարագործութեան արդար վրէժ, և նա «սատկում է և յիշատակը անհետ ջնջւում է»: այն-ինչ Աշոտը (=Եղիշէի Վասակին) հանդիսանում է «բմաստուն», «Հայոց աշխարհի փառք և պարծանք», «պերճ պսակ հայ նախարարների»:

Այս օրինակները բաւականաչափ ցոյց են տալիս տոհմա-սիրական պատմութեան յատկութիւնը: Սա—մի կուսակցական մատենագրութիւն է, որի մէջ որոշ տոհմի պատիւն ու պարծանքը պաշտպանելու համար զոհ են բերւում աննպաստ պարզաները, նոյն-իսկ համոզմունքը, ճշմարտութիւնը: Ուստի այսպիսի տոհմային պատմիչ խօսքերի հիման վրայ չէ կարելի անսխալ դատողութիւն անել այնպիսի պատմական իրողութիւնների մասին, որոնց մէջ խառն է այն տոհմը, որի պատմութիւնն է գրւում: Պէտք է հակառակ կուսակցութեան, ի հարկէ, նոյնպէս կողմնապահ, պատմիչ գրուածքն էլ աչքի առաջ ունենալ և երկուսի համեմատութիւնից մի միջին եզրակացութիւն հանել:—Մենք տեսանք, որ Փաւստոսի անձանօթ հեղինակը տալիս է մի շարք Մամիկոնեան պանծալի հերոսների անուններ. տեսանք, որ Եղիշէն ու Փարպեցին հերոսացնում, անմահացնում են Մամիկոնեան Վարդանին: Բայց այս հեղինակները՝ Մամիկոնեան տան տոհմային պատմիչներ են: Պէտք էր, իբրև հակակշիռ, ունենալ և Սիւնեաց տան մի պատմիչ գրուածքը. պէտք էր, առածին համեմատ, լսել և միւս կողմը—audiatur et altera pars: Բայց այդ միւս կողմից մեր ձեռքը չեն հասել պատմու-

Թիւնները Խորենացին, որ Մամիկոնեան տոհմը այնքան էլ չէ սիրում՝ իւր պատմութեան վերջակէտը դնում է հէնց այնտեղ, որտեղ պէտք է սկսէր գրել կրօնական պատերազմի մասին: Այս խորհրդաւոր լուսթիւնը կարող է բացատրուել նրանով, որ նա գուցէ շատ տարբեր բաներ պէտք է պատմէր այս պատերազմի մասին, բայց եկեղեցում նուիրագործուած սրբերի դէմ գրել դժուարանալով՝ լաւագոյն է համարել ոչինչ չը գրել: Վեցերորդ դարում եղել է մի պատմիչ Սիւնեաց տոհմի Պետրոս եպիսկոպոս, որին շատ գովում են մի քանի հեղինակներ: Սրա պատմութիւնն էլ անհետացել է, գոնէ մինչև այժմ դեռ գտնուած չէ: Արդեօք այս կորուստի պատճառն այն չէ, որ «մատնիչ» վասակը նրա մէջ բոլորովին տարբեր կերպարանքով էր դուրս բերուած և անհաճոյ բաներ կային ուխտապահ կուսակցութեան մասին: Այս հարցերը բնականաբար ծագում են մեր մէջ, երբ համեմատում ենք Եղիշէի ու Ղազարի պատմութիւնները և նկատում ենք այնքան զանազանութիւններ Սիւնեաց իշխան վասակի նկարագրի մէջ, չը նայելով որ երկուսն էր Մամիկոնեան տոհմի պատմիչ են:

Ուրեմն բանասիրութիւնը մի նոր գիծ էլ նկատեց մեր հին հեղինակների մէջ—տոհմային կուսակցականութիւն: Եւ այս գիծը միշտ պէտք է ի նկատի ունենալ նրանցից օգտուելու ժամանակ: Բաւական չէ գիտենալ միայն, թէ ինչ են ասում նրանք, անհրաժեշտ է ուշադրութեան առնել նաև, թէ ո՞վ են ասողները:

ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ XX-ԲԳ ԳԱՐԻ ՍԿԶԲՈՒՄ

Ե

Մենք համառօտ բացատրեցինք մատենագրական-պատմական մի քանի էական եզրակացութիւններ, որոնց հասաւ բանասիրութիւնը 19-րդ դարում՝ ուսումնասիրելով հայոց հին գրականութիւնը: Քննադատութիւնը, ի հարկէ, բացառաբար չէր գրադուած միայն յիշուած հեղինակներով ու հարցերով. կատարուած են նաև ուրիշ շատ ուսումնասիրութիւններ մեր հին գրականութեան մասին (օր. Եզնիկ կողբացու, Դաւիթ Անյաղթի, Յովհան Մանգակունու և այլն և այլն). սակայն սրանք այնքան կարևորութիւն չունեն հայոց մատենագրութեան ոլկին ճանաչելու նկատմամբ և աւելի նեղ, մասնագիտական նպատակներ ունեն, որոնց մասին խօսելը մեր յօդուածի շրջանից դուրս է: Այժմ հարկ ենք համարում մի քանի խօսք ասել և ուրիշ տեսակի աշխատութիւնների մասին, որոնք կատարուեցին 19-րդ դարում՝ հայոց հին մատենագրութեան վերաբերմամբ:

Նախ և առաջ հարկաւոր է յիշել, որ անցեալ դարում գըլխաւորապէս հրատարակուեցին մեր հին հեղինակների գործերը: Մինչև 19-րդ դարը քիչ բան ունէինք սրանցից տպագրուած: Ինչպէս որ գրերի գիւտը մեղանում նախ և առաջ կրօնական պիտոյքների համար եղաւ, այնպէս էլ հայկական տպագրութիւնը նախ և առաջ կրօնական պիտոյքների ծառայեց: 16—18-րդ դարերում բազմաթիւ գրքեր են հրատարակուած հայերէն լեզուով, բայց նրանց ամենամեծ մասը ժամասացութեան վերաբերեալ գրքեր են, կամ կրօնական մեկնութիւններ, խորհրդածութիւններ, վիճաբանութիւններ: Զուտ եկեղեցական—կրօնական գրքերից դուրս, մատենագրական բովանդակութիւն ունեցող գրքերի մէջ ամենից բախտաւոր են եղել Շնորհալու Յիսուս որդին և Գր. Նարեկացու աղօթամատոյցը (Նարեկ), որոնք մի քանի տպագրութիւնների արժանացան, դարձեալ շնորհիւ իրանց կրօնական-բարեպաշտական բովանդակութեան, որին հարկաւ նըպաստեց և այս գրուածների բանաստեղծական ոգին: Սրանցից

դուրս հազիւ թէ կարելի լինի գտնել 7—8 հեղինակ, որոնք, տպագրութիւնը հայոց մէջ սկսուելուց մինչև 18-րդ դարի վերջը, այսինքն մօտ 300 տարուայ ընթացքում, տպագրուած են ցիրուցան զանազան տեղեր, և այս տպագրութիւնները ընդհանրապէս շատ անկատար են եղել թէ արտաքինով և թէ մանաւանդ ներքինով, առանց բաղդատութեան, աղաւաղուած ընթերցուածքներով: Իսկապէս 19-րդ դարը պէտք է համարել հայոց հին մատենագրութեան վերածնութեան դար, որ իր կողմից ծնունդ տուեց հայագիտութեան: Հին մատենագրութեան վերածնութիւնը հետևանք էր գլխաւորապէս Վենետիկ Մխիթարեան միաբանութեան գործունէութեան: Այս միաբանութիւնը իր գործակալների միջոցով աշխարհի զանազան ծայրերից հաւաքեց բազմաթիւ հայերէն ձեռագիրներ, թօթափեց նրանց վրայից հնութեան փոշին, հնարաւոր չափով բաղդատեց, ուղղագրեց և լոյս ընծայեց քառասունից աւելի հին հայ հեղինակներ, ընդարձակները առանձին հատորներով, «Մատենագրութիւնը նախնեաց» վերնագրի տակ, իսկ համառօտները հաւաքելով փոքրիկ հատորների մէջ, որոնք «Սոփերը հայկականք» ընդհանուր վերնագիրն են կրում: Մխիթարեանների այս գործունէութիւնը մանաւանդ աչքի է զարնում. 19-րդ դարի առաջին կէսում, երբ նրանք, կարելի է համարձակ ասել, հայոց ազգի ուսուցիչները հանդիսացան և ինչպէս հայերէն տպագրութեան, նոյնպէս հայագիտութեան ասպարէզում մրցակիցներ չունէին: Դժբախտաբար այս շրջանում էլ նրանց հրատարակչական գործունէութիւնը սահմանափակոււմ էր քաղաքական և կրօնական արգելադրութիւններով: Շատ հին և միջնադարեան հեղինակների գրուածքներ պարունակում են դատապարտութիւն Քաղկեդոնի ժողովի դէմ և պարսաւանք Մահմէտի դէմ, այսպիսի գրուածքների տպագրութիւնը հակառակ կը լինէր կաթոլիկ եկեղեցուն և Թիւրքիային, որոնց երկուսի հետ էլ կապուած էին վենետիկցիք: Մ'նում էր երկուսից մէկը—կամ աղաւաղել հին հեղինակները, նրանցից դուրս ձգելով կաթոլիկութեան ու մահմետականութեան աննպաստ կրտորները, կամ իսպառ չը տպագրել նրանց երկերը: Մխիթարեանները ընտրեցին վերջինը, իբրև չարիքներից փախաւորներ, և այս պատճառով նրանց հրատարակութիւնների շարքում չը կան այնպիսի հեղինակներ, ինչպէս են Սերէոս, Դևանդ, Յովհաննէս կաթողիկոս, Թովմայ Արծրունի, Ուխտանէս, Մ. Կազանկատուացի, Ասողիկ և այլն:

Տասնեկններորդ դարի երկրորդ կէսից հրատարակչական գործունէութեամբ հանդէս են գալիս և ուրիշ այնպիսի քաղաքներ, որտեղ կամ ձեռագիրների հաւաքածու կայ, կամ կենտրո-

նազած են լինում մտաւոր սյօեր: Այս քաղաքներն են Պարիզ (7 հրատարակութիւն), Մոսկվայ (9), Պետերբուրգ (10), Երուսաղէմ (7) և Էջմիածին (11). Կ. Պօլիսը թէ անցեալ և թէ 19-րդ դարում շարունակ ցոյց է տալիս գործունէութիւն, թէև թոյլ չափով. Էջմիածնում այս գործունէութիւնը սկսուեց եօթանասնական թուականներէց և աւելի առաջագիմեց վերջին տասնամեակում: Իսկ Թիֆլիսը, Կովկասի մայրաքաղաքը և հայ բնակիչներէ բազմութեան կողմից երկրորդ քաղաքը Պօլսից յետոյ՝ այս գործունէութեան մէջ աչքի ընկնող բացառութիւն է կազմում (3 արտատպութիւն): Փարիզում հին հայ հեղինակներէ հրատարակութեան գործը կատարեց Կար. վ. Շահնազարեան, ձեռնարկելով տպագրել «Շար պատմագրաց հայոց», որի մէջ մտան 7 հեղինակ. նոյն ուղղութեամբ գործեց և հայագէտ Դիւլօրիէն, տպագրելով մի-երկու հեղինակ՝ զլխաւորապէս խաչակրաց արշաւանքի պատմութեան վերաբերեալ: Մոսկվայում հայ հեղինակներէ զլխաւոր հրատարակիչն եղաւ Մ. Էմինը, իսկ Պետերբուրգում՝ Բ. Պատկանեանը: Էջմիածնում և Երուսաղէմում, հայ ձեռագիրներէ հարուստ պահեստներում, հրատարակութեան գործը կատարում էին այստեղի վանքերի միարանները, իսկ Պօլսում՝ զանազան բանասէրներ: Աւելի փոքր քանակութեամբ տպուած են հին հեղինակներ Կալիաթայում ու Մազրասում (երկ-երկու), Զմիւռնիայում, Թէսղոսիայում և Շուշում (մի-մի): Այս հեղինակներէ մի քանիսը վաղուց կորսուած էին համարում և միայն 19-րդ դարում գտնուեցին ու հրատարակուեցին, ինչպէս Սեբէոս, Թովմայ Արծրունի, Մ. Կաղանկատուացի, Ուխտանէս և այլն: Նոյն-իսկ գտնուեց, լոյս աշխարհ հանուեց մի հին հեղինակ, որի աշխատութիւնը թէև կար ու տպագրուած էր, բայց վերագրում էր ուրիշ անձերի: Այս հեղինակն է՝ քարոզիչ-ճգնաւոր Վարդան Այգեկցին, հայոց Եզրոսը, (13-րդ դար), որի կենսագրութիւնն ու առակները մանրամասն բաղդատութեամբ ու լիակատար ուսումնասիրութեամբ հրատարակեց Ն. Մառ երեք հատորում (1895—1899). այսպիսով նորագիւտ հեղինակը մի անգամից այնպիսի բախտի արժանացաւ, որին իրաւամբ կը նախանձեն հայոց բոլոր հին և նոր հեղինակները: Նոյնպէս գտնուեց ու երեք անգամ տպագրուեց Ղազար Փարպեցու մի անյայտ նշանաւոր թուղթը, որ այնքան լոյս է սփռում թէ այս հեղինակի վրայ և թէ հինգերորդ դարի երկրորդ կէտում տիրող անմխիթարական սպու վրայ:

Բացի առանձին գրքերով հրատարակութիւններէ մեր հին հեղինակներէ շատ մանր աշխատութիւններ տպագրուած են

բանասիրական ամսագիրներում, գլխավորապէս «Բագմավէպում»
և «Արարատում»:

Այս բոլոր հրատարակութիւնները, զանազան տեղերում ու
ժամանակներում, զանազան անձերի ձեռքով կատարուելով հար-
կաւ շատ տարբերում են միմեանցից իրանց թէ ներքինով և
թէ արտաքինով: Մի քանիսը ունին առաջաբաններ, ծանօթու-
թիւններ, յատուկ անունների ցանկեր, միւսները զուրկ են սրան-
ցից. ոմանք տպագրուած են մի քանի ձեռագիրների բազդա-
տութեամբ, միւսները՝ առանց բազդատութեան, հէնց պատա-
հած (կամ գոյութիւն ունեցող միակ) ձեռագրից. վերջապէս ո-
մանք տպագրուած են հմուտ ու փորձուած հրատարակիչների
ձեռքով, խնամքով, իսկ միւսները գործին անտեղեակ անձերի
ձեռքով, անխնամ կերպով: Կան և այնպիսի հրատարակութիւն-
ներ, որոնց մէջ վխտում են անթիւ տպարանական սխալներ,
և ակն յայտնի աղաւաղութիւններն էլ չեն ուղղուած: Եթէ այս
հանգամանքների վրայ աւելացնենք և այն, որ այս հրատարա-
կութիւններից շատերը բոլորովին սպառուած են և չեն ձար-
ւում՝ ինքն իրան մեր առաջը կ'հէնէ մի անհրաժեշտ պահանջ,
որին պէտք է շուտով բաւարարութիւն տրուի: Այս պահանջն
է—հարկ է արգեօք ասել—մեր բոլոր հին հեղինակները նորից
տպագրել միևնոյն ուղղութեամբ ու զիջքով, խնամքով համեմա-
տած ընագիրներով, անհրաժեշտ բացատրութիւններով և ցան-
կերով, մի քանի ընդարձակ հատորների մէջ ամփոփած, ժամա-
նակագրական կարգով, այսինքն ունենալ մի Corpus scripto-
rum armenorum (ժողովածու հայ մատենագիրների): Այսպիսի
ժողովածուներ արդէն գոյութիւն ունին յոյն, հոռոմայեցի, բիւ-
զանդական և այլ մատենագրութիւնների համար, շատ աւելի
ընդարձակ ծաւալով: Նոյն պահանջը հասունացել է և մեր մէջ.
ամեն մի բանասէր ներկայումս զգում է, որ արդէն գոյութիւն
ունեցող հրատարակութիւնները համապատասխան չեն գիտու-
թեան արդի պահանջներին և թէ կարիք կայ լրագոյն, քննա-
կան հրատարակութեան: Ուրեմն սպասելու և ցանկալու է, որ
մեր յիշած Հայոց մատենագիրների ժողովածուն, գոնէ միայն
Պատմագիրներինը օր առաջ լոյս տեսնէր:

Հայերէն հրատարակութիւնների հետ միասին անցեալ դա-
րում երեսն եկան և հայ հեղինակների, մասնաւորը պատմագիր-
ների թարգմանութիւնները զանազան եւրոպական լեզուներով:
Պատմական ուսումը այս դարում հսկայական առաջադիմութիւն
արաւ Եւրոպայում, ձգտելով գիտութիւնների շարքն անցնել
սկսեցին ի միջի այլոց որոնել պատմական աղբիւրներ: Եգիպ-
տական հիէրոգլիֆները, սեպագիր արձանագրութիւնները, գետ-

նի տակ թաղուած աւերակները իրանց հազարաւոր տարիներից ի վեր պապանձած բերանները բացին և սկսեցին խօսել անցեալ դարերի մասին: Ի՞նչ զարմանք, որ ուշադրութիւն պէտք է դարձնուէր և մեր աղգային պատմական գրականութեան վրայ, որ անհամեմատ աւելի մատչելի էր, քան անվերծանելի սեպագիրները և մաշուած դրամները: Հայերէն լեզուն, որով գրուած էր այս մատենագրութիւնը՝ դեռ կենդանի էր գրականութեան մէջ և շատերին հասկանալի. վենետիկում հիմնուած մի գիտնական միաբանութիւն շարունակ տպագրում էր նրանց բնագիրները ու լուսարանում, միևնոյն ժամանակ սիրայօժար կերպով նպաստում էր այն եւրոպացի գիտնականներին, որոնք Ս. Ղազարի վանքը կը դիմէին՝ արեւելեան այդ հին լեզուն սովորելու և նրա մատենագրութիւնն ուսումնասիրելու նպատակով: Թարգմանութիւնների գործին շատ նպաստեց և այն հանգամանքը, որ Պարիզում, Մոսկվայում և Պետերբուրգում հիմնուեցին հայոց լեզուի ամբիոններ բարձրագոյն դպրոցներում, որոնց մէջ հայերէնի պրօֆէսորները գլխաւոր աշխատողներն եղան նաև թարգմանութեան մէջ:

Հայ հեղինակների թարգմանութիւնները այս պատճառով կատարուել են գլխաւորապէս Ֆրանսիայում և Ռուսաստանում, Ֆրանսերէն և ռուսերէն լեզուներով: Ուրիշ լեզուներով (գերմաներէն, անգլիերէն, իտալերէն և այլն) եղած թարգմանութիւնները համեմատաբար շատ աննշան են և պատահական բրնաւորութիւն են կրում, այն-ինչ Ֆրանսիականը և ռուսականը որոշ դպրոցի գործունէութեան հետեանք է եղել:

Ֆրանսիայում դեռ 1809 թուին միտք ծագեց՝ վենետիկի Մխիթարեանների օգնութեամբ բոլոր հայ հեղինակները ֆրանսերէն թարգմանելու, բայց քաղաքական խան դրութեան պատճառով այս գիտաւորութիւնը չիրագործուեց: Նոյն միտքը, Շ. Զրպետեանի թելադրութեամբ, գործադրել կամեցել են վենետիկցիք, և բազմաշխատ Մկրտիչ վ. Աւգերեանը ձեռնարկել է բոլոր հայ հեղինակները հայերէն թարգմանելու «Bibliotheca Patrum Armenorum» (Մատենադարան Հարց Հայոց) վերնագրով, որի չորս մեծ հատորները մնում են անտիպ: Միայն հայ պատմագիրները իտալերէն թարգմանելու խորհուրդ ունեցել են դարձեալ վենետիկցիք, բայց տպագրել են միայն Ոորենացին ու Ագաթանգեղոսը: (Տես Ուսումնասիրութիւնք հայ լեզուի և մատենագրութեան յարմուտս, եր. 139—143): Ֆրանսերէն սխտեմական թարգմանութեան միտքը յիսնական թուականներին նորից արծարծեց հայագէտ պրօֆ. Դիւլօրիէն, որին պէտք է աշխատակցէին Գաբր. վարդ. Այվազեանը և հայագէտ վ. Լան-

զուտան: Այս գործին իբրև նախապատրաստութիւն նա տպագրեց իւր ուսումնասիրութիւնը հայոց ժամանակագրութեան մասին (1859-ին): 1858-ին դուրս եկաւ նրա ծրագրած մատենագրանի առաջին հատորը, որ պարունակում էր երկու հեղինակ: Բայց այս հատորը նրա ձեռնարկած գործի վերջինն էլ եղաւ: Նոյն հայագէտը Ֆրանսիական Ակադեմիայի առաջարկութեամբ ժողովեց ու հայերէն ընագրով ու ֆրանսերէն թարգմանութեամբ հրատարակեց (1869-ին) ըստ այն պատմական տեղեկութիւնները, որ գոյութիւն ունին հին հայ հեղինակներին մօտ՝ խաչակիրների արշաւանքի մասին: Գործը դուրս եկաւ մի մեծադիր չքեղ հատոր և պարունակում է ընդարձակ ու համառօտ քաղուածքներ 19 հայ հեղինակներից:

Սակայն Դիւլօրիէի և նախորդների արծարծած, բայց չիրագործած միտքը չը խափանուեց: Վաթմանական թուականներին նոյն Վ. Լանզլուան վերանորոգեց նոյն միտքը և գտնելով Նուբար-փաշայի կողմից դրամական օժանդակութիւն և զանազան գիտնականների կողմից աշխատակցութեան խոստում՝ սկսեց իւր գործը, որ, ըստ ծրագրի, պէտք է բազմաճանար հինգ ընդարձակ հատորներից և պիտի պարունակէր մօտ 30 հայ հեղինակների թարգմանութիւնը՝ առաջարկներով ու գիտական ծանօթութիւններով: Գործի երկու հատորը լոյս տեսան 1867 և 1869 թուին «Collection des historiens anciens et modernes de l' Arménie» (Ժողովածու հին և նոր հայ պատմագիրների) վերնագրով և պարունակում են հինգերորդ դարի 11 հեղինակի (որոնց մէջ նաև Զենորի ու Յոհան Մամիկոնեանի) գրուածքները: Դժբախտաբար այս լուրջ գործն էլ անկատար մնաց՝ Լանզլուայի մեռնելով:

Նրա գործը շարունակել մտադրուեց Պետերբուրգի Ակադեմիայի անդամ բազմաշխատ վրացագէտ և հայագէտ Մ. Բրօսսէն, որ դարձեալ «Collection d' historiens arméniens» վերնագրով Պետերբուրգում, Ակադեմիայի հաշուով, տպագրեց երկու հատոր (1874—1876), որոնք պարունակում են 7 հեղինակի գրուածքների թարգմանութիւններ, մէկը 10-րդ դարի, երկրորդը 12-րդի, մնացածները 17—18 դարերի: Բրօսսէի այս գործն էլ, որ գիտական արժէքի կողմից ստոր է Լանզլուայի ժողովածուից, կիսատ մնաց՝ ձեռնարկողի մահուան պատճառով:

Ռուսերէն լեզուով հայ հեղինակների թարգմանութիւններ կատարուած են զանազան հայերի ձեռքով պատահաբար (Յովսէփ սարկաւազ, Խոզարաշեան, Շանշեան և այլն), բայց ինչպէս ասացինք՝ սխտեմական թարգմանութիւնները կատարուած

են Մոսկվայի Լազարեան ճեմարանի և Պետերբուրգի համալսարանի հայադէտ պրոֆէսորների ձեռքով: Աշխատողներն եղել են հայերիս ծանօթ, այժմ հանգուցեալ, գիտնականներն Մկրտիչ Էմին և Քերոզէ Պատկանեան: Բուն ուսանելից ոչ դը չէ պարագել հայերէնով, և Ք. Պատկանեանը իրաւացի գանդատուում էր, թէ «Ռուսաստանում ընթերցող հասարակութիւնը մի առանձին անտարբերութեամբ է նայում այն ամենի վրայ՝ ինչ վերաբերում է հայոց լեզուին, պատմութեան և գրականութեան... Նոյն-իսկ գիտութեան մարդիկն ու մասնագէտները, որոնցից կարելի էր սպասել աւելի մեծ հետաքրքրութիւն՝ այնպիսի անտարբերութեամբ են նայում այս տեսակ հետազոտութիւնների վրայ, որ ուս հայադէտը կամքի մեծ ոյժ, աշխատանքի մեծ սէր պէտք է ունենայ՝ որպէս զի այսպիսի աշխատութիւններից չը ստաչի»: (Библиографический очерк армянской исторической литературы, Կր. 15—16): Այս խօսքերը, որ ասուած են սրանից 22 տարի առաջ՝ դժբախտաբար ճիշտ են և այսօրուայ համար:—Մ. Էմինը, բացի Շարականից և ուրիշ կրօնական բովանդակութեան գրուածքներից՝ ուսուրէն թարգմանեց երեք հայ պատմագիր (Սորենացի, Ասողիկ, Վարդան Բարձրբերդցի), իսկ Ք. Պատկանեանը՝ հինգ (Սեբէոս, Դևոնդ, Մ. Կաղանկատուացի, Մազաքիա, Մխիթար Այրիվանեցի):

Բոլոր այս թարգմանութիւնները միասին վերցրած՝ կը տեսնենք, որ 19-րդ դարում եւրոպական լեզուներով թարգմանուել են մեր հին և նոր կարեւոր պատմագիրները և շատերը աննշաններից, նոյնպէս և բարձրագիւ ուրիշ գրուածքներ կրօնական-եկեղեցական բովանդակութեամբ: Ի հարկէ, այս թարգմանութիւններն էլ, նայելով թարգմանիչների հմտութեան, աւելի կամ պակաս չափով գոհացուցիչ են, և որչափ մեզ յայտնի է՝ չը կայ նրանցից մէկը, որ կատարեալ լինի. բայց մի առաւելութիւն նրանք անպայման ունին—նրանք ընդհանրապէս լուսարանուած են առաջարաններով ու ծանօթութիւններով, որոնք պարունակում են կարեւոր տեղեկութիւններ թէ թարգմանուած հեղինակի ու նրա գործի մասին և թէ ընդհանրապէս հայոց պատմութեան, լեզուի ու գրականութեան մասին: Այս առաւելութիւնից ընդհանրապէս զուրկ են նոյն հեղինակների հայերէն բնագիրների տպագրութիւնները:

Եւրոպական թարգմանութիւնների մասին խօսելիս՝ յիշենք նաև, որ եղել է փորձ մեր հին պատմագիրները թարգմանելու և հայերէն աշխարհաբար լեզուով. այս փորձը կատարուել է բացառապէս Կովկասեան հայերի մէջ: Մինչև հիմա եղած ձեռնարկութիւնները պատահական են եղել և թարգմանուած են, որ-

չափ գիտենք՝ միայն չորս հեղինակ (Յզիշէ, Խորենացի, Փարպեցի, Լաստիվերտցի)։ Ամբողջական թարգմանութեան ընդարձակ ծրագիրն ունէր Հրատարակչական ընկերութիւնը, բայց մնաց անիրագործելի։ Պէտք է յուսալ, որ այս խիստ օգտակար գործն էլ, որ հերթական է դարձել, շուտով գլուխ կը բերուի, և հայ ընթերցողների ստուար մեծամասնութիւնը, որ զբարար լեզուին անծանօթ է, միջոց կ'ունենայ իր կենդանի լեզուով կարգալու մեր նախնեաց մտքի ու սրտի արգասիքը, մեր պատմութիւնը։

Որքան որ հայ մատենագրութեան բնագիրներն ու թարգմանութիւններն սկսեցին լոյս տեսնել՝ այնքան էլ սկսեցին երևան գալ հետազօտութիւններ թէ այդ մատենագրութեան մատակարարած նիւթերի հիման վրայ, և թէ նոյն մատենագրութեան մասին։ Մի առ մի յիշել այս աշխատութիւններից թէկուզ գլխաւորները՝ անկարելի է այս մեր թուղթիկ տեսութեան մէջ. ուստի պէտք է բաւականանանք ամենից կարեւորներով։ Հին և նոր Հայաստանի աշխարհագրութեան մասին տպագրուեցին լուրջ երկասիրութիւններ, Ինճիճեանի, Սէն-Մարտէնի, Պատկանեանի... աշխատութեամբ։ Այս մասում գլուխ գործոց կազմում են ծերունի Դ. Ալիշանի Սիսուան, Այրարատ և Սիսական փառահեղ ընդարձակ հատորները, որոնք նուիրուած են այս նոյն անունները կրող նահանգների համագրութեան, չը խօսելով նոյն հեղինակի միւս լուրջ աշխարհագրական երկերի մասին, ինչպէս են Շիրակը և նոր Հայաստանի աշխարհագրութիւնը։ Մեր հին հեղինակների տուած նիւթերից նոյն Դ. Ինճիճեանը հիւսեց իր Հնախօսութիւն հին Հայաստանի եռահատոր ընդարձակ գործը, որ պարունակում է, բացի աշխարհագրութիւնից՝ նաև ամփոփ տեսութիւններ հին Հայոց կառավարութեան, լեզուի, կրօնի, մատենագրութեան, զինուորականութեան, բարքերի և այլն մասին և մինչև այսօր էլ (տպուած է 1835 թուին) ծառայում է իբրև տեղեկատու գիրք այս խնդիրներով զբաղուողներին։ Հայոց հին հեթանոսական կրօնի ուսումնասիրութեանը մենագրութիւններ նուիրեցին Ալիշան, Բ. Սարգսեան, Գր. Խալաթեանց, Կարրիէր և այլն, աշխատելով հայ պանթէօնի աստուածութիւններն ու նրանց պաշտամունքը համեմատել չրջակայ ազգերի պանթէօնի հետ։ Հին Հայոց անգիր բանաստեղծութիւնը (Գողթան երգերը) շատ շնորհալի հետազօտողներ ունեցաւ, ինչպէս են Մ. Էմին, Գաթըրճեան, Դիւլօրիէ, Ֆէտտէր, Խալաթեանց, Արեղեան։ Հայոց հին պատմութեան զանազան չրջաններն ու հարցերն ուսումնասիրեցին Սէն-Մարտէն, Գաթըրճեան, Ալիշան, Պատկանեան, Էմին, Գէլցէր, Իսկ Գարագաշեան գրեց քառահատոր «Քննական պատմութիւն հայոց», որ հասնում է

մինչև հինգերորդ դարի վերջը:—Մատենագրական հարցերի ուսումնասիրութիւնը, որի համար հարկաւոր է նախընթաց բազմակողմանի պատրաստութիւն՝ աւելի նոր ժամանակի արդիւնք է, թէև դեռ քսանական թուականներին էլ հանդէս եկաւ տաղանդաւոր քննադատ Սէն-Մարտէնը, որ իրաւամբ կարող է կոչուել ժամանակակից հայագիտութեան հիմնադիրը: Յիշելու համար մեր հին գրականութեան այս ճիւղը մշակողներին՝ պէտք կը լինէր թուել բոլոր հայագէտների անունները յիմնական թուականներից այս կողմը, որովհետև բոլորն զբաղուել են մատենագրական քննութիւններով: Այսքան ասել հարկաւոր է, որ այս մասում առաջին տեղը բռնում են եւրոպացի գիտնականները, որոնց շաւղով գնացել են հայ բանասէրները, այն-ինչ հին մատենագիրների հիման վրայ ուսումնասիրութիւններ մեծ մասամբ կատարել են հայ գիտնականներ, առաւելապէս Վենետիկի Մխիթարեանները: Մատենագրական ուսումնասիրութիւններին բաւական նպաստեցին և ամսագիրները—«Բազմավէպ», «Հանդէս ամսօրեայ» և «Արարատ»: «Հանդէս ամսօրեան» յատկապէս հայագիտութեան է նուիրուած. նա զետեղում է ոչ միայն Վիեննայի Մխիթարեանների (գլխաւորապէս Յ. վ. Տաշեանի), այլ և կողմնակի բանասէրների ինքնուրոյն աշխատութիւնները, և միևնոյն ժամանակ տպագրում է ամբողջական թարգմանութիւններ, կամ քաղուածներ ու զեկուցումներ եւրոպական լեզուներով լոյս տեսած աշխատութիւններից՝ հայագիտութեան վերաբերեալ: Այս կերպով նա դարձել է մի կենտրոնական օրգան հայագիտութեամբ զբաղուողների համար: Սակայն վերջին երկու տարիներս չէ նկատոււմ նրա մէջ նախկին կենդանութիւնն ու թարմութիւնը, որովհետև մշտական աշխատակից միաբաններից միերկուսը հեռացան Վիեննայից՝ Կ. Պօլսում մանկավարժական գործունէութեամբ զբաղուելու համար: «Արարատն» էլ վերջին տասն տարիներս բանասիրական լուրջ թերթ դառնալու ասպացոյցներ տալիս է շարունակ: Վերջապէս երկու տարի առաջ Պարիզում հիմնուեց մասնագիտական-բանասիրական մի հանդէս էլ, «Բանասէր» անունով, որ առայժմ հրատարակոււմ է կրեք ամիսը մի անգամ և պարունակում է խնամքով գրուած ուսումնասիրութիւններ և յօդուածներ բնեռագրական, լեզուագիտական, մատենագրական և հնախօսական բովանդակութեամբ:

Մատենագրական ուսումնասիրութիւնների շարքում չէ կարելի մոռանալ մեր հին գրականութեան պատմութիւնը, որ պէտք է բովանդակէ զանազան գիտնականների հետազօտութիւնների արդիւնքը՝ որոշ սիստեմի վերածուած և որոշ հայեցակէտով առաջնորդուած. նա պէտք է լինի հայելի, որի մէջ կա-

րելի լինի տեսնել մեր անցեալ դարերի մտաւոր գործունէութեան պատկերը: Այս զաւառում աշխատողների մէջ ամենից աւելի աչքի է ընկնում նորերս վախճանուած Վենետիկ Մխիթարեան միարան Գար. վ. Զարրհանալեանը, որի կազմած երկհատոր «Հայերէն դպրութեանց պատմութիւնը» մինչև այժմ միակ դասադիրքն է մեր հին մատենագրութեան համար: Այս աշխատութիւնը, որի առաջին հատորը (մինչև ԺԳ. դարը) երեք տպագրութեան արժանացաւ՝ աւելի պահպանում է հին աւանդական հայեացքները և տեղ չէ տալիս նորագոյն ժամանակների եզրակացութիւններին մեր մատենագրութեան զանազան հարցերի մասին, բայց և այնպէս իր պարունակած բազմաթիւ տեղեկութիւններով անփոխարինելի մի ձեռնարկ է մեր հին գրականութեամբ զբաղուողների համար: Ժամանակի պահանջ է՝ ունենալ մի նոր պատմութիւն հայոց գրականութեան՝ նոր ուղղութեամբ ու հայեացքներով կազմուած:

Հայագիտութեան նպաստող առարկաների շարքում պէտք է մասամբ դասել և սեպագիր արձանագրութիւնները, որոնց գիւտը և ընթերցումը դարձեալ 19-րդ դարի արդիւնքն են կազմում: Սեպագիր կոչւում են այն տեսակ տառերը, որոնք սեպի (ВЛИНЪ, չիվի) ձև ունին, վերեր հաստ, ներքեր բարակ, այսպիսի սեպեր մէկը միւսի կողքին կամ վրայ որոշ կերպով տեղաորուելով կամ կապակցուելով նշանակում են հնչիւններ, վանկեր ու նշանագիրներ: Այսպիսի սեպագիր տառերով քարերի կամ աղււմների վրայ արձանագրութիւններ են թողել Ասորեստանի, Պարսկաստանի և Նախնի Հայաստանի տիրողները: Ամենից հին են ասուրականները, որոնք սկսում են Քրիստոսից մօտ 1500 տարի առաջ. այնուհետև գալիս են հայկական արձանագրութիւնները, որոնք սկսում են 9-րդ դարում Ք. ա., վերջապէս պարսկականները, որոնք սկսում են 6-րդ դարում Ք. ա.: Ամենից հեշտ ընթերցանելի դուրս եկան պարսկական արձանագրութիւնները, որովհետև նրանց սեպաձև նշանները այբուբենի տառեր էին նշանակում, ձայնաւորներով ու բաղաձայններով. մէկ էլ որ նրանց լեզուն, հին պարսկերէնը, հասկացւում էր շնորհիւ այն հանգամանքի, որ շատ նման է մի կողմից սանսկրիտ և միւս կողմից միջին պարսկերէն լեզուներին: Աւելի դժուար էր ասուրական արձանագրութիւնների ընթերցումը, որովհետև այստեղ սեպախմբերը ոչ թէ տառեր էին նշանակում, այլ վանկեր և միևնոյն ժամանակ նշանագիրներ. լեզուն էլ, որով գրուած են նրանք, սեմական ծագում ունի և այնքան մատչելի չէ: Ամենից դժուար էր հայկական արձանագրութիւնների ընթերցումը, որոնց սեպախմբերի մեծ մասն ան-


ծանօթ վանկեր ու նշանագիրներ է ներկայացնում, իսկ նրանց լեզուն էլ միայնգամայն անծանօթ է: Թէ ինչ հսկայական ճիգեր թափեցին շատ գիտնական մարդիկ, անծանօթ գրերով և անծանօթ լեզուով այդ տարօրինակ արձանագրութիւնները կարգալու և հասկանալու համար—այդ մասին գրել մեր նիւթից դուրս է. մարդկային մտքի հնարագիտութեան, տոկուն աշխատասիրութեան անջնջելի յիշատակ է այս արձանագրութիւնների ընթերցումը: Բազմաթիւ աշխատութիւնների մէջ յիշեմք Բօտտի, Լայրաւի և Շուլցի անունները, որոնք մեծ դժուարութիւնների յաղթելով այս արձանագրութիւնները հազարաւոր տարիների փլատակների տակից հանեցին, կամ ժայռերի վրայից ընդօրինակեցին. սրանցից վերջինը, Շուլցը, որ 1828 թուին Հայաստան ճանապարհորդեց Վանի արձանագրութիւնները առաջին անգամ ընդօրինակելու՝ դիտութեան նահատակ դարձաւ, քուրդերից սպանուելով: Իսկ Վեստերդարտ, Բաուլիստըն, Բէնֆէյ, Օպպէրտ, Շպիդէլ, Մէնան, Լասսէն, Լընօրման, Սէյս, Բէլկ, Նիկոլսկի և ուրիշները մեծամեծ ջանքեր գործ դնելով յաջողեցան, քառասնական թուականներից այս կողմը, հետզհետէ կարգալ ու բացատրել նախ՝ պարսկական (Բիսութունի) արձանագրութիւնները, ապա ասուրականը, որ ահագին քանակութեամբ հանուեց Նինուէի և Բարկոնի փլատակներից և փոխադրուեց գըլխաւորապէս Լօնդօնի Բրիտանական թանգարանը, և վերջապէս հայկականը, որ փորագրուած է Վանի բերդի ժայռի վրայ և, բացի դրանից, ցրուած է Տաճկա-և Ռուսա-Հայաստանի զանազան տեղերում: Պարսկական արձանագրութիւնները վերջնականապէս կարգացուած և ուսումնասիրուած են արդէն. ասուրականները կարգալու դժուարութիւնը յաղթուած է և հետզհետէ կարգի են բերում ու կարգացում են հազարաւոր աղիւնների վրայ գրուածներն և ուսումնասիրում: Հայկական արձանագրութիւնների ընթերցման բանալին էլ գտնուել է և հետզհետէ հարթոււմ են դժուարութիւնները: Այս երեք տեսակի արձանագրութիւններն էլ մեծ կարևորութիւն ունեն մեր հնագոյն պատմութեան համար, որովհետև, ինչպէս երևում է ասուրական ու պարսկական արձանագրութիւններից, այդ աշխարհների տիրապետողները դարերի ընթացքում անընդհատ պատերազմական յարաբերութիւններ են ունեցել հին Հայաստանի հետ. իսկ հայկական արձանագրութիւնները պատկերացնում են այս երկրի իշխողների քաղաքական ու քաղաքակրթական ձեռնարկութիւնները: Այնպէս որ ներկայ քսաներորդ դարին է մնում, այս բոլոր արձանագրութիւնների ուսումնասիրութեան միջոցով, ստեղծել Առաջաւոր Ասիայի, որի մէջ և

նախնական Հայաստանի պատմութիւնը, ստեղծել ենք ասում, որովհետև այս հնագոյն ժամանակի մասին ուրիշ գրաւոր աղբիւրներ չեն հասել մեզ, կամ շատ կցկտուր են: Արդէն մինչև այժմ կատարուած ուսումնասիրութիւնները, որչափ և անկատար լինին, այնու ամենայնիւ այնպիսի լոյս են սփռում Հայաստանի պատմութեան նախահայկական շրջանի վրայ, որի մասին գաղափար անգամ չունէին մեր հայրերը:

Մինչև այժմ ասածներս ամփոփելով՝ տեսնում ենք, որ անցած տասնեկիններորդ դարը շատ արգիւնաւոր է եղել հայագիտութեան պատմական-մատենագրական ճիւղի համար. բոլոր նախընթաց դարերը միասին առած՝ չեն տուել այս մասում այն՝ ինչ որ տուել է 19-րդ դարը, որ իրաւամբ կարող է կոչուել հայագիտութեան ծնունդի դար: Այս դարում զլսաւորապէս տպագրուեցին մեր հին մատենագիրները, թարգմանուեցին ու հետազոտուեցին: Հաւաքուեցին ու հրատարակուեցին բազմաթիւ արձանագրութիւններ, սեպագիր և տառագիր, ազգային անգիր մատենագրութեան ստեղծագործութիւններ ու հնութիւններ: Այս նպատակով կատարուեցին բազմաթիւ գիտական ճանապարհորդութիւններ, հայ և օտար ազգի անձերի կողմից: Հաւաքուած առատ նիւթը ենթարկուեց կարող գիտնականների ուսումնասիրութեան ու քննադատութեան, և ստացուած եզրակացութիւնները գրեթէ յեղափոխեցին մեր հայեացքները, որ ունէինք մեր գրականութեան, կրօնի, բարքերի և ընդհանրապէս պատմութեան մասին: Քննադատական աշխատանքի և ուսումնասիրութիւնների մէջ առաջաւոր մշակներն եղան եւրոպացի գիտնականները. նրանց ընթացքին հետեւեցին և հայ գիտնականները, որոնք հայագիտութեան բոլոր ճիւղերում էլ ունեցան և ունին պատուաւոր ներկայացուցիչներ: Այսօրն յաջողութեամբ սկսուած ու առաջ տարուած գործը յոյս է տալիս, որ քսանեւորդ դարը, այնքան նախապատրաստական նիւթերի ու կատարուած աշխատութիւնների վրայ յենուած, հայագիտութեան համար էլ շատ աւելի արգիւնաւոր կը լինի քան իւր նախորդը. ոչ միայն կը լրացնէ այն պակասորդները, որ մենք զգում ենք այժմ, այլ և նորանոր հորիզոններ կը բանայ, նորանոր գաւառներ կը նուաճէ՝ որոնց մասին ներկայումս հասկացողութիւն էլ չունենք:

Մի ուրիշ անգամ մենք կը դառնանք հայագիտութեան երկրորդ մեծ ճիւղի, այսինքն լեզուագիտական հետազոտութիւնների մասին խօսելու, և կ'աշխատենք ամփոփել այն արգիւնքները, որոնց հասաւ 19-րդ դարը այս գաւառում:

ՍՏ. ՄԱԼՍԱՍԵԱՆՑ



400

31-00

